ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) **Թիվ-10** (1680) Հոկտեմբեր 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ճակատագրական ճամփաբաժանը (էջ 1-3)

2- Քաղաքական

Անի Մելքոնյան
Հայ ժողովրդի պատմության վերջին էջի շրջո՞ւմ, թե՞ խավար արևաածագից առաջ (էջ 4-6)

3- Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան
Արցախում տեղի ունեցածը ցեղասպանություն է (էջ 7-10)

4- Տարածաշրջանային

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ ակտիվ ներգրավվածությունը Հարավային Կովկասում (էջ 11-13)

5- Աշխարհաքաղաքական

Լուսինե Մխիթարյան
Կենտրոնական Ասիան աշխարհաքաղաքական զարգացումների տիրույթում. Թյուրքական աշխարհի միավորման խոչընդոտները (էջ 14-17)

6- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
ՆԱՏՕ-ՌԴ հակամարտությունը ՆԱՏՕ-ի ռազմավարական փաստաթղթերում (էջ 18-21)

7 - Հասարակություն

Սեդա Գալստյան
Հավերժի ճամփորդներ. կիսատ երազանքներ (էջ 22-27)

8- Հայ կյանք

Մովսէս Հերկելեան
...Զարթի՛ր, լաւ (էջ 28-32)

9- Դեմքեր և դեպքեր

Աւօ Գաթրճեան
Հայ «Նեմեսիս»-ը, հետախոյզ առասպելն ու ազգային-պետական գործիչը - Հրաչ Փափազեան (մաս 3)(էջ 33-40)

8- Ընթերցումներ

Վրէժ-Արմէն
Զգոյշ ակնարկ մը Գիրքը տպաւորիչ է առաջին հայեացքով (էջ 41-44)

Ճակատագրական ճամփաբաժանը

Նախ արձանագրենք փաստեր, որոնց մասին բարձրաձայնել են ազգային ուժերը՝ մերժելով իշխանությունների կեղծ տեսակետները, և որոնք այսօր արդեն կատարված իրողություններ են:

-Արցախի նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ռազմական վերջին ագրեսիան շրջափակումից հետո արցախահայության դեմ ուղղված ցեղասպանական եզրափակիչ գործողությունն էր:

-Ադրբեջանական պատերազմական նոր վայրագությունների պայմաններում ողջ արցախահայությունը հեռացավ բնօրրանից, որովհետև ի տարբերություն Նիկոլ Փաշինյանի և նրա արտաքին հովանավորների կեղծ հավաստիացումների, Արցախի հայությունը համոզված էր, որ դարավոր ջարդարարի իշխանության ներքո չի կարող ունենալ խաղաղ, անվտանգ կյանք:

-Ադրբեջանին ուղղված Արևմուտքի բոլոր հորդորներն ու դատապարտումները, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և միջազգային այլ ատյանների քննարկումներն ու որոշումները ձևական բնույթ էին կրում, քանի որ չէին ամրագրվում կոնկրետ գործողություններով, ինչն էլ զսպելու փոխարեն՝ ավելի էր խրախուսում Ադրբեջանին խտրություն չդնելու հայության դեմ նոր ցեղասպանություն իրականացնելու միջոցների մեջ: Ավելին, նույն Արևմուտքը երկիմաստորեն «զգուշացնում էր» արցախահայությանը, որ Ադրբեջանի գերիշխանությունը չընդունելու դեպքում չեն կարող երաշխավորել ադրբեջանական ջարդերից: Այն, որ Արևմուտքի բոլոր ցավակցությունները, հորդորներն ու դատապարտումները սեփական երեսը գթասրտությամբ շպարելու համար էին, փաստում է և այն իրողությունը, որ Արցախի հարցը, ըստ իրեն, լուծելուց հետո Ադրբեջանի ղեկավարը, բացարձակորեն անտեսելով Արևմուտքի վերաբերմունքը նոր պատերազմով է սպառնում Հայաստանին՝ պահանջելով անկլավային բնակավայրերը: Իսկ Արևմուտքն էլ իր մխիթարության խոսքերով ու օգնության փշրանքներով հայտնվեց այստեղ ճիշտ Արցախի հայաթափվելու հաջորդ օրը: Ինչ վերաբերում է նրա դիտորդներին ապա անցնող ամիսների ընթացքում նրանց ներկայությունը բացարձակորեն ոչինչ չնշանակեց:

-Այս ամենը ապացուցում են նաև, որ պատմության ճակատագրական պահին քաղաքական վեկտորի շրջադարձը, ժողովրդավարության բառի շահարկումներով ազդանշան ուղարկելը, թե՝ ես ձերն եմ ու ամբողջովին Արևմուտքին ապավինելը, Նիկոլի անձի համար կարող են ինչ որ բան նշանակել Հայաստանին, սակայն պաշտպանվածության ոչ մի երաշխիք չեն տալու:

-Ավելացնենք, որ Ադրբեջանի իշխանությունների համար 44-օրյա պատերազմից ցայսօր ոչ պակաս կարևոր թիկունք է Հայաստանի ղեկավարը, որը ձևական մի քանի հայտարարությունների քողի ներքո ծածկադմփոց է անում ադրբեջանական (չմոռանանք նաև թուրքական) վայրագությունների փաստերը, չի կազմում համապատասխան թղթածրարներ և չի հետապնդում հանցագործությունների ամրագրման, հանցագործներին պատասխանատվության ենթարկելու խնդիրները՝ ինչը նաև հետագա վայրագությունները սանձելու որոշակի երաշխիք է: Ավելին, Արցախը ճանաչելով Ադրբեջանի մաս, 2023 թ. սեպտեմբերի 19-20-ի պատերազմի պահին հայտարարելով, թե Հայաստանը չի միջամտելու, իսկ հետո գնահատելով, թե Արցախի հայությանը վտանգ չի սպառնում՝ նա նախ հավաստեց, որ Հայաստանը, հրաժարվելով իրավականորեն ամրագրված պարտավորություններից միայնակ է թողնելու Արցախին, այնուհետև արդարացրեց տեղի ունեցած պատերազմական հանցագործությունները և ի վերջո, այս ամենով փաստեց, որ ինքը արցախահայության ցեղասպանության հանցակիցներից մեկն է:

- Ցավոք, ճիշտ էր հայության սթափ, հայրենասեր հատվածը, որը ոչ միայն անցնող հինգ տարիներին, այլև արցախյան պայքարի սկզբնավորման շրջանից զգուշացնում, աղաղակում էր, որ Արցախը Հայաստանի թիկունքն է, Արցախի անկումից հետո գալու է Զանգեզուրի հերթը: Իրապես, Արցախը հայաթափելուց անմիջապես հետո մեծացավ ճնշումը անկլավների, ինչպես և Զանգեզուրի միջանցքի հարցով: Ոչ մի կասկած չկա, որ Թուրքիան այս հարցում ոչմիայն հրահրող թիկունք է Ադրբեջանի համար, այլև առավել շահագրգռված լինելով՝ ավելի մեծ ճնշում է գործա-

դրում Հայաստանի անողնաշար ղեկավարության վրա:

-Որքան էլ դժվար է հաշտվել այս եզրակացության հետ, ստիպված ենք, սակայն, արձանագրել, որ գրեթե կասկած չի հարուցում Զանգեզուրի միջանցքը հանձնելու հարցում ընդհանուր փոխհամաձայնության գոյությունը բոլոր շահագրգիռ կողմերի միջև՝ սկսած Ադրբեջանից ու Թուրքիայից, մինչև Արևմուտք ու Ռուսաստան: Անշուշտ, սրանցից յուրաքանչյուրը տվյալ հարցում հետապնդում է իր շահը, սակայն երբ Հայաստանի ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնում հանձնելու երկիրը և մի հարց ունի միայն. իրեն նախապես չեն ասում, թե ինչքան տարածք են ուզում, յուրաքանչյուրը փորձում է գործընթացի մեջ լինել հաղթող կողմը կամ, տեղի ունեցող զարգացումներից ստանալ իր փայաբաժինը: Այսօր արդեն ակնհայտ է, որ, ինչպես գրում են իրանցի քաղաքագետները, ադրբեջանաթուրքական տանդեմի երազած պանթուրանական միջանցքը միաժամանակ նատոյական միջանցք է, որով Արևմուտքը պետք է հասնի կենտրոնական Ասիա, Ռուսաստանից կտրի ու հակառուսական պլացդարմի վերածի Ադրբեջանն ու կենտրոնասիական հանրապետությունները՝ միաժամանակ նվազեցնի Չինաստանի ազդեցությունը խարիսխ նետելով նրա սահմանների մոտ:

Ռուսաստանը, որն իր ավանդական քաղաքականությանը հավատարիմ շարունակում է թուրքական տարրի հետ Արևմուտքի դեմ ճակատ կազմելու փորձերը, միաժամանակ Զանգեզուրի միջանցքը տեսնում է որպես իր տնտեսական զարկերակը վերակենդանացնելու այլընտրանքային ճանապարհահատված:

Այս բացահայտված ծրագրերը ակնառու են դարձնում արցախյան փակ դուռը բացելու արտաքին ուժերի վերջնական նպատակը: Ընդ որում, ելնելով աշխարհում և տարածաշրջանում աճող լարվածությունից, շահագրգիռ ուժերը շտապում են խնդիրների ցանկալի լուծմանը հասնել օր առաջ, քանի դեռ չեն ձևավորվել նոր իրողությունները և հակառակը՝ այդ իրողությունները ձևավորել ըստ սեփական շահերի: Իսկ եղած պատկերից նորը ստանալու համար Արևմուտքը ձգտում է նաև անկայունացնել կովկասյան տարածաշրջանը՝ երկրորդ ճակատ բացելով Ռուսաստանի դեմ: Աշխարհաքաղաքական այս մեծ խաղի մեջ ենթակայից առարկայի վերածված Հայաստանը, ունենալով հանգուցային դիրք, երկրի բախտախնդիր իշխանությունների քաղաքականության պատճառով հայտնվել է այդ խաղի կենտրոնում՝ որպես ռազմադաշտ, որին, օտար վերլուծաբանների իսկ բնորոշմամբ, սպառնում է վերածվելը մշտապես բռնկվող նոր Բալկանների: Տարածաշրջանով շահագրգիռ բոլոր տերությունները մեր շուրջն իրականացնում են ակտիվ ու ագրեսիվ արտաքին քաղաքականություն: Իրավիճակը հիշեցնում է մեծ պատերազմի նախօրյակ և այս բոլորի կողքին միակը, որի քաղաքականությունն աջ ու ձախ զիջումներով գերուժերի նվիրած խաղաղությանը հասնելն է, բզկտվող Հայաստանն է՝ իր դավաճան իշխանություններով: Թե այս իշխանության վզի շղթաները դեպի ուր են ձգվում, հայտնի է եղել իշխանության գալու առաջին օրերից, եթե չասենք՝ դրանից առաջ: Այժմ նրանք կանգնած են հանձնելու գործընթացի հաջորդ փուլի առջև, և իրենց գերխնդիրն այն է, որ հերթական հանձնումը իշխանությունը կորցնելու պատճառ չդառնա: Կատարված ու տեղի ունեցող իրադարձությունները ցույց են տալիս, որ Հայաստանի դավադիր իշխանությունն իր հակահայ ծրագրերն իրականացնում է՝ գործողությունները ներդաշնակելով Ադրբեջանի հետ: Անկլավների ու Զանգեզուրի միջանցքի հարցով վերջինիս սպառնալիքները փոխանցվում են Նիկոլ Փաշինյանի թիմին, որն այս ընթացքում երկրում փորձում է ստեղծել մոտալուտ պատերազմից սպառնալիքի մթնոլորտ: Որքան էլ անցանկալի է սրա մասին գրելը, սակայն, ելնելով նախադեպերից, սպասելի է, որ առաջիկայում Ադրբեջանը դիմելու է փոքր ու մեծ սադրանքների՝ հայկական կողմին պատճառելով կորուստներ, որոնք ի վերջո «փրկիչ» ղեկավարին պետք է «ստիպեն» զիջելու ինչ-որ բան՝ մնացածը պահպանելու, կորուստները սահմանափակելու համար: Չկասկածենք, սակայն որ սա ևս վերջը չի լինելու, գտնվելու է հազար ու մեկ պատրվակ թուրքադրբեջանական շարունակական առաջխաղացման համար՝ մինչև Հայաստանի վերջնական կործանում: Մյուս կողմից՝ ճանապարհին եղած արտաքին խոչընդոտներից հիմնականը վերացնելու համար ավելի գործնական ու շոշափելի են դարձել Ռուսաստանի և նրա ռազմական համակարգի հետ կապերը խզելու հայ ղեկավարության քայլերը: ՆԱՏՕ-ին տարածաշրջան բերելու համար Ռուսաստանն արդեն իսկ պատժում է Հայաստանին, սակայն անգամ «Արցախում և սահմանների մոտ» պատերազմը կարող է այնքան սարսափելի չթվալ հայաստանցի քաղքենու համար, որքան տնտեսա-



կան, էներգետիկ այն «միջոցառումները», որոնք Ռուսաստանը կարող է կիրառել մեր երկրի դեմ: Սրանով հանդերձ, երկրից փախուստ տալուց առաջ, Փաշինյանը շտապում է գլխակորույս և առանց հետևանքների մասին մտածելու՝ իրականացնել ստանձնած պարտավորությունները: Այս ազգակործան ծրագրերն իրականացնելու ճանապարհին ներքին խոչընդոտը չեզոքացնելու համար երկրում իրականացվում է տոտալ քարոզչություն: Կեղծիքի ու զրպարտության տարածման համար առանց նյութական միջոցների խնայողության՝ գործի են դրված պետական, պաշտոնական քարոզչամիջոցները և, այսպես կոչված, ֆեյքերի ֆաբրիկան: Այդ քարոզչությունն այսօր ունի մի քանի ուղղություն.

1. արդարացնել Փաշինյանի կատարած բոլոր դավաճանական քայլերն ու ծրագրերը, 2. հարվածել ընդդիմությանը՝ ի դեմս որոշ անհատների ու հատկապես Դաշնակցության, 3. բորբոքել լայնատարած հակառուսական հիստերիա: Առանձին հակաքարոզչության թիրախ է արցախահայությունը, որին Հայաստանի մտասևեռված ղեկավարը տեսնում է որպես նոր խոչընդոտ ու վտանգ իր և իր ծրագրերի ճանապարհին: Արդեն իսկ սկսվել է Հայաստանում արցախահայությանը պառակտելու, ինքնակազմակերպվելու և սեփական իրավունքների համար պայքարելու գործընթացները վիժեցնելու սցենարի գործարկումը: Հայաստանի իշխանությունն իր գործունեությամբ և ծրագրված անգործությամբ առաջիկայում ամեն ինչ անելու է արցախահայությանը Հայաստանից դուրս մղելու համար: Ցավոք, երևույթների խորքը չտեսնելով՝ շատ մարդիկ ակամայից դառնում են տվյալ ազգադավ քարոզչության կրողը և սպասարկուն: Տարվելով օրվա տաք թեմաներով՝ հատկապես համացանցային պղտոր հոսանքի մեջ հայտնված զանգվածը հաճախ չի ընկալում, որ «չգիտես՝ որտեղից հայտնված» տեղեկատվական փորձաքարը իրեն ևս բերում է մի գզվռտոցի դաշտ, որը բխում է իշխանության ծրագրերից, և որի թիրախը ազգային-պետական շահերն են: Հմտորեն մանիպուլացնելով հատկապես համացանցային դաշտը իր ֆեյքերի նոսրացած շարքերի միջոցով՝ իշխանությունը տպավորություն է ստեղծում, թե երկրում կա տեսակետների, ինչպես և քաղաքական ուժերի նկատմամբ համակրանք-հակակրանքի մեծ բաժանում և փորձում է դա «ծախել» հանրության վրա որպես իր նատմամբ դեռևս գոյություն ունեցող հզոր աջակցության արտահայտություն: Ինչպես ցույց տվեցին Երևանի ավագանու ընտրությունները, անգամ ողջ իշխանական լծակներն ու պետական համակարգին ենթակա մարդկային ռեսուրսը մոբիլիզացնելու դեպքում նրան հաջողվում է ապահովել նվազագույն ձայներ: Ակնհայտ է, որ ժողովուրդը ատում է Փաշինյանին և նույնքան ակնհայտ է, որ ժողովուրդը չի վստահում ընդդիմությանը, իսկ ավելի ստույգ՝ չի հավատում, որ այսօրվա ընդդիմությունն ունակ է որդեգրած օրինական ճանապարհով իշխանափոխություն իրականացնել: Ժողովուրդը թերևս չի ընկալում, որ ինքն, ըստ էության, նույն ընդդիմադիր ճամբարում է, և եթե ցայսօր իշխանափոխություն տեղի չի ունեցել, պատճառը մի կողմից՝ բռնապետական անօրեն ռեժիմի դեմ օրինական ճանապարհով հաղթանակի հասնելու անհնարինությունն է, մյուս կողմից՝ թերագնահատումը իր դեմ ելած պետական ողջ համակարգի, ուժային կառույցների, քարոզչական հզոր մեքենայի և այն արտաքին ուժերի, որոնց համար այսօրվա դրածո իշխանության գոյատևումը Արցախի ու Հայաստանի հետ կապված իրենց բոլոր ծրագրերի իրականացման միակ երաշխիքն է:

Ժողովրդի մի զգալի հատվածի ներկա թմբիրը, զոմբիացված վիճակը, հանրության ակտիվ հատվածի գնալը սխալ թիրախների ետևից նույնպես հիմնական գործոն են, որոնք երկարաձգում են իրեն սպառած իշխանության գոյությունը: Որքան էլ դժվար է սրա մասին անընդհատ բարձրաձայնելը, սակայն ակնհայտ է, որ ազգովի գտնվում ենք մեծ ճամփաբաժանի առջև՝ կամ մենք կփրկենք երկիրը, կամ կառավարող խունտան պետությանն ու մեզ կտանի վերջնական կործանման: ■

Հայ ժողովրդի պատմության վերջին էջի շրջում, թե՞ խավար արևածագից առաջ

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Եթե մենք կորցնենք Արցախը, կշրջենք հայոց պատմության վերջին էջը»:

- Մոնթե Մելքոնյան

Սեպտեմբերի 19-ին հայկական աշխարհը հերթական անգամ ալեկոծվեց Արցախից ստացված լուրերից. «Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում է սկսել Արցախի Հանրապետության նկատմամբ, օգտագործում է հրետանային միջոցներ և անօդաչու թռչող սարքեր»[1]:

Հայաստանի անկախության մերան, ընդամենը 120.000 բնակչություն և մոտ 2500 կովող ուժ ունեցող փոքրիկ Արցախը գոյության կռիվ էր մղում՝ 10 մլն բնակչություն և 60.000 զորք ունեցող Ադրբեջանի դեմ՝ նույնիսկ քաղաքական և ռազմական օգնություն չստանալով Հայաստանի Հանրապետությունից:

Երեք տասնամյակի կայացած պետություն Արցախը կանգնեց իր բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու խնդրի առաջ, իսկ 1991 թ. Արցախի անվտանգության երաշխավոր համարվող Հայաստանի վարչապետն այս համապատկերի վրա հայտարարեց. «Այս գործընթացի նպատակներից մեկը Հայաստանին ռազմական գործողությունների մեջ ներքաշելն է, սա նպատակ ունի Հայաստանում քաոս ստեղծել»[2]: Ասել է, թե Հայաստանում քաոս ստեղծած իշխանությունը մտադիր չէր օգնել Արցախին, այսինքն՝ իր 120.000 քաղաքացիների հետ վարվեց պիղատոսաբար. ձեռքերը լվաց նրանց ճակատագրի նկատմամբ պատասխանատվությունից:

Սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի աթոռը զբաղեցնողը հերթական մեծ ծառայությունը մատուցեց Ադրբեջանին՝ հայտարարելով. «Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչությանն ուղիղ սպառնալիք չկա»[3]: Օրեր անց Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությունը ՄԱԿ-ում օգտագործեց Ադրբեջանի արտգործնախարար Բայրամովը՝ ի պաշտպանություն իր երկրի շահերի: Արցախում իրականացվող «էթնիկ զտումների», իսկ իրականում ցեղասպանության վերաբերյալ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հայտարարությանը Ջեյհուն Բայրամովը հակադարձելով՝ մեջբերեց հենց Նիկոլ Փաշինյանին»[4]: Այսինքն՝ պարզից էլ պարզ է, որ ՄԱԿ-ի սպասվող նիստից առաջ Նիկոլ Փաշինյանը պաշտպանվելու համար խաղաթուղթ տվեց Ադրբեջանին՝ այդպիսով ցույց տալով, որ Արցախի ցեղասպանության գործում ինքը համերաշխ է Ադրբեջանի հետ:

Սեպտեմբերի 23-ին Արցախի տեղեկատվական շտաբը հայտարարություն տարածեց.

«Ռազմական գործողությունների դադարեցման մասին ռուսական կողմի միջնորդությամբ Ադրբեջանի հետ սեպտեմբերի 20-ին ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ ներկա դրությամբ իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- Պաշտպանության բանակի ստորաբաժանումների դուրսբերում մարտական դիրքերից ու տեղափոխում մշտական տեղակայման վայրեր՝ բանակի կազմալուծման աշխատանքներին զուգահեռ,

- որոնողական աշխատանքներ զոհվածների ու անհետ կորածների հայտնաբերման ուղղությամբ,

- ծանր և ծայրահեղ ծանր վիրավորների ու հիվանդների տեղափոխում Հայաստանի բուժհաստատություններ՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ու ռուս խաղաղապահների ուղեկցությամբ,

- Արցախ հումանիտար բեռների, բժշկական պարագաների, առաջին անհրաժեշտության ապրանքների և վառելիքի ներմուծում Գորիս-Ստեփանակերտ մայրուղով՝ ռուս խաղաղապահ առաքելության միջնորդությամբ,

- սեպտեմբերի 24-ից էլեկտրաէներգիայի մատակարարման վերականգնման աշխատանքների մեկնարկ,

- Արցախի և նրա ժողովրդի ապագայի շուրջ քաղաքական կոնսուլտացիաների կազմակերպում»[5]:

Միայնակ մնացած Արցախը, փաստորեն, ստիպված էր զինաթափվել: Բայց սա դեռ ամենը չէր, զինաթափումը նշանակում էր Արցախի անխուսափելի հայաթափում, որովհետև ամենամիամիտներին անգամ պարզ է, որ արցախցին առանց զենքի ու զինուժի՝ Ադրբեջանի տիրապետության տակ ապրել չէր կարող, նրա կյանքը ամենօրյա կոտորած ու կեղեքում էր լինելու, ինչպես դարեր շարունակ արևմտահայերի կյանքն էր օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ:

Արդեն սեպտեմբերի 24-ին սկսվեց Արցախի բնակչության տեղահանման գործընթացը, և մինչև սեպտեմբերի 30-ը Արցախը ամբողջությամբ հայաթափվեց: Սա հայոց պատմությանը հայտնի միակ դեպքն է, երբ Արցախն ամբողջապես հայաթափվում է: Հարյուրավոր տարիներ հայկական պետության չգոյության պայմաններում Արցախը միշտ եղել էր պետականության պահպանման կղզյակ:

Արցախի հայաթափումը ուղեկցվեց Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության գերևարմամբ:

Սեպտեմբերի 28-ին Արցախի Հանրապետության նորանշանակ նախագահ Սամվել Շահրամանյանը ստիպված եղավ հրամանագիր ստորագրել, ըստ որի՝ «մինչև 2024 թվականի հունվարի 1-ը պետք է լուծարվեն Արցախի բոլոր պետական հիմնարկներն ու կազմակերպությունները, իսկ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը դադարում է գոյություն ունենալ»[6]:

Արցախի Հանրապետության նախագահի այս հրամանագիրը, իհարկե, իրավական առումով «խնդիրներ ունի», քանի որ նախ՝ ստորագրվել է ռազմական սպառնալիքի, այլ կերպ ասած՝ ահաբեկչության իրականացման պայմաններում, երկրորդ՝ Արցախը Խորհրդային Միությունից (ոչ Խորհրդային Ադրբեջանից, որի կազմից դուրս էր եկել 1988 թ.-ի հունիսի 12-ի որոշմամբ, ինչպես արդեն գրել ենք «Դրոշակի» նախորդ համարում) անկախացել էր միջազգային իրավունքի բոլոր նորմերին համապատասխան՝ համաժողովրդական հանրաքվեի միջոցով, հետևաբար Արցախի ժողովուրդը ինքը պետք է որոշեր ինչպե՞ս վարվել Արցախի Հանրապետության հետ:

Այս փաստաթղթից, իհարկե, կարելի է հրաժարվել, եթե Հայաստանում տեղի ունենան լուրջ քաղաքական փոփոխություններ, և իշխանության գան արցախյան հիմնախնդրին տիրապետող, ազգային դիմագիծ ունեցող քաղաքական ուժեր:

Այս իրադարձությունների համապատկերում հարց է առաջանում՝ արդյո՞ք շրջվեց հայոց պատմության վերջին էջը, և արդյո՞ք հայ ժողովուրդը վերջնականապես կորցրեց Արցախը: Առաջին հայացքից թվում է, թե այո՛, Արցախը վերջնակապես կորսված է, Հայաստանի ապագան էլ՝ անորոշ, բայց հատկապես վերջին շաբաթների իրադարձությունները ցույց են տալիս, որ աշխարհաքաղաքական զարգացումները ժամ առ ժամ փոփոխվում են. ձևավորվում են տարատեսակ ռազմաքաղաքական դաշինքներ, և աշխարհի հերթական վերաբաժանումը անխուսափելի է թվում:

Ինչպես տեսանք, վերջին շաբաթներին լարված փուլ մտավ Իսրայել-Պաղեստին հակամարտությունը, որի մանրամասների մեջ չմտնելով՝ նշենք միայն, որ այն կարող է վերաճել կամ առիթ դառնալ խոշոր պատերազմի աշխարհաքաղաքական մի շարք կենտրոնների, այդ թվում՝ Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի մասնակցությամբ: Սա բնականաբար կարող է բերել Հայաստանի ակամա ներքաշվելուն պատե-

րազմի մեջ, որովհետև ակնհայտ է, որ պանթուրքիստական նպատակներ հետապնդող Թուրքիա-Ադրբեջան տանդեմը Հայաստանից հնարավորինս շատ տարածքներ զավթելու հնարավորությունը բաց չի թողնի, իսկ հայկական Արցախը՝ որպես Հայաստանը պաշտպանող վահան, այլևս չկա:

Ի՞նչ անել համաշխարհային սպասվող առճակատման ընթացքում չճզմվելու և պատմության թատերաբեմից դուրս չմղվելու համար:

Առաջին և գլխավոր նախապայմանը բարեկամ Իրանից հակառակորդ և դաշնակից Ռուսաստանից թշնամի կերտող իշխանությունից ազատվելն է, այնուհետև.

1. Բոլոր արցախցիներին տալ փախստականի կարգավիճակ, տրամադրել անհատույց բնակարաններ:

2. Ճանաչել Արցախի Հանրապետությունը 12,5 հազ. քառ կմ տարածքով և Հայաստանի Հանրապետության տարածքում Արցախի գործող կառավարությանը տալ վտարանդի կառավարության կարգավիճակ և ՀՀ կառավարության մասնաշենքերից մեկը կամ երկուսը տրամադրել Արցախի վտարանդի կառավարությանը:

3. Ճանաչել Ադրբեջանին օկուպանտ, որը օկուպացրել է Արցախի Հանրապետության տարածքը ու բարձրաձայնել այդ մասին հնարավոր բոլոր միջազգային հարթակներում:

4. Արցախի վտարանդի կառավարության համար առանձնացնել բյուջե:

5. Պետական քաղաքականության գերխնդիրը պետք է լինի Արցախի ազատագրումը, և դա պետք է ամրագրվի Սահմանադրությամբ:

6. ՀՀ ՊՆ-ն և ԳՇ-ն պետք է ղեկավարեն արցախցիները, կամ արցախի վերահայացման նպատակը որդեգրող այլ հայ զինվորականները և դա պետք է ամրագրվի հատուկ օրենքով:

7. Հայաստանի Հանրապետության ներկա կառավարության և ԱԺ ՔՊ խմբակցության անդամները պետք է կանգնեն դատարանի առաջ:

Այս գործողություններից հետո անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանի պաշտպանունակությունը, վերազինել ու վերակազմավորել հայկական բանակը, վերականգնել հարաբերությունները դաշնակիցների հետ և պատրաստվել դիմակայելու գալիք մարտահրավերներին՝ մշտապես օրակարգում ունենալով Արցախի ազատագրումը և Արցախի Հանրապետության վերականգնումը՝ որպես գերնպատակ, քանզի Արցախը ոչ միայն հայրենիք է, այլև Հայաստանի՝ որպես պետության գոյության մերանը՝ Հայաստանի պաշտպանական վահանը և քաղաքական հաղթաթուղթը, հետևաբար անձամբ մեզ և համոզված ենք՝ նաև հայ ազգի մի ստվար հատվածի համար Արցախը վերջնականապես կորված, Հայաստանի պատմության վերջին էջն էլ փակված չէ, պարզապես խավար է պայծառ արևածագից առաջ, սակայն այդ արևածագին հասնելու համար ազգային ուժերը պարտավոր են գործել արագ, վճռական և արդյունավետ, հակառակը պատմությունը չի ների: ■

Ծանոթագրություններ

1. https://www.facebook.com/ArtsakhInformation/posts/pfbid0qqANwKwPtNbiiCk5Tb8dhuYVEpVgbWyWoMFJ6eps9TArvPjqySbHLRXCDpa74ygcl:
2. https://zarkerak.am/show/71635:
3. https://www.aravot.am/2023/09/21/1370963/:
4. https://www.yerkir.am/public/hy/article/2023/10/03/18916:
5.https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid02nn2GZNrndwpuZRv9xd2taPFUsGzinxF5Kwm9PauKVBoWts1MEUdNAWS5S7Bf981ol&id=100069203860119&mibextid=Nif5oz:
6.https://mediamax.am/am/news/karabakh/52684/:

Օգտագործուած աղբիւրներ

1. https://www.facebook.com/ArtsakhInformation
2. https://zarkerak.am
3. https://www.aravot.am
4. https://www.yerkir.am
5. https://mediamax.am

Արցախում տեղի ունեցածը ցեղասպանություն է

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

Անպատիժ հանցագործությունները ոչ միայն կրկնվելու, այլև շատ հաճախ կրկնօրինակվելու հարկություն ունեն

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված ռազմական ագրեսիան և դրան հաջորդած իրադարձությունները տարաբնույթ մեկնաբանությունների և գնահատականների արժանացան՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային քաղաքական, գիտական, հանրային և մեդիա տիրույթում՝ առաջացնելով իրադարձությունների ճշգրիտ բնութագրման կատարյալ քաոս: Արցախի Հանրապետությունը շուրջ ինն ամիս ապօրինի շրջափակման մեջ պահելուց, մշտապես ռազմատենչ սպառնալիքներ հնչեցնելուց հետո Ադրբեջանի իշխանությունները, բախվելով արցախահայության՝ հայրենի հողում ապրելու և արարելու աննկուն վճռականությանը, որոշեցին իրենց բաղձալի վերջնանպատակին հասնել, այն է՝ տիրանալ Արցախի Հանրապետությանը ռազմական ճանապարհով: Սկսելով չհայտարարված ռազմական գործողություններ՝ Ադրբեջանի զինված ուժերը շուրջ մեկուկես օր կիրառեցին արգելված զինատեսակներ, ռմբակոծեցին բնակավայրեր, թիրախավորեցին քաղաքացիական հաստատություններ ու անձանց, որոշ բնակավայրերում, օգտվելով միայնակ մնացած կանանց, երեխաների և ծերերի անպաշտպան վիճակից, կատարեցին մարդկային բանականության և երևակայության անսահմանության մեջ չտեղավորվող վայրագություններ: Այս ամենը, ի վերջո, ստիպեց Ադրբեջանի ագրեսիայի դեմ միայնակ պայքարող Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական իշխանություններին գնալու բանակցությունների՝ այդ ճանապարհով փորձելով փրկել արցախահայությանը ֆիզիկական լիակատար բնաջնջումից: Մի քանի օր տևած բանակցություններից հետո, պատմության մեջ առաջին անգամ, հայկական Արցախն ամբողջությամբ հայաթափվեց:

Սույն հոդվածի նպատակն է փաստական տվյալների հիման վրա ներկայացնել Արցախի ամբողջական հայաթափման ընթացքում, դրան նախորդող ինն ամիսների շրջափակման ժամանակ և հայաթափված Արցախում այսօր տեղի ունեցող իրադարձություններն ու դրանց իրավական նկարագիրը՝ դրանով իսկ կանխելով տեղի ունեցածի կամայական կամ սիրողական բնութագրումները, որոնք հղի են բազում վտանգներով, այդ թվում նաև՝ տեղի ունեցածի վերաբերյալ իրավական դաշտում վճռական քայլեր ձեռնարկելու, պատշաճ որակավորում տալու և կատարված հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկելու հնարավորությունների վիժեցման առումով:

Արցախահայության դեմ իրագործված և դեռևս շարունակվող հանցագործությունները պետք է դիտարկել և քննել մեկ ամբողջության մեջ, քանզի դրանք Ադրբեջանի իշխանությունների կողմից պետական մակարդակով մշակված, ավելին՝ որպես պետական ռազմավարություն ընդունված, քաղաքականության դրսևորում են: Դրանք ունեն քրեական իրավունքում հստակ սահմանված անուն և բնութագրում: Արցախահայության դեմ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից սկսված և ցայսօր շարունակվող Ադրբեջանի՝ ի դեմս ռազմաքաղաքական ղեկավարության, գործողություններն իրենց բնույթով և էությամբ լիովին համապատասխանում են 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայով սահմանված հատկանիշներին:

Այն, ինչ տեղի ունեցավ Արցախի Հանրապետությունում 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո, տեղական քաղաքական, հանրային և լրատվական դաշտում, երբեմն նաև գիտական միջավայրում, բնութագրվում են որպես էթնիկ զտումներ: Այս առումով միջազգային քաղաքական և լրատվական դաշտում իրավիճակն էլ ավելի աղետալի է, քանզի ադրբեջանական նավթային և խավիարային դիվանագիտության արդյունքում բարձր բարոյական արժեքներ քարոզող, արդարության, հավասարության և ժողովրդավարության մասին բազմահատոր գրականություն հրատարակող և երկարաժամ ելույթներ ունեցող արևմտյան քաղաքական գործիչները, որոշում կայացնողներն ու այդ ամենը լուսաբանող միջազգային ճանաչում ունեցող լրատվական գործակալությունները

ներն ու դրանց ներկայացուցիչները դեռևս խորը տարակուսանքի մեջ են և դժվարանում են հստակ գնահատական տալ տեղի ունեցածին, երբեմն կցկտուր և կիսաբերան հայտարարելով, թե «միգուցե տեղի ունեցածը էթնիկ զտումներ են»: Եղան բացառություն կազմող իրավապաշտպան կազմակերպություններ, անհատ քաղաքական գործիչներ և պետություններ, որոնք տեղի ունեցածը բնութագրում են որպես էթնիկ զտումներ[1]: Սակայն, հարկ է ընդգծել, որ «էթնիկ զտում» բնութագրումը արցախահայության դեմ Ադրբեջանի իրականացրած գործողությունների նկարագրության և որակման պարագայում սխալ է: Այս պնդումը հիմնավորելու համար նախ ներկայացնենք, թե ինչ է նշանակում «էթնիկ զտումներ» եզրույթը, և ինչ իրավական հետևանքներ կարող է առաջացնել այն կատարած պետության կամ պետությունների և դրանց իշխանությունների համար:

«Էթնիկ զտում» եզրույթը, որն ի հայտ է եկել միայն 1990-ական թվականներին՝ բնութագրելու համար նախկին Հարավսլավիայում տեղի ունեցող իրադարձությունները, քրեական իրավունքի համաձայն, չի ճանաչվում որպես ինքնուրույն հանցագործություն: «Էթնիկ զտում» եզրույթը գործածվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և գլխավոր ասամբլեայի բանաձևերում և նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալի վճիռներում և մեղադրական եզրակացություններում, թեև չի եղել քրեական հետապնդում սահմանող կետերից որևէ մեկը:

«Էթնիկ զտումներ» եզրույթը քրեական իրավունքի համաձայն չունի իրավական սահմանում: Միավորված ազգերի կազմակերպության փորձագետների հանձնաժողովը, որը լիազորված էր ուսումնասիրելու նախկին Հարավսլավիայի տարածքում կատարված միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, իր S/25274 միջանկյալ զեկույցում հետևյալ կերպ է բնութագրել «Էթնիկ զտումներ» եզրույթը. «Տարածքը դարձնել էթնիկապես միատարր՝ օգտագործելով ուժ կամ ահաբեկում, հեռացնելով որոշակի խմբերի անդամներին տվյալ տարածքից»: Իսկ արդեն իր վերջնական S/1994/674 զեկույցում նույն հանձնաժողովը էթնիկ զտումները նկարագրեց որպես «... նպատակային քաղաքականություն՝ մշակված մեկ էթնիկ կամ կրոնական խմբի կողմից մեկ այլ էթնիկ կամ կրոնական խմբի խաղաղ բնակչությանը որոշակի աշխարհագրական տարածքներից բռնությամբ և ահաբեկչությամբ հեռացնելու նպատակով»[2]: Փորձագետների հանձնաժողովը հայտարարեց նաև, որ քաղաքացիական բնակչությանը հեռացնելու համար կիրառվող հարկադրանքի պրակտիկան կարող է ներառել սպանություններ, խոշտանգումներ, կամայական ձերբակալություններ և կալանավորումներ, արտադատական մահապատիժներ, բռնաբարություններ և սեռական ոտնձգություններ, քաղաքացիական անձանց ծանր ֆիզիկական վնասվածքներ հասցնելը, քաղաքացիական բնակչության բանտարկություն գետտոյական շրջաններում, քաղաքացիական բնակչության բռնի տեղահանում, կանխամտածված ռազմական հարձակումներ կամ հարձակումների սպառնալիքներ քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական տարածքների վրա, քաղաքացիական անձանց օգտագործումը որպես կենդանի վահան, գույքի ոչնչացում, անձնական ունեցվածքի կողոպուտ, հարձակումներ հիվանդանոցների, բժշկական անձնակազմի վրա և այլն[3]:

Հարկ է նշել, որ վերը նկարագրված հանցագործությունները որքան էլ անմարդկային և դատապարտելի լինեն, եթե չեն որակվում որպես ցեղասպանություն, այլ բնութագրվում են որպես էթնիկ զտմանը նախորդած կամ դրա ընթացքում տեղի ունեցած հանցագործություններ, միջազգային քրեական իրավունքի տեսանկյունից չեն քննվում մեկ գործի շրջանակներում, դրանք հովանավորած պետության կամ դրա իշխանությունների նկատմամբ չի կիրառվում քրեական հետապնդում, չեն կարող լինել դատական գործընթացներ և դատավճիռներ: Այդ հանցագործություններից յուրաքանչյուրը կարող է քննվել որպես առանձին դեպք՝ տուժած կողմի կամ նրա իրավահաջորդի ներկայացրած բողոքի հիման վրա: Այս պարագայում, եթե Ֆիզիկական անձի մեղքը ապացուցվի, ապա պատժի կենթարկվի ոչ թե այն իրագործելու հրաման տված կամ այն իրագործելը խրախուսած պետությունը կամ դրա իշխանությունները, այլ տվյալ հանցագործությունը իրագործած անհատը կամ զինվորականը: Անհրաժեշտ է սակայն ընդգծել, որ ռազմական ագրեսիայի ժամանակ իրագործված նմանօրինակ հանցագործությունների բացահայտումը գրեթե անհնար է, քանզի դրա համար բացակայում են անհրաժեշտ պայմանները՝ դեպքի վայրի անաչառ քննություն, փաստերը հավաքագրելու հնարավորությունները, և, որ, ամենակարևորն է, հանցագործությունը բացահայտելու քաղաքական կամք: Գործողություն, որը կարող է որակվել որպես հանցագործություն, էթնիկ զտման դեպքում որևէ իրավական հետևանք չի առաջացնում:

Թեև վերոբերյալ հանցագործություններն առանձին կամ շատ դեպքերում միաժամանակ իրականացվել են արցախահայության դեմ, սակայն այդ հանցագործություններն առանձին դիտարկելը կամ ընդհանուր անվամբ «էթնիկ զտումներ» կոչելը իրավական տեսանկյունից ոչ միայն սխալ և անընդունելի է, այլև ներառում է ապագային ուղղված լուրջ սպառնալիքներ՝ համամարդկային առումով: Հանցագործության իրական բնույթն ու էությունը դիտավորյալ կամ միամտաբար մեղմացնելը կամ այլ, քրեորեն անպատժելի եզրույթով բնութագրելը կարող է նախադեպ դառնալ ցեղասպանական մտադրություններ ունեցող պետության կամ պետությունների իշխանությունների համար: Ուստիև, արցախահայության դեմ իրագործված հանցագործությունն իր բնույթին ու էությանը համապատասխան ճշգրիտ իրավական անուն և գնահատական տալն անհրաժեշտ է ոչ միայն հայությանը, այլև գիտակից ազգերին և պետություններին, որոնք այսօրեական նյութական շահերը չեն գերադա-

սում մարդկության, այդ թվում նաև՝ իրենց անվտանգ ապագայից: Նախադեպային անպատիժ հանցագործությունները ոչ միայն կրկնվելու, այլև շատ հաճախ կրկնօրինակվելու հատկություն ունեն:

Հիմնավորելու համար մեր այն պնդումը, որ արցախահայության դեմ տեղի ունեցածն անհրաժեշտ է բնութագրել որպես ցեղասպանություն, հարկ է նախ և առաջ ներկայացնել ՄԱԿ-ի 1948 թվականին ընդունած Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի այն հոդվածներն ու կետերը, համաձայն որոնց՝ դեռևս 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ապօրինաբար շրջափակելով Բերձորի միջանցքը՝ արցախահայությանը ենթարկել է ցեղասպանության:

Ստորև ներկայացնում ենք կոնվենցիայի 2-րդ հոդվածի բ և գ կետերը, համաձայն որոնց՝ Ադրբեջան պետությունը և դրա այսօրվա ռազմաքաղաքական ղեկավարությունը Արցախի Հանրապետության ազգաբնակչության դեմ իրագործել է ցեղասպանություն.

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2

Սույն կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,

գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը[4]:

Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին ՄԱԿ-ի ընդունած կոնվենցիայի վերոբերյալ կետերը փաստում են, որ ադրբեջանական իշխանությունները, արգելելով մարդկանց ազատ ելումուտը Արցախի Հանրապետություն, այդ թվում նաև՝ պարբերաբար խոչընդոտելով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից անհապաղ բժշկական օգնություն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության բուժհաստատություններ տեղափոխվելու կարիք ունեցող բուժառուների տեղաշարժը, զրկելով սննդի, դեղորայքի, նորմալ կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ պարագաների, ինչպես նաև վառելիքի մատակարարումը Հայաստանի Հանրապետությունից Արցախի Հանրապետություն, միտումնավոր ստեղծել են այնպիսի կենսապայմաններ, որոնք ուղղված են մարդկանց լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը: Միտումնավոր ստեղծված կենսապայմանները արցախահայության մոտ առաջացրել են մարմնական լուրջ վնասվածքներ՝ այն է, թերսնուցում, հիվանդությունների բարդացում, և այլն, ինչպես նաև մտավոր լուրջ վնաս են պատճառել ողջ ազգաբնակչությանը, ինչը անշեղ համապատասխանություն է առաջացնում Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի վերոբերյալ կետերի հետ:

Արցախի Հանրապետությունում լիակատար շրջափակման հետևանքով, համաձայն Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հրապարակած տվյալների, եղել են ինչպես թերսնման հետևանքով վաղաժամ, թերհաս ծնունդաբերության, խրոնիկ հիվանդությունների և մահացությունների կտրուկ աճի, այնպես էլ սովամահության դեպքեր[5]:

Արցախի շուրջ ինն ամիս տևած շրջափակման և դրա վտանգների մասին պարբերաբար ահազանգել են մի շարք տեղական և միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ: Մասնավորապես, Լեմկինի անվան Ցեղասպանության կանխարգելման ինստիտուտը 2022 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 5-ը հրապարակել է ութ Կարմիր դրոշի մասին ահազանգ՝ ընդգծելով Ադրբեջանի գործողություններում ցեղասպանության մտադրության մասին, զգուշացնելով նաև տարածաշրջանում ազդեցություն ունեցող գերտերություններին և որոշում կայացնողներին, որ վերջիններս մեղսակից են դառնում արցախահայության դեմ իրագործվող ցեղասպանության համար[6]:

2023 թվականի սեպտեմբերի 5-ին Լեմկինի անվան Ցեղասպանության կանխարգելման ինստիտուտը 127 էջանոց լայնածավալ զեկույց հրապարակեց, որում փաստերով ներկայացնում և զգուշացնում էր աշխարհին, որ Ադրբեջանի որդեգրած ցեղասպանական քաղաքականությունը, որը դրսևորվում էր արցախահայությանը լիակատար շրջափակման մեջ պահելով, միտում ունի վերածվելու ռազմական ճանապարհով վերջիններիս ֆիզիկական ոչնչացմանը[7]:

Ցավոք, նախազգուշացնող հայտարարություններում բարձրաձայնվող վտանգներն իրենց երկար սպասել չտվեցին: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի զինված ուժերը սկսեցին չհայտարարված ռազմական ագրեսիա Արցախի Հանրապետության ողջ տարածքով մեկ՝ թիրախավորելով ինչպես ռազմական ստորաբաժանումները, այնպես էլ բնակավայրերն ու խաղաղ բնակչությանը: Ականատես վերապրողների վկայությունները փաստում են, որ ադրբեջանական զինուժի վայրագությունները հիշեցնում էին 1915-1923 թթ. արևմտահայության դեմ Օսման-

յան պետության իրագործած ցեղասպանությունը[8, 9]:

Արցախահայության բռնի տեղահանմամբ չավարտվեցին Ադրբեջանի ցեղասպանական գործողությունները: Այսօր արդեն հայաթափված Արցախում Ադրբեջանի իշխանությունների հրահանգով ոչնչացվում և պղծվում է արցախահայության պատմամշակութային ժառանգությունը: Ինչպես նշում է ԱՄՆ-ի Հարավային Կոնեկտիկուտ նահանգի պետական համալսարանի պրոֆեսոր Արմեն Մարսուբյանը իր «Ցեղասպանություն այլ մեթոդներով. ժառանգության ոչնչացումը, ազգային պատումները և ազերիների հարձակումը Ղարաբաղի բնիկ հայերի վրա» հոդվածում. «Խմբի մշակութային ժառանգության ոչնչացումը և մշակութային արտադրության ճնշումը խումբը ոչնչացնելու ամենահուսալի միջոցն է»[10]:

Ադրբեջանցիների՝ հայերի ոչնչացման քաղաքականությունն ու նկրտումները նոր չեն: Ինչպես նշում է Գառնիկ Դավթյանը, Ադրբեջանում հայատյացությունը զարգացել է երեք փուլով՝ առաջին փուլ՝ 1918-1920 թթ., երբ Ադրբեջանը որպես պետություն նոր էր ձևավորվում, երկրորդ փուլ՝ 1920-1991 թթ., Ադրբեջանի խորհրդայնացումից մինչև դրա անկախացումը, և 1991 թ. անկախացումից ցայսօր[11]:

Հայերին ցեղասպանելու ադրբեջանաթուրքական ծրագրի մեկդարյա լինելու հանգամանքն ապացուցվում է նաև 1918-ի փետրվարի 27-ին գաղտնի գրությամբ ռազմական նախարարի անունից Անդրկովկասում հայերին ամբողջովին կոտորելու մասին արձակած հրամանը: Հրամանում ասվում էր. «Իրադրությունը պահանջում է հայ ժողովրդի ամբողջական ոչնչացում, որն էլ հրամայված էր սուլթանական հրամանագրով»[12]:

Հարկ է ընդգծել, որ, հետևելով ադրբեջանաթուրքական ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարություններին, ակնհայտ է դառնում, որ Արցախի Հանրապետության նվաճումով և արցախահայությանը ցեղասպանության ենթարկելուց հետո անգամ, հայության սպառնացող վտանգները չեն անցել: Իրենց ներքին և արտաքին լսարանին ուղղված ամենօրյա ուղերձներում թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի քաղաքական և ռազմական ղեկավարներն անթաքույց հայտարարում են Հայաստանի Հանրապետությունից նոր տարածքներ գրավելու իրենց մտադրության մասին: Ինչպես ճշմարտացիորեն նշում է պատմաբան Ալիկ Ղարիբյանը. «Թուրքական նկրտումները միշտ էլ լինելու են հայության խնդրում, վտանգը ևս, ուստի հայության գոյատևման միակ փրկությունը միասնականության, զգոնության, և իր հայրենիքի յուրաքանչյուր հատվածին տեր կանգնելու մեջ է»[13]:

Ադրբեջանաթուրքական տանդեմի դեմ պայքարը ենթադրում է ոչ միայն երկրի տնտեսական, ռազմական հզորացում և դաշնակցային հարաբերություններում կայունության ապահովում, այլև իրավական դաշտում ամուր հիմքերի ստեղծում, որի առաջին քայլը տեղի ունեցած հանցագործության ճիշտ որակավորումն ու ճշգրիտ բնութագրի կիրառման ապահովումն է ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարթակներում: ■

Ծանոթագրություններ

1. 2023 թվականի հոկտեմբերի 19-ին Ավստրալիայի խորհրդարանը միաձայն ընդունեց Լեռնային Ղարաբաղի (հեղ.՝ արցախահայության) ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումը դատապարտող բանաձև: Մանրամասն տես՝ https://www.aravot.am/2023/10/19/1377645/ (վերջին դիտում՝ 20.10.2023 թ.): Հոկտեմբերի 6-ին ԱՄՆ մի շարք կոնգրեսականներ, իրավապաշտպան և կրոնական կազմակերպություններ Կապիտոլիումի բլրի վրա տեղի ունեցած միջոցառման ժամանակ դատապարտել են Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից տեղի ունեցած էթնիկ զտումը: Մանրամասն տես՝ https://armenpress.am/arm/news/1121353/ (վերջին դիտում՝ 20.10.2023թ.):
2. https://www.un.org/en/genocideprevention/ethnic-cleansing.shtml (վերջին դիտում՝ 15. 10.2023 թ.):
3. Նույն տեղում:
4. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835 (վերջին դիտում՝ 03. 10.2023 թ.):
5. https://www.artsakhombuds.am/hy/news/747 (վերջին դիտում՝ 15. 10.2023 թ.): Տես նաև՝ https://www.artsakhombuds.am/hy/news/734 (վերջին դիտում՝ 20.10.2023թ.):
6. https://www.lemkininstitute.com/red-flag-alerts/red-flag-alert-for-genocide---azerbaijan---update-%238 (վերջին դիտում՝ 08.10.2023 թ.):
7. https://www.lemkininstitute.com/_files/ugd/9bc553_2e3babd9d7834d7fbcfa262f88c9fa74.pdf (վերջին դիտում՝ 20.10.2023 թ.)
8. https://www.youtube.com/watch?v=N1H4nmYMcdk(վերջին դիտում՝ 20.10.2023 թ.):
9. Արցախահայության շրջանում փաստահավաք աշխատանքները շարունակվում են, որոնք մի մաս են կազմելու լայնածավալ հետազոտական աշխատանքի:
10. Armen t. Marsoobian, “Genocide by Other Means: Heritage Destruction, National Narratives, and the Azeri Assault on the Indigenous Armenians of Karabakh”, Genocide Studies International 15, 1. Zoryan Institute, p. 26.
11. Դավթյան, Գ., Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում, Երևան, 2019, էջեր 24-30:
12. Ղարիբյան, Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. եւ Մեծ Բրիտանիան», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ20:
13. Նույն տեղում, էջ 167:

ԱՄՆ ակտիվ ներգրավվածությունը Հարավային Կովկասում

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Մեր նախորդ ուսումնասիրություններում, որոնք հրապարակվել են «Դրօշակում» առիթ ենք ունեցել ներկայացնելու ամերիկյան հետաքրքրությունները Հարավային Կովկասում: Եթե դրանք ամփոփենք, ապա կարելի է հստակ պնդել, որ ամերիկյան որևէ վարչակազմ երբևէ հետաքրքրված չի եղել Հարավային Կովկասում ընդհանրապես, և Հայաստանում մասնավորապես ռազմական ներկայություն ունենալու հարցով՝ ռազմաբազայի կամ զինված ուժերի տեղակայման տեսքով:

Պատմության ընթացքում նման հնարավորություններ Վաշինգտոնն ունեցել է թե ԽՍՀՄ փլուզումից հետո՝ այսինքն՝ Բուշ ավագի վարչակազմի ժամանակ, թե՛ ռուս-վրացական պատերազմից հետո՝ Բուշ կրտսերի վարչակազմի օրոք: Սակայն ԱՄՆ-ն չի գնացել այս ճանապարհով՝ բավարարվելով Հարավային Կովկասի պետությունների հետ երկկողմ ռազմական հարաբերությունների խորացմամբ: Ավելին, ամերիկյան կամ ՆԱՏՕ-ի ազդեցությունը Հարավային Կովկասում կարող էր խորանալ հենց Վրաստանի ՆԱՏՕ ընդունմամբ, ինչն այդպես էլ տեղի չունեցավ, չնայած Վրաստանը շատ վաղուց պատրաստ էր դառնալ թե՛ ԵՄ, թե՛ ՆԱՏՕ-ի անդամ:

Իրականում, այստեղ Վաշինգտոնն ավելի նուրբ է խաղում: Հարավային Կովկասը Վաշինգտոնի համար առավելապես հետաքրքիր է, որպես միասնական տարածաշրջան, քան առանձին՝ երկկողմ հարաբերությունների տեսքով: Հարավային Կովկասը շրջապատված է ԱՄՆ-ի համար կարևորագույն նշանակություն ունեցող պետություններով՝ ռազմավարական դաշնակից Թուրքիայով, ռազմավարական հակառակորդ Ռուսաստանով և ռազմավարական թշնամի Իրանով: Իհարկե, այս իրողությունը առավել պատկերավոր է ներկայացնում ամերիկյան շահերի տրամաբանությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ, այդուհանդերձ, ԱՄՆ-ն երբևէ չի շտապել ռազմական ներկայություն ունենալ տարածաշրջանում, սակայն փորձել է ազդեցություն ունենալ Հարավային Կովկասում իր միակ դաշնակից Թուրքիայի միջոցով: Վրաստանում տեղի ունեցած հեղափոխության արդյունքում ԱՄՆ-ն չհաստատվեց Վրաստանում, այլ թույլ տվեց իր ռազմավարական դաշնակից Թուրքիային դառնալու Վրաստանի խոշորագույն ներդրողն ու տնտեսական էքսպանսիա իրականացնողը: Այսինքն, իր ռազմավարական դաշնակցի միջոցով Հարավային Կովկասում ազդեցության ձեռքբերումը ԱՄՆ-ի համար առանցքային նշանակություն ունի: Ակնհայտ է, որ Ադրբեջանը նույնպես լուրջ կախվածություն ունի Թուրքիայից և, ըստ էության, Թուրքիայի համար արբանյակ պետություն է:

Բայդեն և Էրդողան

Այս առումով, միակ պետությունը, որը Թուրքիայի ազդեցությունից զերծ էր, շարունակում էր մնալ Հայաստանը՝ առնվազն մինչ 2018 թվականը: Հենց սա էր պատճառը, որ Վաշինգտոնը, սկսած 1991 թվականից, ակտիվ ներգրավված էր հայ-թուրքական հարաբերությունների և Լեռնային Ղարաբաղի խնդիրների կարգավորման մեջ: 2020 թ. պատերազմից հետո ԱՄՆ-ն բավականին ակտիվացավ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացում՝ ռեալ հնարավորություն տեսնելով ռուսական ազդեցության կրճատման հեռանկարի համար: Լեռնային Ղարաբաղում հայաթափումը կարող էր դիտարկվել և, ամենայն հավանականությամբ, շատ դեպքերում դիտարկվում է որպես Լեռնային Ղարաբաղի խնդրի վերջնական լուծում, ինչը տարածաշրջանում ռուսական ռազմական որևէ տեսակի ներկայություն դարձնում է անիմաստ:

Այս առումով, իհարկե բավականին հետաքրքիր է

հետևել, թե ինչ ակտիվություն է ցուցաբերում Բայդենի վարչակազմը Արցախում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Իրականում, վարչակազմը բավականին պասիվ էր իրեն դրսևորում, բավարարվում էր միայն հայտարարություններով: Բայդենի վարչակազմը, ներառյալ ԱՄՆ պետքարտուղար Բլինկենը, մի քանի անգամ հանդես են եկել շրջափակման դադարեցման կոչերով, սակայն մինչև սեպտեմբերի 25-ը որևէ հստակ քայլ չէր ձեռնարկվել: Միայն սեպտեմբերի 19-ին սկսված Արցախի հայաթափումից հետո է, որ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) տնօրեն Սամանթա Փաուերն այց կատարեց Հայաստան, այնուհետև՝ Ադրբեջան:

Սամանթա Փաուերը նախկինում պաշտոնավարել է Օբամայի վարչակազմում՝ որպես ՄԱԿ-ում ԱՄՆ 28-րդ մշտական ներկայացուցիչ (2013-2017 թթ.): Մինչ այդ Փաուերը ծառայել է Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմում՝ որպես նախագահի հատուկ օգնական և բազմակողմ հարցերի և մարդու իրավունքների գծով ավագ տնօրեն: Ինչ վերաբերում է հայերի հետ հարաբերություններին, Փաուերը առավելապես հայտնի է դարձել իր «Խնդիր դժոխքից. Ամերիկան և ցեղասպանության դարաշրջանը» գրքի շնորհիվ, որում վերլուծվում է ԱՄՆ արտաքին քաղաքականությունը, ավելի կոնկրետ, թե ինչպես է ԱՄՆ-ն ձախողել 20-րդ դարի ցեղասպանությունների կանխումը, ներառյալ Հայոց ցեղասպանությունը: Չնայած գրքին և մարդու իրավունքների ոլորտում Փաուերի ծավալուն աշխատանքին, Օբամայի վարչակազմը, որի մաս էր կազմում Փաուերը, չճանաչեց Հայոց ցեղասպանությունը, որի համար Փաուերը լուրջ քննադատության արժանացավ: Տարիներ անց Փաուերը ներողություն խնդրեց Հայոց ցեղասպանությունը չճանաչելու համար՝ մինչ ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչն էր՝ հայտարարելով, թե. «Ցավում եմ, որ մեր պաշտոնավարման ընթացքում մենք՝ Օբամայի վարչակազմը, չենք ճանաչել Հայոց ցեղասպանությունը»:

Միրզոյան, Բլինքեն և Բայրամով

ԱՄՆ ՄԶԳ տնօրենի պաշտոնը Փաուերը ստանձնել է 2021 թվականի մայիսի 3-ին՝ Բայդենի վարչակազմի օրոք: Այս պաշտոնում Փաուերը շատ էր քննադատվում այն բանի համար, որ ակտիվ չէր, երբ խոսքը վերաբերում էր Ադրբեջանի կառավարության կողմից Արցախի բնակչության դեմ իրականացվող վայրագություններին: Պատճառն այն էր, որ Արցախի դեմ 9 ամիս տևած շրջափակման ընթացքում Փաուերը՝ որպես ՄԶԳ-ի տնօրեն, որևէ կոնկրետ քայլ չի ձեռնարկել Արցախի ժողովրդին աջակցելու համար: Միակ արձագանքը եղել է շրջափակումը դատապարտող հայտարարությունների տեսքով:

Նրա այցը Հայաստան տեղի ունեցավ Արցախի վրա Ադրբեջանի հարձակումից հետո՝ ավելի քան 100.000 հայերի տեղահանման պայմաններում: Իր այցի ընթացքում Փաուերը հանդիպեց Հայաստանի վարչապետի հետ և անձամբ փոխանցեց Ջո Բայդենի նամակը, որում ասվում էր. «Ես խնդրել եմ Սամանթա Փաուերին՝ իմ վարչակազմի առանցքային անդամին, անձամբ Ձեզ փոխանցել Միացյալ Նահանգների և իմ վարչակազմի ամուր աջակցությունը Հայաստանի՝ արժանապատիվ և կայուն տարածաշրջանային խաղաղության ձգտման համար, որը կպահպանի ձեր ինքնիշխանությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունը և ժողովրդավարությունը: … Վստահեցնում եմ, որ Միացյալ Նահանգները կշարունակի կանգնել Հայաստանի կողքին»: Այս ուղերձը մի քանի անգամ կրկնել է նաև ինքը՝ Փաուերը: Իր այցի ընթացքում Փաուերը հայտարարեց 11,5 միլիոն դոլարի հրատապ մարդասիրական օգնության տրամադրման մասին՝ 1 միլիոն դոլար ԱՄՆ ՄԶԳ-ի և 10,5 միլիոն դոլար՝ պետդեպարտամենտի միջոցով: Ադրբեջանի դեմ պատժամիջոցների, օրինակ՝ Ադրբեջանին օգնության տրամադրման դադարեցման մասին հարցի պատասխանից Փաուերը խույս տվեց՝ անորոշ պատասխանելով, որ Միացյալ Նահանգները դեռևս փնտրում է, թե որն է ադրբեջանական գործողություններին «համահունչ պատասխանը»:

Իսկ սեպտեմբերի 27-ին Սամանթա Փաուերը մեկնեց Բաքու: Նույն օրն ադրբեջանցիների կողմից գերևարվեց Ռուբեն Վարդանյանը՝ համահիմնադիրը «Ավրորա» հիմնադրամի, որտեղ Փաուերը եղել է մրցանակիրների ընտրման հանձնաժողովի անդամ: Սակայն այս միջադեպը նույնպես արձագանքի չարժանացավ Փաուերի կողմից: Ադրբեջան իր ուղևորության ընթացքում Փաուերը ևս մեկ անգամ վերահաստատեց «Հայաստանի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը հարգելու կարևորությունը»:

ԱՄՆ-ի կողմից ամենաբարձր մակարդակով բազմիցս կրկնված այս հայտարարությունը և տեղի ունեցած իրադարձությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ԱՄՆ-ի կողմից որոշակի ճնշում է եղել Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ: Վերջիններս խստորեն առաջ էին քաշում, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը» հայկական տարածքով՝ սպառնալով ուժ կիրառել, եթե Հայաստանը դիմադրի իրենց

ծրագրին: Սակայն Փաուերի այցից հետո ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Թուրքիայի ագրեսիվ հռետորաբանությունը կարծես թե թուլացավ որոշ ժամանակով: Ավելին, Էրդողանը հայտարարել էր, որ եթե Հայաստանը չտրամադրի միջանցք, ապա ճանապարհը կանցնի Իրանի տարածքով:

Այնուամենայնիվ, այս իրավիճակը երկար չտևեց. Հոկտեմբերի 3-ին պետքարտուղար Բլինքենի և կոնգրեսականների հետ տեղի ունեցած զրույցի ընթացքում Բլինկենը նշել է, որ Պետդեպարտամենտն ուղիներ է փնտրում Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու համար և չի պլանավորում շրջանցել 907-րդ բանաձևը, որով ԱՄՆ-ն ռազմական աջակցություն է տրամադրում Բաքվին: Բլինքենը նաև զգուշացրել է, որ Ադրբեջանը եկող շաբաթների ընթացքում կներխուժի Հայաստանի հարավային շրջաններ:

Թեև Պետդեպարտամենտը պաշտոնապես հերքել է վերջին պնդումը, նշելով, որ պետքարտուղարի խոսքերը սխալ են մեկնաբանվել, Պետքարտուղարությունը իր այդ հայտարարության մեջ ևս մեկ անգամ ԱՄՆ աջակցությունն է հայտնել Հայաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը՝ շեշտելով, որ դրանց ցանկացած խախտում կարող է հանգեցնել լուրջ հետևանքների:

Այսպիսով, ԱՄՆ-ի համար Հարավային Կովկասի տարածաշրջանը կարևորվում է որպես ամբողջություն, որտեղ Միացյալ Նահանգները փորձում է ընդլայնել սեփական ազդեցությունը ոչ թե անմիջականորեն, այլ Թուրքիայի՝ իր ռազմավարական դաշնակցի միջոցով՝ դրանով իսկ թուլացնելով ռուսական դիրքերը տարածաշրջանում: Դա է պատճառը, որ ԱՄՆ-ը շահագրգռված է և ակտիվորեն ներգրավված է Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը: Հաշվի առնելով Հայաստանի ներկայիս կառավարության պատրաստակամությունը և ձգտումը բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ Միացյալ Նահանգներն աջակցում և խրախուսում է խաղաղության օրակարգը տարածաշրջանում, որը պետք է իրականացվի թուրքական էքսպանսիոնիստական քաղաքականության շրջանակներում: Դա է պատճառը, որ ԱՄՆ-ն այս գործընթացի իրականացման համար ներգրավում է վարչակազմի բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաների, ինչպիսիք են պետքարտուղար Բլինկենը և ԱՄՆ ՄԶԳ տնօրեն Սամանթա Փաուերը:

Սամանթա Փաուերը Հայաստանում

Օգտագործուած աղբիւրներ

1. Administrator Samantha Power Arrives in Armenia, https://www.usaid.gov/news-information/press-releases/sep-25-2023-administrator-samantha-power-arrives-armenia, (16.10.23).
2. Samantha Power, https://www.usaid.gov/organization/samantha-power, (16.10.23).
3. Samantha Power, https://awpc.cattcenter.iastate.edu/directory/samantha-power/, (16.10.23).
4. Samantha Power: 'I am Sorry that We in the Obama Administration did not Recognize the Armenian Genocide', https://anca.org/samantha-power-i-am-sorry-that-we-in-the-obama-administration-did-not-recognize-the-armenian-genocide/, (16.10.23).
5. Samantha Power, https://www.usaid.gov/organization/samantha-power, նույն տեղում:
6. The US President Biden's letter to Prime Minister Pashinyan, https://www.primeminister.am/en/press-release/item/2023/09/25/Nikol-Pashinyan-Joe-Biden-letter/, (17.10.23).
7. Administrator Samantha Power At Her Meeting With Armenian Prime Minister Nikol Pashinyan, https://www.usaid.gov/news-information/speeches/sep-25-2023-administrator-samantha-power-her-meeting-armenian-prime-minister-nikol-pashinyan, (17.10.2023)
8. Administrator Samantha Power At a Press Availability in Kornidzor, Armenia, https://www.usaid.gov/news-information/speeches/sep-26-2023-administrator-samantha-power-press-availability-kornidzor-armenia, (17.10.2023).
9. Rubin M., Power Failure: Biden Official Turns Blind Eye to Genocide, https://www.aei.org/op-eds/power-failure-biden-official-turns-blind-eye-to-genocide/, (18.10.2023).
10. Administrator Samantha Power Meets with President Ilham Aliyev in Baku, Azerbaijan, https://www.usaid.gov/news-information/press-releases/sept-27-2023-administrator-samantha-power-meets-with-president-ilham-aliyev-in-baku-azerbaijan, (18.10.2023).
11. Erdogan: Iran 'views positively' a land corridor linking Turkey to Azerbaijan, https://www.al-monitor.com/originals/2023/09/erdogan-iran-views-positively-land-corridor-linking-turkey-azerbaijan#ixzz8GUMYtH1K, (18.10.2023).
12. Blinken warned lawmakers Azerbaijan may invade Armenia in coming weeks,https://www.politico.com/news/2023/10/13/blinken-warned-lawmakers-azerbaijan-may-invade-armenia-in-coming-weeks-00121500, (18.10.2023).
13. U.S. State Department denies report on Blinken warning lawmakers that Azerbaijan may invade Armenia soon, https://armenpress.am/eng/amp/1121999?fbclid=IwAR3EvLhNhiZeqCFih-pJrHWJj3GQSOoa09oz5-33clnLHsso2u4eCLPYiW0, (18.10.2023).

Կենտրոնական Ասիան աշխարհաքաղաքական զարգացումների տիրույթում. Թյուրքական աշխարհի միավորման խոչընդոտները

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, լրագրող

Կենտրոնական Ասիան շարունակում է մնալ այսօր ձևավորվող աշխարհաքաղաքական քարտեզի կարևոր տարածաշրջաններից մեկը: Այստեղ շահեր ունեն քաղաքական խաղադրույք կատարող տարբեր դերակատարներ, ինչն առավել բարդ և բազմաշերտ է դարձնում ընթացող գործընթացները: Ինչպես արդեն նախորդ հոդվածում նշել ենք, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Ռուսաստանի, Չինաստանի, հավաքական Արևմուտքի և, իհարկե, Թուրքիայի համար: Եթե Ռուսաստանի և Չինաստանի համար, քաղաքական, տնտեսական մակարդակներից բացի, այս տարածաշրջանում ազդեցության պահպանմամբ անվտանգային միջավայրի բարելավման խնդիր է դրվում, իսկ հավաքական Արևմուտքի համար՝ Ռուսաստանի և Չինաստանի ազդեցությունը թուլացնելու միջոցով տնտեսական, կոմունիկացիոն, էներգետիկ հիմնախնդիրներ, ապա Թուրքիան, վերոնշյալից բացի, նաև քաղաքակրթական խնդիր է լուծում՝ բոլորովին այլ հարթության մեջ դիտարկելով Կենտրոնական Ասիայի պետությունների հետ փոխհարաբերությունները: Մասնավորապես մեծ տեղ է հատկացվում Թուրքիայի գերակայությամբ թյուրքական պետությունների միավորմանն ու թյուրքականության գաղափարի ամրապնդմանը: Դա անմիջականորեն առնչվում է Հայաստանին և հայկական շահերին, քանի որ այս տարվա սեպտեմբերի 19-ին Ստեփանակերտի ռմբակոծմամբ և հետագա մի քանի օրերի ընթացքում Արցախի ամբողջական հայաթափմամբ Թուրքիան ևս մեկ քայլով մոտեցավ «Մեծ Թուրան» ծրագրի իրականացմանը: Վերջին առնվազն երեք տարիների ընթացքում դեպի Կենտրոնական Ասիա թուրքական արտաքին քաղաքականության իրականացման գործիքը դարձել է Ադրբեջանը, որը գրեթե լիակատար կախվածության մեջ է հայտնվել Թուրքիայից:

Կենտրոնական Ասիայի հարցերով վաղուց հետաքրքրված է Եվրամիությունը, սակայն վերջինիս համար տարածաշրջանն առավել մեծ նշանակություն ստացավ Ռուսաստանի հետ առճակատման շրջանում, քանի որ ԵՄ-ն ձգտում է այլընտրանքային աղբյուրներ գտնել ռուսական էներգետիկ ռեսուրսներին, ինչպես նաև Ռուսաստանը շրջանցող տրանսպորտային ուղիներին: Աշխարհագրական առումով Կենտրոնական Ասիան ռազմավարական «ցատկահարթակ» կարող է դառնալ ոչ միայն Ռուսաստանին, այլև Չինաստանին և նույնիսկ Իրանին զսպելու համար, եթե հաջողվի ազդեցության ծանրակշիռ լծակներ ստանալ տարածաշրջանում: Կենտրոնական

Ասիայի երկրների իշխող շրջանակներն իրենց հերթին ձգտում են բազմավեկտոր քաղաքականության միջոցով զարգացնել բիզնես համագործակցությունն ու օտարերկրյա ներդրումներ ներգրավել՝ փոխհատուցելով արևմտյան պատժամիջոցների կտրուկ խստացման պայմաններում առաջացած դժվարությունները:

ԵՄ երկրներից կենտրոնասիական ուղղությամբ ակտիվություն է ցուցաբերում հատկապես Գերմանիան: Սեպտեմբերի վերջին Բեռլինում անցկացվեց «Կենտրոնական Ասիա-Գերմանիա» առաջին գագաթնաժողովը, որը սեպտեմբերի 19-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում անցկացված «C5 + 1» ձևաչափով առաջին ամերիկա-կենտրոնասիական գագաթնաժողովի շարունակությունն էր: Փորձագիտական շրջանակների կարծիքով «Կենտրոնական Ասիա-Գերմանիա» գագաթնաժողովի արդյունքներով տպավորություն է ստեղծվում, որ Կենտրոնական Ասիայի երկրները փորձում են հնարավորինս շահավետ վաճառել իրենց Արևմուտքին: Ի դեպ, նշենք, որ դեռևս անցած տարվա հոկտեմբերի վերջին Ղազախստան, ապա նաև Ուզբեկստան էր այցելել Գերմանիայի արտաքին գործերի նախարար Աննալենա Բերբոքը՝ կրկնելով Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելի երթուղին: Բանակցությունների ընթացքում քննարկվել էին տնտեսական, այդ թվում՝ էներգետիկայի և արդյունաբերության ոլորտներում համագործակցության ընդլայնման հարցեր: Պատահական չէ, որ Գերմանիայի արտաքին գերատեսչության ղեկավարը կենտրոնասիական երկրներ էր եկել գործարարների, էներգետիկայի և ենթակառուցվածքների ոլորտի մասնագետների մեծ պատվիրակությամբ: Հիմնական շեշտը դրվում էր Ղազախստանի

Տոկաև և Բայդեն

վրա՝ այն պարզ պատճառով, որ այս երկիրը բավարար մեծ տարածք և կարևոր դիրք է զբաղեցնում, որի շնորհիվ կարող է իրական փոփոխություններ մտցնել տարածաշրջանային աշխարհաքաղաքականության և ռազմավարության մեջ: Փորձագետները նշում են, որ Ղազախստանի հետ փոխգործակցությունը տեղի է ունենալու «հումք տեխնոլոգիայի դիմաց» սխեմայի համաձայն: Ղազախստանը զգալի դեր է խաղում գերմանական էներգետիկ անցումային ծրագրերում, քանի որ երկիրն ունի բավարար տարածք արևային մարտկոցներ տեղադրելու համար, ինչպես նաև մտադիր է դառնալ «կանաչ» ջրածնի խոշորագույն արտահանողներից մեկը: 2021 թ. դեկտեմբերի 1-ին հայտարարվեց «Global Gateway» նախաձեռնության մեկնարկի մասին, որի շրջանակներում ԵՄ-ն մտադիր է 2021-2027 թթ. 300 մլրդ եվրոյի ներդրումներ կատարել զարգացող տնտեսություն ունեցող երկրների, այդ թվում՝ Կենտրոնական Ասիայի ենթակառուցվածքային նախագծերի համար: Անկասկած, Ղազախստանում և Ուզբեկստանում Բեռլինի ներկայության մեծացումը զգալի կլինի տարածաշրջանային զարգացումների համար:

Նշենք, որ Կենտրոնական Ասիայի վերաբերյալ «Շախմատային մեծ տախտակ» հայտնի աշխատության մեջ Զբիգնև Բժեզինսկին տարածաշրջանում ամենակարևոր դերը հատկացրել է Ղազախստանին ու Ուզբեկստանին, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դերը. Ղազախստանը «տարածաշրջանի վահանն է», իսկ Ուզբեկստանը՝ նրա «հոգին»: Ամերիկացի քաղաքական, պետական գործիչը գտնում է, որ Միացյալ Նահանգների գլխավոր ռազմավարական խնդիրը եղել և մնում է այն, որպեսի թույլ չտա Ռուսաստանին մենաշնորհային վերահսկողություն ունենալ տարածաշրջանի ռեսուրսների նկատմամբ: Կենտրոնական Ասիայում ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ Բժեզինսկու հիմնական եզրակացությունը հետևյալն է. ոչ տեր, ոչ օտար: Սա նշանակում է, որ Ամերիկան չափազանց հեռու է տարածաշրջանից Եվրասիայի այս հատվածում գերիշխելու համար, բայց չափազանց հզոր է այստեղ տեղի ունեցող գործընթացներին չներգրավվելու համար: Հետևաբար, տարածաշրջանում ամերիկյան քաղաքականությունը միտված պետք է լինի բազմաբևեռություն ստեղծելուն, ինչը ենթադրում է որևէ ուժի բացարձակ ազդեցության բացառումը: Այս մոտեցումը ևս ինչ-որ պահի կարող է խոչընդոտ դառնալ թուրքական գերակայության հաստատման համար:

Ամերիկյան քաղաքական նախապատվությունների վերաբերյալ 25 տարի առաջ ներկայացված մոտեցումներն այսօր էլ արդիական են: Ոչ թե արտաքին քաղաքական կողմնորոշման խնդիր է դրվում, այլ տնտեսական, առևտրային մակարդակներում տարածաշրջանի երկրների համար հնարավորությունների ստեղծման, որի արդյունքում Կենտրոնական Ասիայի երկրները կկարողանան այլընտրանք ունենալ Ռուսաստանի և Չինաստանի հետ ավանդական համագործակցությանը: 2023 թվականի փետրվարի 28-ից մարտի 1-ը Կենտրոնական Ասիայի երկրներ այցելած ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը խոստացել էր առնվազն 25 մլն դոլար հատկացնելու մասին՝ տարածաշրջանի երկրներում առևտրի դիվերսիֆիկացիան շարունակելու և աշխատատեղեր ստեղծելու համար: Նիդերլանդներից հետո Միացյալ Նահանգները երկրորդ խոշորագույն ներդրողներից մեկն է Ղազախստանում՝ ավելի քան 62 մլրդ դոլար ընդհանուր ներդրումներով:

2022 թվականի վերջին Ղազախստանի և ԱՄՆ-ի միջև ապրանքաշրջանառության ծավալն աճել է 37.2 տոկոսով և կազմել 3.05 մլրդ դոլար: Ղազախստանում հաջողությամբ գործում է շուրջ 590 ձեռնարկություն՝ ամերիկյան կապիտալի մասնակցությամբ: Թեև Ռուսաստանը մնում է Աստանայի հիմնական առևտրային գործընկերը՝ տարեկան 26 մլրդ դոլար ապրանքաշրջանառությամբ, սակայն ԱՄՆ-ը և արևմտյան այլ երկրներ ձգտում են ամբողջ ուժով մեծացնել իրենց մասնաբաժինը Ղազախստանի և Կենտրոնական Ասիայի այլ երկրների հետ առևտրում: Այս ամենն արտահայտում է նաև Կենտրոնական Ասիայի երկրների ցանկությունը հնարավորության սահմաններում հավասար հարաբերություններ կառուցել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ՝ տարածաշրջանի մյուս խոշոր խաղացողների հետ, միևնույն ժամանակ խուսափելով հստակ աշխարհաքաղաքական ընտրությունից:

Այդ համատեքստում որոշակի բացառություն կարող է լինել թյուրքականության գաղափարախոսության ազդեցության մեծացումը: Թուրքիան ձգտում է զարգացնել հարաբերությունները Կենտրոնական Ասիայի երկրների հետ, որպես թյուրքական աշխարհի առաջնորդ: Անկարան մեծ գումար և ջանք է ներդնում հումանիտար ոլորտում համագործակցությունը զարգացնելու համար: Ինստիտուցիոնալ առումով կարևոր քայլ էր շուրջ երկու տարի առաջ Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը Թյուրքական պետությունների կազմակերպություն դարձնելը: Կազմակերպության 2022 թվականին Սամարղանդում կայացած գագաթնաժողովն անցկացվել էր «Թյուրքական քաղաքակրթության նոր

դարաշրջան» հնչեղ խորագրի ներքո՝ մեկ անգամ ևս ընդգծելով Էրդողանի նկրտումները: Թյուրքական պետությունների միջև տարբեր ոլորտներում ստեղծվել են կառույցներ, խորհուրդներ ու հիմնադրամներ, որոնք փորձ են ձևավորելու միասնական գաղափարական հենք և ինքնություն: Ի դեպ, 2023 թ. մայիսի 29-ին Աստանայում տեղի ունեցավ Թյուրքական աշխարհի ընդհանուր այբուբենի գծով հանձնաժողովի առաջին նիստը, որը հանձնարարությունների ու առաջարկությունների փաթեթ է մշակելու լատինական այբուբենին անցնելու համար: Այդ քայլի ազդեցությունը ի հայտ է գալու հեռանկարում, քանի որ նմանատիպ այբուբենների կիրառությունը կնպաստի թյուրքական ժողովուրդների մշակութային մերձեցմանը, ընդհանուր մտածողության ձևավորմանը, ինչ-որ չափով բաժանարար գիծ քաշելով անցյալում թողած ժառանգության հետ և ազդելու է պետությունների կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ կրթությունից մինչև արտաքին քաղաքականություն: Չնայած Թուրքիայի բոլոր ջանքերին, թուրանական բանակի ստեղծման հեռանկարը դեռևս առկախված է, ինչն ամենակարևոր գործիքն է միասնական թյուրքական աշխարհի կայացման գործում:

Կենտրոնական Ասիայի պետությունների միջև լարվածության առիթ և համագործակցության խոչընդոտներից են սահմանային կարգավորման խնդիրները՝ պայմանավորված Խորհրդային Միության փլուզումից հետո Ֆերգանա հովտի տարածքների նկատմամբ Ուզբեկստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի հավակնություններով: Տարաձայնությունները թեև որոշիչ և առանցքային չեն տարածաշրջանում գլոբալ զարգացումների առումով, սակայն ժամանակ առ ժամանակ սրվող իրավիճակը հնարավորություններ է ստեղծում միջազգային խաղացողների համար միջամտելու տարածաշրջանային գործընթացներին:

Թյուրքական պետությունների կազմակերպության շրջանակներում Թուրքիան հատուկ ուշադրություն է դարձնում Թուրքմենստանին՝ փորձելով գրավիչ դարձնել կազմակերպությունը վերջինիս համար: Իրականում խնդիրը ոչ այնքան քաղաքակրթական է, որքան «չոր հաշվարկային». թուրքմենական գազն անհրաժեշտ է Տրանսկասպյան գազատարը լցնելու և Եվրոպա փոխադրելու համար: Թուրքմենստանի նախագահ Սերդար Բերդիմուհամեդովն առաջիկայում պատրաստվում է պաշտոնական այցով մեկնել Թուրքիա: Նրա խոսքով, այցը «նոր էջ կբացի թուրքմենա-թուրքական բարեկամական և եղբայրական հարաբերությունների հետագա զարգացման մեջ»: Այդ մասին նա հայտարարել էր Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հետ հոկտեմբերի 11-ին Աշխաբադում կայացած հանդիպման ժամանակ: Նախատեսվում է, որ Թուրքիա կատարած այցի ժամանակ երկրների ղեկավարները կքննարկեն երկկողմ առևտրի, էներգետիկայի, տրանսպորտի ոլորտում համագործակցության, ինչպես նաև Թուրքմենստանի՝ որպես Թյուրքական պետությունների կազմակերպության լիիրավ անդամ դառնալու հարցերը: Թուրքիայի ԱԳ նախարարը բավականին հետաքրքիր արտահայտություն է արել, նշելով, որ «անսասան և ամուր հարաբերություններ» ունեցող Թուրքիան և Թուրքմենստանը գործում են «մեկ ազգ, երկու պետություն» բանաձևով: Չնայած բոլոր սիրաշահումներին, հետխորհրդային ժամանակաշրջանում Թուրքմենստանը ձեռնպահ էր մնում թյուրքական ինտեգրումից՝ պատճառաբանելով պետության չեզոք կարգավիճակը: Սակայն այս տարվա նոյեմբերի 14-ին կայանալիք ԹՊԿ-ի հաջորդ գագաթնաժողովում կազդարարվի Թուրքմենստանի հանդիսավոր մուտքը թյուրքական միություն: Թյուրքական ինտեգրման խայծը թուրքմենական գազի տեղափոխման հնարավորությունն է դեպի Եվրոպա: Թուրքմենստանը վաղուց է մշակում էներգետիկ ուղիների դիվերսիֆիկացման ծրագրերը: Միաժամանակ Թուրքիան հասկանում է, որ իր գազային հանգույցը կիսատ կմնա առանց թուրքմենական էներգառեսուրսների: Այս նախագիծը հետաքրքիր է նաև Ռուսաստանի համար, քանի որ հնարավորություն կտա փոխարինման կամ այլ եղանակով ռուսական գազը դուրս բերել եվրոպական շուկաներ:

Որքան էլ կարևոր լինեն տնտեսական, էներեգետիկ շահերը, միևնույն է, չեզոք պետության կարգավիճակն ու դրանից բխող հնարավորությունները պակաս գրավիչ չեն: «Մեկ ազգ, երկու պետություն» բանաձևը հրապուրիչ կարող է լինել Ադրբեջանի պես արհեստածին պետական միավորի համար, որը չի կողմնորոշվել իր ծագումնաբանության վարկածների նախընտրելիության հարցերում: Թուրքմենստանի պարագայում երկրի իշխանությունները դժվար թե ոգևորվեն «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի տակ միավորվելու հեռանկարով, և որքան համառորեն փորձի Թուրքիան առաջ տանել այդ մոտեցումը, այնքան արագ կզարգանան թյուրքական ինտեգրումից խուսանավելու ձգտումները: Եվ եթե որևէ կենտրոնասիական պետության հարցում թյուրքական ինտեգրումը կոպիտ բացթողում ունենա, ապա շղթայական ռեակցիան չի ուշանա:

Թյուրքական պետությունների գագաթնաժողովի ժամանակ. Սամարղանդ 23.11.2022

Կենտրոնական Ասիայում մյուս խոշոր քաղաքական դերակատարը Չինաստանն է, որին տարածաշրջանը հետաքրքրում է առաջին հերթին անվտանգության տեսանկյունից: Այդ նկատառումից ելնելով էլ Չինաստանի ղեկավարներն իրենց ռեսուրսները ներդնում են տարածաշրջանի անվտանգային միջավայրը ցնցումներից զերծ պահելու համար: Պեկինը շարունակում է տնտեսական սերտ հարաբերություններ զարգացնել հետխորհրդային հանրապետությունների հետ. 2023 թվականի առաջին չորս ամսում Չինաստանի ապրանքաշրջանառությունը հետխորհրդային հինգ երկրների հետ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 37 տոկոսով և կազմել ավելի քան 25 մլրդ դոլար: Այստեղ, սակայն դերակատարություն ունեն նաև Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցները: Չինաստանում մայիսին անցկացվել էր «Չինաստան-Կենտրոնական Ասիա» գագաթնաժողովը, որի շրջանակում ստորագրվել էր Սիանի հռչակագիրը՝ բաղկացած 15 կետից: Մասնակից երկրների ղեկավարները դեմ էին արտահայտվել այլ պետությունների ներքին գործերին արտաքին ուժերի միջամտությանը, ինչպես նաև «լեգիտիմ պետական իշխանությունը վարկաբեկելու փորձերին» և գունավոր հեղափոխություններ հրահրելուն: Պեկինը պատրաստակամություն է հայտնել աջակցելու տարածաշրջանի երկրների իրավապահ մարմինների և զինվորականների կարողությունների ամրապնդմանը: Հասկանալի է, որ Չինաստանը դրանով ուղերձ է հղել տարածաշրջանում շահեր հետապնդող, սակայն տարածաշրջանային երկիր չհանդիսացող պետություններին, որոնց շարքում պետք է դիտարկել նաև Թուրքիային, որպես առավել ակտիվ և նախաձեռնող կողմ: Չինաստանի նախագահ Սի Ծինփինը գագաթնաժողովի անցկացումը համարել է «նոր դարաշրջանի» սկիզբ տարածաշրջանի հետ հարաբերություններում:

Նշենք, որ Կենտրոնական Ասիայի երկրների հետ Չինաստանը համագործակցում է 2013 թվականին մեկնարկած «Մեկ գոտի-մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում, որն իր հետաքրքրությունը չի կորցրել նաև ներկայումս: Գագաթնաժողովի շրջանակներում կողմերը պայմանավորվել են ավարտելին հասցնել Չինաստան-Ղրղզստան-Ուզբեկստան երկաթուղու և մայրուղու շինարարությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել սկսելու Չինաստան-Տաջիկստան-Ուզբեկստան մայրուղու շինարարությունը: Բացի այդ, նրանք հանդես են եկել Թուրքմենստան-Չինաստան գազատարի չորրորդ գծի արագացված շինարարության օգտին: Չինաստանի ղեկավարն առաջարկել է ընդլայնել միջսահմանային առևտուրը և խոստացել է հատկացնել 3,8 մլրդ դոլար անհատույց օգնություն Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներին: Աշխարհագրական դիրքն առավելություն է տալիս Պեկինին ոչ տարածաշրջանային դերակատարների նկատմամբ: Չինաստանը նաև փորձում է հավասարակշռել Ռուսաստանին, որի ազդեցությունը թեև հետխորհրդային տարիներին որոշակիորեն թուլացել է, սակայն շարունակում է կարևոր գործոն լինել Կենտրոնական Ասիայի երկրների համար:

Այսպիսով, տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրությունը մի կողմից հարվածի տակ է դնում այդ երկրներին, քանի որ միջազգային դերակատարներից յուրաքանչյուրը ձգտում է ազդեցության լծակներ ձեռք բերել, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է ստեղծում Կենտրոնական Ասիայի երկրների համար դիվերսիֆիկացնելու արտաքին քաղաքականությունը և այլընտրանքային լուծումներ գտնելու առկա մարտահրավերներին պատասխանելու համար: Առաջին հայացքից կարող է թվալ, թե թյուրքական ինտեգրումն առաջատար դիրքերում է, սակայն, ինչ-որ պահի այն կբախվի ոչ միայն կենտրոնասիական պետությունների, այլև մյուս միջազգային դերակատարների շահերին: Արդյունքում, վերջիններս կնախընտրեն հավասարակշռել միմյանց՝ թույլ չտալով որևէ կողմի ակնհայտ ուժեղացումը:



«Չինաստան Կենտրոնական Ասիա» գագաթնաժողովի ժամանակ. մայիս 2023

ՆԱՏՕ-ՌԴ հակամարտությունը ՆԱՏՕ-ի ռազմավարական փաստաթղթերում

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

ԱՄՆ ԱԱՌ փաստաթղթում առանձնակի նշվում է պայքարը ազգայնականության դեմ. «Բախվում ենք աճող ազգայնականության, նահանջող ժողովրդավարության աշխարհին», պայքար ավտորիտար պետությունների դեմ՝ ի դեմս Ռուսաստանի և Չինաստանի»[1]:

ԱՄՆ ռազմավարական այս փաստաթուղթը կոչ է ողջ հավաքական արևմուտքին՝ դիմակայելու հարափոփոխ իրականությանը, քանի որ իշխանության բաշխումն ամբողջ աշխարհում փոխվում է՝ ստեղծելով նոր սպառնալիքներ:

ԱՄՆ ռազմավարական փաստաթղթերի առանցքային նպատակների շարունակականությունն ապահովում է 2022-ի հունիսի 29-ին Մադրիդում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից ընդունված ՆԱՏՕ-ի ռազմավարական հայեցակարգը[2]:

Նախևառաջ հայեցակարգը վերահաստատում է անսասան հավատարմությունը Հյուսիսատլանտյան պայմանագրին[3] և միմյանց բոլոր սպառնալիքներից պաշտպանելուն՝ անկախ նրանից, թե որտեղից են դրանք գալիս[4]:

Հայեցակարգում նշվում են Դաշինքի երեք հիմնական առաքելությունները՝ զսպում և պաշտպանություն, ճգնաժամերի կանխարգելում և կառավարում, հավաքական անվտանգություն: Այս խնդիրները լրացնում են միմյանց բոլոր անդամ երկրների հավաքական պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար:

Համաձայն փաստաթղթի՝ ՆԱՏՕ-ն վճռական է պաշտպանելու անդամ երկրների ազատությունն ու անվտանգությունը: Նրա հիմնական նպատակն ու ամենակարևոր պարտականությունն է ապահովել անդամ երկրների հավաքական պաշտպանությունը բոլոր ուղղություններից եկող սպառնալիքներից:

ՆԱՏՕ-ն եզակի, կարևոր և անփոխարինելի անդրատլանտյան ֆորում է խորհրդատվության, համակարգման և գործողությունների համար անհատական և հավաքական անվտանգությանը վերաբերող բոլոր հարցերի շուրջ:

Հայեցակարգը հրապարակային կոչ է անդամ երկրներին. «Մեր երկրների միջև անդրատլանտյան կապը մեր անվտանգության անփոխարինելի պայմանն է: Մեզ միավորում են ընդհանուր արժեքները՝ անհատի ազատությունը, մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը: Մենք հաստատապես հավատարիմ ենք մնում ՄԱԿ-ի կանոնադրության և Հյուսիսատլանտյան պայմանագրի նպատակներին և սկզբունքներին»[5]:

«Մենք կամրապնդենք մեր Դաշինքը՝ հիմնվելով

մեր անբաժանելի անվտանգության, համերաշխության և միմյանց պաշտպանությանն ուղղված ամուր հանձնառության վրա, ինչպես ամրագրված է Հյուսիսատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածում»[6]:

Համաձայն փաստաթղթի՝ ավտորիտար դերակատարները / ՌԴ, ՉԺՀ, ԻՐԱՆ, Հյուսիսային Կորեա և այլն/ մարտահրավեր են նետում ՆԱՏՕ-ի շահերին, արժեքներին և ժողովրդավարական ապրելակերպին: Նրանք ներդրումներ են կատարում միջուկային և հրթիռային կարողությունների մեջ՝ գրեթե առանց թափանցիկության և առանց հաշվի առնելու միջազգային նորմերը և պարտավորությունները:

Ըստ փաստաթղթի՝ Ռուսաստանի Դաշնությունը դիտվում է ՆԱՏՕ-ի անդամ երկրների անվտանգության, ինչպես նաև Եվրաատլանտյան տարածաշրջանում խաղաղության և կայունության համար ամենակարևոր և անմիջական սպառնալիք:

Եվրաատլանտյան տարածաշրջանում խաղաղություն չկա: Ռուսաստանի Դաշնությունը խախտել է նորմերն ու սկզբունքները: Ուկրաինայի դեմ Ռուսաստանի Դաշնության ագրեսիվ պատերազմը կործանել է աշխարհը և լրջորեն փոխել անվտանգության միջավայրը:

Մոսկվայի վարքագիծը արտացոլում է Ռուսաստանի ագրեսիվ գործողությունների օրինակը իր հարևանների և ավելի լայն անդրատլանտյան հանրության դեմ:

Այն ձգտում է հարկադրանքի, դիվերսիայի, ագրեսիայի և բռնակցման (անեքսիայի) միջոցով ստեղծել ազդեցության և ուղղակի վերահսկողության ոլորտներ:

ՌԴ ռազմական հնարավորությունները, հոետորա-

բանությունը և քաղաքական նպատակներին հասնելու պատրաստակամությունը խաթարում են կանոնների վրա հիմնված միջազգային կարգը:

Ռուսաստանի Դաշնությունը արդիականացնում է իր միջուկային ուժերը և ընդլայնում է իր նոր և կործանարար երկակի օգտագործման համակարգերը՝ միաժամանակ օգտագործելով միջուկային զենքի սպառնալիքը հարկադրական նպատակներով: Նրա նպատակն է ապակայունացնել արևելքում և հարավում գտնվող երկրները:

Հեռավոր Հյուսիսում ՆԱՏՕ-ի երկրների հզորացումը և Հյուսիսատլանտյան ափով նավագնացության ազատությունը խաթարելու նրա կարողությունը ռազմավարական մարտահրավեր է Դաշինքի համար: ՌԴ ռազմական հզորացումը, այդ թվում՝ Բալթյան, Սև և Միջերկրական ծովերի տարածաշրջաններում, Բելառուսի հետ ռազմական ինտեգրման հետ մարտահրավեր է ՆԱՏՕ-ի անվտանգությանն ու շահերին:

ՆԱՏՕ-ն պատրաստակամ է միասնական և պատասխանատու կերպով արձագանքել ռուսական սպառնալիքներին և թշնամական գործողություններին:

«Մենք զգալիորեն կամրապնդենք զսպումն ու պաշտպանությունը բոլոր անդամ պետությունների համար, կբարձրացնենք մեր դիմադրողականությունը ռուսական պարտադրանքի նկատմամբ և կաջակցենք մեր գործընկերներին՝ հակազդելու ռուսական ագրեսիային»[7]:

ՌԴ թշնամական քաղաքականության և գործողությունների լույսի ներքո մենք չենք կարող Ռուսաստանի Դաշնությանը համարել գործընկեր:

Համաձայն փաստաթղթի՝ ՌԴ-ՆԱՏՕ հարաբերություններում ցանկացած փոփոխություն կախված է նրանից, որ Ռուսաստանի Դաշնությունը դադարեցնի իր ագրեսիվ պահվածքը և լիովին համապատասխանի միջազգային իրավունքին:

Սպառնալիք է դիտվում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև խորացող ռազմավարական գործընկերությունը, և կանոնների վրա հիմնված միջազգային կարգը խաթարելու նրանց փոխադարձ ամրապնդող փորձերը հակասում են հավաքական Արևմուտքի արժեքներին և շահերին:

ՉԺՀ-ն օգտագործում է քաղաքական, տնտեսական և ռազմական գործիքների լայն շրջանակ՝ ընդլայնելու համար իր գլոբալ ներկայությունը և նախագծային հզորությունը՝ առանց թափանցիկություն ապահովելու իր ռազմավարության, մտադրությունների և ռազմական հզորության հարցում:

ՉԺՀ-ի հիբրիդային և կիբեր գործողությունները, ինչպես նաև նրա առճակատման հոետորաբանությունն ու ապատեղեկատվությունը թիրախավորում են ՆԱՏՕ-ի երկրները և վնասում են Դաշինքի անվտանգությանը:

ՉԺՀ-ն ձգտում է վերահսկել հիմնական տեխնոլոգիական և արդյունաբերական ոլորտները, կարևոր ենթակառուցվածքները և ռազմավարական նյութերն ու մատակարարման շղթաները:

Նա օգտագործում է իր տնտեսական լծակները ռազմավարական կախվածություններ ստեղծելու և իր ազդեցությունը մեծացնելու համար: Նա ձգտում է խաթարել կանոնների վրա հիմնված միջազգային կարգը՝ ներառյալ տիեզերական, կիբեր և ծովային տիրույթներում:

Կենսաբանական, ճառագայթային և միջուկային նյութերի կամ զենքի պոտենցիալ օգտագործումը ՆԱՏՕ-ի դեմ թշնամական պետական և ոչ պետական դերակատարների կողմից մնում է սպառնալիք անվտանգության համար:

Իրանը և Հյուսիսային Կորեան շարունակում են զարգացնել իրենց միջուկային և հրթիռային ծրագրերը: Սիրիան, Հյուսիսային Կորեան և Ռուսաստանի Դաշնությունը ոչ պետական դերակատարների հետ դիմել են քիմիական զենքի կիրառմանը:

ՉԺՀ-ն արագորեն ընդլայնում է իր միջուկային զինանոցը և զարգացնում է ավելի բարդ համակարգեր՝ առանց թափանցիկության բարձրացման կամ սպառազինությունների վերահսկման կամ ռիսկերի նվազեցման:

Հայեցակարգում առանձնակի անդրադարձ է կատարվում ահաբեկչությանը: Ահաբեկչության դեմ պայքարը էական նշանակություն ունի ՆԱՏՕ-ի հա-

վաքական պաշտպանության համար (ՆԱՏՕ-ն համագործակցում է ԴԱԻՇ-ի) ИГИЛ)«Даиш» (հետ):

Ահաբեկչական կազմակերպությունները ձգտում են հարձակվել կամ խրախուսել ուրիշներին՝ հարձակվելու ՆԱՏՕ-ի երկրների վրա: Նրանք ընդլայնում են իրենց ցանցերը, ուժեղացնում են իրենց հնարավորությունները և ներդրումներ են կատարում նոր տեխնոլոգիաների մեջ: Ոչ պետական զինված խմբավորումները՝ ներառյալ անդրազգային ահաբեկչական ցանցերը և պետության կողմից հովանավորվող դերակատարները (սուբյեկտները), շարունակում են շահագործել հակամարտությունը և թույլ կառավարումը՝ համալրելու, մոբիլիզացնելու և ընդլայնելու իրենց դիրքերը:

Հատկապես Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում հակամարտությունները, խոցելիությունը և անկայունությունը ուղղակիորեն ազդում են ՆԱՏՕ-ի անդամ երկրների և գործընկերների անվտանգության վրա:

ՆԱՏՕ-ից հարավ գտնվող շրջանները, հատկապես՝ Մերձավոր Արևելքը, Հյուսիսային Աֆրիկան և Սահելի (տարածաշրջան Աֆրիկայում) շրջանները, բախվում են փոխկապակցված անվտանգության, ժողովրդագրական, տնտեսական և քաղաքական մարտահրավերներին:

«Մենք կշարունակենք հակազդել, զսպել, պաշտպանել և արձագանքել ահաբեկչական խմբավորումների կողմից բխող սպառնալիքներին ու մարտահրավերներին՝ կանխարգելման, պաշտպանության և ժխտման համակցությամբ: Մենք կամրապնդենք համագործակցությունը միջազգային հանրության, այդ թվում՝ ՄԱԿ-ի և Եվրամիության հետ՝ ահաբեկչության տարածմանը նպաստող պայմանները վերացնելու համար»[8]:

Հայեցակարգում հստակ նշվում է, որ ՆԱՏՕ-ն պաշտպանական դաշինք է, ոչ ոք չպետք է կասկածի Դաշինքի տարածքի յուրաքանչյուր թիզը պաշտպանելու մեր ուժին և վճռականությանը՝ պահպանելու բոլոր անդամ պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը և ջախջախելու ցանկացած ագրեսորի:

ՆԱՏՕ-ի զսպման և պաշտպանական կարողությունները հիմնված են միջուկային, սովորական և հակահրթիռային պաշտպանության կարողությունների համապատասխան համակցության վրա՝ համալրված տիեզերական և կիբեր հնարավորություններով:

ՆԱՏՕ-ի միջուկային հնարավորությունների հիմնարար նպատակն է պահպանել խաղաղությունը, կանխել հարկադրանքը և զսպել ագրեսիան:

ՆԱՏՕ-ի դեմ միջուկային զենքի ցանկացած օգտագործում հիմնովին կփոխի հակամարտության բնույթը:

Դաշինքի ռազմավարական միջուկային ուժերը, հատկապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, ՆԱՏՕ-ի երկրների անվտանգության ամենաբարձր երաշխիքն են:

Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի միջուկային ուժերը զսպման իրենց դերն են խաղում և նշանակալի ներդրում ունեն Դաշինքի ընդհանուր անվտանգության մեջ:



ՆԱՏՕ-ի միջուկային զսպող ուժը նաև հիմնված է Եվրոպայում տեղակայված ԱՄՆ միջուկային զենքի և համապատասխան անդամ երկրների ներդրումների վրա: Անդամ պետությունների կողմից տրամադրված երկակի նշանակության ինքնաթիռները շարունակում են կատարել ՆԱՏՕ-ի միջուկային զսպման առաքելության առանցքային դերը:

Հայեցակարգի առանցքային դրույթները վերաբերում են ՆԱՏՕ-ի ընդլայնմանը:

2023 թվականի հուլիսի 11-ին Վիլնյուսում Հյուսիսատլանտյան խորհրդի նիստին մասնակցող ՆԱՏՕ-ի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից հրապարակվել է հայտարարություն, որով ՆԱՏՕ-ին միանալու հրավեր ստացած երկիրը հավատարիմ է այս հայտարարությանը. «Մենք հավատարիմ ենք միջազգային իրավունքին և Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին և հավատարիմ ենք կանոնների վրա հիմնված միջազգային կարգի պահպանմանը: Այս գագաթնաժողովը մեր Դաշինքի ամրապնդման ուղենիշ է»[9]:

Համաձայն այս փաստաթղթի՝ ՆԱՏՕ-ի անդամները վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ միշտ պաշտպանելու միմյանց և Դաշինքի տարածքի յուրաքանչյուր թիզը, պաշտպանելու միլիարդ քաղաքացիներին, ազատությունն ու ժողովրդավարությունը՝ համաձայն Վաշինգտոնի պայմանագրի 5-րդ հոդվածի[10]:

Համաձայն հայտարարությանը՝ Ռուսաստանը լիովին պատասխանատվություն պետք է կրի Ուկրաինայի դեմ իր անօրինական, չհրահրված պատերազմի համար, որը լրջորեն խաթարել է եվրաատլանտյան և համաշխարհային անվտանգությունը, և որի համար նա պետք է պատասխան տա ամբողջությամբ:

Ռուսաստանը պետք է անհապաղ դադարեցնի ագրեսիան, այս անօրինական պատերազմը, դադարեցնի ուժի կիրառումը Ուկրաինայի դեմ և ամբող-

ջությամբ ու անվերապահորեն դուրս բերի իր բոլոր զորքերը և տեխնիկան Ուկրաինայի տարածքից՝ իր միջազգայնորեն ճանաչված սահմաններով՝ ներառյալ նրա տարածքային ջրերը:

ՆԱՏՕ-ն կոչ է անում բոլոր երկրներին որևէ ձևով չաջակցել ռուսական ագրեսիային և դատապարտել նրանց, ովքեր ակտիվորեն նպաստում են Ռուսաստանի պատերազմին:

Բելառուսի հետ Ռուսաստանի խորացող ռազմական ինտեգրումը՝ ներառյալ բարելավված ռուսական ռազմական հնարավորությունների տեղակայումը, ազդեցություն ունի տարածաշրջանային կայունության և Դաշինքի պաշտպանության վրա:

Հատկապես դատապարտվում է Բելառուսի աջակցությունը, որը շարունակում է տրամադրել իր տարածքը և ենթակառուցվածքները, որպեսզի ռուսական ուժերը հարձակվեն Ուկրաինայի վրա:

Համաձայն հայտարարությանը՝ ինչպես Բելառուսը, նաև Իրանը պետք է դադարեցնեն մեղսակցությունը Ռուսաստանի հետ և վերադառնան միջազգային իրավունքի համապատասխանությանը:

ՆԱՏՕ-ն կմնա զգոն և կշարունակի ուշադիր հետևել զարգացումներին, մասնավորապես, այսպես կոչված, մասնավոր ռազմական ընկերությունների հնարավոր տեղակայմանը Բելառուսում:

ՆԱՏՕ-ն կոչ է անում Բելառուսին դադարեցնել իր գործունեությունը հարևանների դեմ, հարգել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները և պահպանել միջազգային իրավունքը:

ՆԱՏՕ-ն կոչ է անում ՉԺՀ-ին դատապարտել Ռուսաստանի ագրեսիվ պատերազմն Ուկրաինայի դեմ, ձեռնպահ մնալ Ռուսաստանի ռազմական ջանքերին աջակցելուց, հավատարիմ մնալ ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին և սկզբունքներին:

Իրանի աջակցությունը Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիվ պատերազմին ազդում է եվրաատլանտյան անվտանգության վրա:

ՆԱՏՕ-ն կոչ է անում Իրանին դադարեցնել իր ռազմական աջակցությունը Ռուսաստանին, մասնավորապես՝ անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) տեղափոխումը. դրանք օգտագործվում են կարևոր ենթակառուցվածքներին հարվածելու համար՝ պատճառելով մեծածավալ քաղաքացիական զոհեր:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը Ուկրաինայի նախագահի հետ համատեղ ասուլիսում[11] հրապարակային թշնամական վերաբերմունքի է արժանացրել և արժեզրկել Ռուսաստանի Դաշնությանը. «Մոսկվան պայքարում է կայսերական մոլորությունների համար: Ռուսաստանը կորցրել է իր դիրքերը համաշխարհային ասպարեզում: Նա կտրված է միջազգային շուկաներից: Չի մասնակցում միջազգային գագաթնաժողովների հանդիպումներին: Եվ նա ստիպված է զենքի համար դիմել այնպիսի ռեժիմների, ինչպիսիք են Իրանը և Հյուսիսային Կորեան»[12]:

Արդյո՞ք կիրականանան ՆԱՏՕ-ին անդամակցելու Ուկրաինայի եվրաատլանտյան ձգտումները, համաձայն որի. «ՆԱՏՕ երկրները և Ուկրաինան «կնստեն» որպես իրավահավասար անդամներ»[13]:

Մյուս կողմից՝ տեսանելի է, որ խորանում են ՆԱՏՕ ռազմաքաղաքական դաշինքի անդամ պետությունների անվտանգությանը սպառնացող ռազմական սպառնալիքներն ու մարտահրավերները:

Համաձայն ԱՄՆ ԱԱՌ-ի՝ ԱՄՆ-ը պարտավորվում է Մերձավոր Արևելքում պահպանել Իսրայելի անվտանգությանն իր «երկաթյա հավատարմությունը»:

Այսպիսով՝ արագընթաց շարունակվում է աշխարհի վերաբաժանման գործընթացը:

Ծանոթագրություններ

1. The National Security Strategy of the USA/ https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2021/03/NSC-1v2.pdf , https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf :
2. Стратегическая концепция НАТО 2022 года, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2022/6/pdf/290622-strategic-concept-ru.pdf /09.10.2023/:
3. Североатлантический договор, https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=ru /09.10.2023/:
4. Стратегическая концепция НАТО 2022 года, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2022/6/pdf/290622-strategic-concept-ru.pdf /09.10.2023/:
5. Տես նույն տեղում:
6. Североатлантический договор, https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=ru /09.10.2023/:
7. Стратегическая концепция НАТО 2022 года, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2022/6/pdf/290622-strategic-concept-ru.pdf /09.10.2023/:
8. Տես նույն տեղում:
9. Заявление по итогам встречи в верхах в Вильнюсе, https://www.nato.int/cps/ru/natohq/official_texts_217320.htm?selectedLocale=ru /09.10.2023/:
10. Североатлантический договор, https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=ru /09.10.2023/:
11. Совместная пресс-конференция, Генерального секретаря НАТО Йенса Столтенберга с президентом Украины Владимиром Зеленским, https://www.nato.int/cps/ru/natohq/opinions_218845.htm?selectedLocale=ru /09.10.2023/:
12. Տես նույն տեղում:
13. Заявление по итогам встречи в верхах в Вильнюсе, https://www.nato.int/cps/ru/natohq/official_texts_217320.htm?selectedLocale=ru /09.10.2023/:
14. The National Security Strategy of the USA/ https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2021/03/NSC-1v2.pdf , https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf:

Հավերժի ճամփորդներ. կիսատ երազանքներ

Մեղա Գալստյան
Հայաստանի պատմության թանգարանի աշխատակից

Ներածություն

Նրանք պայմանագիր կնքեցին հավերժության հետ...

Մերը դեպի հայրենիք քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է, և միայն ոգու մարդն է ապրում ու մեռնում հայրենիքի համար...

-Նապոլեոն Բոնապարտ

Արցախը բոլոր ժամանակներում իր տեղն ու դերն է ունեցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Դարեր շարունակ Արցախն ու Սյունիքը եղել են Արևելյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների հիմնական կենտրոնները: «Շուրջ 70 տարի կոմունիստական կուսակցությունը փորձում էր ԽՍՀՄ-ում բնակվող հարյուրից ավելի ազգություններին համոզել, թե երկրում ազգային հարցը հաջողությամբ ու վերջնականապես լուծված է»[1]: 1985 թ. հետո Խորհրդային Միությունում սկսված ազատագրական շարժումների ծավալումը գորբաչովյան, այսպես կոչված, «վերակառուցման» անմիջական հետևանք էր: Իր ազգային արժանապատվությունը, «ոտնահարված իրավունքները»[2] պաշտպանելու համար առաջինը հանդես եկավ արցախահայությունը, որը չէր հաշտվել իր պատմական տարածքները Ադրբեջանին բռնակցելու և Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության հետ:

Նրա պայքարի նպատակը սահմանադրական ճանապարհով մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ վերամիավորվելն էր:

1988-1994 թթ. Արցախի (1991 թ. Արցախի Հանրապետություն) դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետևանքով ծագած զինված հակամարտությունը 1991-ից վերաճեց հայ-ադրբեջանական լայնամասշտաբ պատերազմի, որի հետևանքով ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի աջակցությամբ 1994 թ. մայիսին հրադադար խնդրել: 1994 թ. մայիսին Մոսկվայում «բանակցություններն ավարտվեցին մայիսի 14-ից զինադադարի հաստատումով»[3]: Սա Արցախյան առաջին պատերազմն էր: «Արցախցու անխորտակ նավը, անցնելով խռովահույզ օվկիանոսը, մաքառելով չարի ու բռնության դեմ, հասել է 21-րդ դարի ալեկոծ նավահանգիստը»[4]: 21-րդ դարում աշխարհն ու աշխարհի տերերը աչք փակեցին մի դաժան ու անհավասար պատերազմի վրա, որը կոչվեց Արցախյան 2-րդ պատերազմ: 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից շուրջ չորս տարի անց հակառակորդը կրկին դիմեց զենքի ուժին՝ նախընտրելով այդ ճանապարհով հոգուտ իրեն լուծել Արցախյան հիմնահարցը[5]: Հարձակման 4-րդ օրը Ադրբեջանը դարձյալ դիմեց Մոսկվայի միջնորդությանը՝ հայկական կողմից խնդրելով պատերազմի դադարեցում:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան ադրբեջանական բանակը հրթիռահրետանային նախապատրաստությունից ու ԱԹՍ հարվածներից հետո կրկին հարձակման անցավ շփման գծի ողջ երկայնքով: Իր բնույթին հավատարիմ՝ նա թիրախավորեց խաղաղ բնակավայրերն ու քաղաքացիական բնակչությանը՝ տարբերություն չդնելով զինվորի ու մանկահասակ երեխայի, հոգևորականի ու տարեց կնոջ, հասուն տղամարդու և անօգնական ծերունու միջև. նրա հարվածն ուղղված էր բոլորին:

«Այս պատերազմը թե՛ քաղաքացիական բնակչության և թե՛ զինվորականության կողմից հաճախ բնութագրվում է որպես անմարդկային քաոս, իսկ երբեմն նաև համեմատվում դժոխքի հետ»[6]:

Մեր նպատակն է ներկայացնել 44-օրյա պատերազմում հավերժի ճամփորդներին, նրանց մասին պատմությունները՝ իրենց հերոսություններով, հարազատների նկարագրություններով, կյանքի ու մահվան ընկալումներով, իրենց արձագանքներով ու գրառումներով, երազանքներով և պատերազմից հետո դրանց իրականացման պատկերացումներով: Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձրել պատերազմի անմիջական մասնակիցների և նրանց հարազատների դիրքորոշումներին, կարծիքներին: Որպես նյութ օգտագործվել են զոհված հերոս զինվորների մտքերը, խոսքերը, նրանց հարազատների բնութագրումները, մարտական օրագրերը, բանավոր պատմությունները: Այս ամենն ընդհանրացվել է, և կատարվել են թեմատիկ վերլուծություններ: Այս

հետազոտությունը փորձ է արձանագրել անմիջական հարազատից զոհվածի մասին վերջին տեղեկությունները, կենդանի մնացած ականատես ընկերների պատմությունները նրանց կյանքի վերջին դրվագների մասին, ինչը նպաստում է նաև կարևոր հետևություններ անելու պատերազմի ընթացքի և այդ պատերազմի որոշ դրվագների մասին: Ներկայացվել են մոտ 220 զոհված զինվորների գործերը, սակայն կատարվել են թեմատիկ և բովանդակային խմբավորումներ. ներկայացնելով մեկին՝ վերջինիս կերպարի մեջ խտացվել են նաև ուրիշների արարքն ու վարքը: Հոդվածի համար հետազոտության նյութ է ծառայել ՀՊԹ-ում (Հայաստանի պատմության թանգարան) մեր կողմից կատարված հավաքչական աշխատանքը՝ հենված թե՛ բանավոր և թե՛ գրավոր պատմությունների վրա: Օգտագործել ենք մանրամասն հարցազրույցները, նաև ձայնագրություններ: Արձանագրել ենք զինվորների հետ կապված հետևյալ նկատառումը. գրեթե բոլորը **վերջին անգամ զանգահարել են՝** կարծես կանխազգալով իրենց մոտալուտ մահը, վերջին անգամ լսել են հարազատի, հատկապես մոր ձայնը:

Թաթուլը[7] (նրա նման շատերը) զոհվելու օրը զանգել է մորը՝ Գայանեին, և ասել. «Հոգնած եմ, մի քիչ քնեմ, հետո կզանգեմ»: Իր հերոսության ներշնչանքի աղբյուրն ազգային հերոս Մոնթեն էր, որդուն էլ կոչել էր նրա անունով: Կանխազգալով մոտալուտ մահը՝ ավելացրել է. «Մոնթեիս լավ կնայեք... եթե զոհվեմ, արարողության ժամանակ թող հնչի կամավորի երգը»[8]:

Մայր և Հայրենիք: Ուսումնասիրելով նյութերը՝ արձանագրում ենք, որ շատերի համար մոր կերպարը (որի հետ կիսվել են, գաղտնիք վստահել, երազանք պահել) ասոցացվել է հայրենիքի հետ և պահպանելով այն՝ պահպանել են իրենց տունը, մորը, ընտանիքը, հողը, իրենց պապերի պատգամը: «**Մա՛մ ջան, կարաս պարծենաս ու հանգիստ քնես, էսօր տղեդ ամբողջ Հայաստանի հերթապահն ա»,** —ասում էր Գևորգը[9]՝ պահակակետում կանգնած: Իսկ Գևորգ Գևորգյանը, որը 14 տարեկանից ապրում էր Գերմանիայում և իր սենյակի պատուհանից ծածանում էր եռագույնը, երազում էր հայրենիքի մասին: Պատերազմի լուրն առնելով՝ գալիս է Հայաստան: Մոր հարցին, թե ում է թողնում իրեն ու գնում, Գևորգը պատասխանել է. **«Մա՛մ ջան, քեզ թողնում եմ հայրենիքիս, իսկ ես գնում եմ՝ հայրենիքս պաշտպանելու»:** Մորը միշտ հպարտությամբ ասում էր. «Դու իմ Հայաստան մայր թագուհին ես»: Պատերազմի առաջին օրերից եղել է Ձրականում (Ձաբրայիլ): Կատարել է բազմաթիվ առաջադրանքներ[10]: Արամը[11] մորն ասել էր. **«Մա՛մ, հայրենիքը էտ էնա, որ մինչև վերջին շունչդ էլ պետք ա կռվես հայրենիքի համար, որ մեր պապերը հանգիստ ննջեն: Մա՛մ, ես նենց բան չեմ անի, որ դու ամաչես, հպարտ կաց, որովհետև դու իմ ամեն ինչն ես, սպասի ծառայեմ, վերջացնեմ, գամ, հասնեմ քեզ...»:**

Թեմայի ուսումնասիրմանը օգնել են նաև որոշ զինվորների մարտական օրագրերը՝ Գարիկի[12], Տիգրանի[13] և ուրիշների: «Այսօր շատ քիչ են հրապարակված, չի բացառվում, որ իրականում դրանք ավելի շատ են, և մի քանիսը դեռևս պարուրված են գաղտնիության տարբեր աստիճանի անթափանցության քողով, մի մասն էլ հեղինակների ցանկությամբ պարզապես չի դարձել բոլորի սեփականությունը...»[14]:

Նվիրում և հավատ հաղթանակի հանդեպ, կիսատ երազանքներ...Այս տղաներն ունեցել են անսպառ հավատ հաղթանակի հանդեպ, անմնացորդ նվիրում: Անմահացել են գիտակցումով: Երբեք տնեցիներին չեն ներկայացրել իրենց անհանգստությունը: ԱԹՍ-ի հարվածներից թաքնված լինելով՝ տնեցիների զանգերին չպատասխանելուց հետո, երբ խոսել են, ասել են, թե քնած էին, նոր արթնացան կամ կատակել, թե «կռիվ-կռիվ էինք խաղում»: Հրետանավոր Էդգար Բաղումյանը կրակոցների ձայնը ծիծաղի տակ էր թաքցնում: Նրանց ներկայությունը հայրենիքը զգում է ամեն պահ: «Արցախի հերոս» Մարգարյան Ալենը[15], որի մասին պատմում էր մայրը՝ տիկին Նազելին, սիրում էր կրկնել. «Աշխարհը պետք է սիրել, ոչ թե նրա վրա բարկանալ»: Գրում էր, ստեղծագործում 4 տարեկանից, պաշտում էր գիրքը: Սիրում էր կարդալ հեքիաթներ, ինքն էլ ապրում էր այնտեղ, ապրում ապագայի երազանքներով: Մտածում էր. «Հանցագործ երեխաներ չկան, ամեն ինչ գալիս է խեղաթյուրված մանկությունից»: Նրա շնորհը մանկավարժությունն էր, ուզում էր գիտությամբ զբաղվել աշխարհը, կիսատ մնաց նրա երազանքը... նա կարող էր «նոր, վեհ մարդ կերտել», կրթել ու դաստիարակել: Պատերազմի ժամանակ ընկերոջն ասել էր. «Զգում եմ մահվան շունչը»[16]:

Վազգենի[17] երազանքը գիտությունն էր. գիտնական էր ուզում դառնալ: Նրա անունով այսօր հիմնադրամ է բացվել, որի ողջ հասույթը ծառայելու է գիտության զարգացմանը: Ուներ շրջասույթ. «Հերոս և քաջ է նա, ով 9 անգամ ընկնում է, 10 անգամ բարձրանում»: «Ինքը շատ բարձրացավ, մենք մնացինք ներքևում»,— ասում է ուսուցչուհին: Իսկ մայրը ողբալով՝ կրկնում էր. «Հայրենիքին վստահեցի մի պահ, բայց հայրենիքը կորցրեց նրան: Եթե հիմա լսում է Վազգենը, ես մի բան կխնդրեմ. «Եթե կարող ես, ներիր»»:

Ռուբենը[18] աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի շառավիղից էր, ընտրել էր նույն ճանապարհը: Երազում էր դառնալ հայտնի ծրագրավորող և նորույթներ հայտնագործել մարդ-տեխնոլոգիա բնագավառում: Հայտնվելով Վիկտոր Համբարձումյանի անվան կողքին՝ շատ էր հպարտանում նրա հետ ունեցած ազգակցական կապով: Ընդունվեց համալսարան, գերադասեց ծառայել, հայրենիքի հանդեպ պարտքը կատարել, հետո ուսումը շարունակել.... երազանքը մնաց անկատար:

Հովհաննեսը[19], որից միշտ «ուժեղության հոտ» էր գալիս, մասնակցել է Ջրականում մղվող թեժ մարտերին, տեսակով՝ լուրջ, հասուն մտածող: Ասում էր. «Պարտադիր չէ քո սխալից սովորես, ուրիշների սխալից էլ պիտի սովորես»: Մինչև վերջ մարտական տրամադրությամբ ոգևորեց իր ընկերներին և ընկավ հերոսի մահով: Ուսուցչուհին այսպես արտահայտվեց. «Ու մտածում եմ՝ ավելի լավ է «հերո՞ս» լինել, թե՞ լինել պարզապես մեր կողքին...»:

Մարդ-տեխնոլոգիա: Այս պատերազմը, ինչպես խոստովանում են մասնակիցները, յուրահատուկ էր նաև մարդ-տեխնոլոգիա առճակատմամբ, որը հաճախ հասցրել է ծայրահեղ անզորության:

Վահեն[20], որը մարտնչելուց բացի՝ կատարել է բժշկի գործ, օգնել իր ընկերներին, կրկնում էր.«Մենց կինո ողջ աշխարհը չի կարող նկարել»:

Անմիջական մասնակիցներ, որոնք պատերազմը զգացել են բառիս բուն իմաստով իրենց մարմնի վրա: Արմենը[21], Յուրին[22] և նրա նման տղաները մահվան աչքերի մեջ նայեցին, զոհեցին իրենց երազանքները, նպատակները, ապրած ու չապրած գարունները, որպեսզի մի ողջ ազգ շարունակի ապրել: Վասիլյան Ռաֆայելը[23] փրկեց իր զինվորների կյանքը՝ հրադադարից մի քանի ժամվա տարբերությամբ խոցելով թշնամու օդային թիրախները: Քարտեզագրության գործում բարձր գիտելիքների, արագ կողմնորոշման շնորհիվ կարողացել է Հադրութում շրջափակումից դուրս բերել իր զինվորներին: «Մարտունի-2»-ում առաջադրանքը փայլուն կատարելուց հետո լսվել է գեներալի կանչը. ««Արծիվ 40» վերադարձիր, առաքելությունդ կատարեցիր...թշնամու թիրախը ոչնչացված է»: «Նա ոչինչ կիսատ չէր թողնում, պատերազմն էլ կիսատ չթողեց»,—պատմում էր քույրը, սակայն հերոսը չզգաց իր ուղղությամբ արձակած արկի ընթացքը՝ չկասկածելով, որ ոչ միայն ինքն է որսում, այլ նաև իրեն են որսում: Դարձավ հավերժի ճամփորդը... Ինքը սիրում էր կրկնել. «Будем жить» (Ապրելու ենք): Այո՛, պետք է շարունակենք ապրել հանուն նրանց պայծառ հիշատակի, հերոս եղբայրների.. Մա՛րդ Աստծո, տեսնես քեզնից ամուր էլ ի՞նչ կա աշխարհում... Սամվելը[24] առաջնորդ է եղել մարտի դաշտում, 7 անգամ ճանաչվել է լավագույն ավագ բոլոր դիրքերում: Բիզնեսից մինչև երկրի կառավարում երազանքը մնաց անավարտ: Կռվել է ամենավտանգավոր գոտիներում, զինակից ընկերներին օգնել պատսպարվելու, ինքն էլ ընկել «ՍՈՒ» կործանիչի հարվածից: Պատմության դասերը չսովորող Սամվելը դարձավ պատմություն կերտող, դասագրքի հերոս: Նրա մասին դեռ պատմելու են ապագա սերունդները, որոնց համար չխնայեց կյանքը: Սամվելը դիրքում մատուռ էր կառուցել: Նոր սերունդը կազատագրի այն հողը, որտեղ Սամվելի թողած մատուռն էր:

Իսկ Դավիթի[25] մասին, որը ջութակը փոխարինեց զենքով, ասում էին. «Մեր Դավիթը «Փոքրիկ իշխանի» հայի տեսակն էր, որն ամեն օր կարգի էր բերում սեփական մոլորակը», սակայն անզոր գտնվեց մահաբեր տեխնիկայի դեմ: Նորիկը[26], երիտասարդ, որ ժպտում էր նաև տխուր պահերին: Առաջին պրակտիկան անցկացրել է ՀՊԹ-ում: Մեղրիից բերել են Ջրական /Ջաբրայիլ/: Պատրաստ էր մինչև վերջ պաշտպանել իր հող հայրենին: Ցավոք, այդ ամենն արեց իր կյանքի գնով: Դպրոցական տարիներից տիրապետել է զենքի հետ վարվելու կանոններին, ռազմարվեստի գաղտնիքներին: Բարի, ժպտերես, ազնիվ, հավատարիմ, խելացի, ընկերասեր **մեր ՆՈՐՈՆ**... Նրա թևավոր խոսքերից էին. «Սովորական արևը հոգին չի ջերմացնում», «Այս կյանքում ուղղակի բաներ չեն լինում», «Կարոտը ամեն վայրկյան են առնում» և այլն:

Զինվորների արձագանքը պատերազմի բոթին: Շատ կամավորներ տարբեր պատճառներով ազատված են եղել ծառայությունից, սակայն պատերազմի լուրն առնելով՝ ներկայացել են զինվորական կոմիսարիատներ: Արման Օհանջանյանը[27] զինկոմիսարիատում լսելով «չես կարող մեկնել» արտահայտությունը՝ պատասխանել է. **«Ես չեմ եկել հարցնելու՝ տանում եք, թե՞ ոչ, եկել եմ ասելու՝ գնում եմ»:** Հոկտեմբերի 1-ին Ջաբրայիլում էր: Կեսօրին զանգահարել է մորը. «Չանհանգստանաս, պոստ ենք գրավել, հեռախոսներս կորցրել ենք, չզանգեք...»: 13:44-ին նա-

մակ է ուղարկում. **«Մա՛մ, ինձ հետ ինչ էլ լինի, հիշիր՝ դու գլուխդ բարձր ես քայլելու: Պոստերը ցրիվ են տվել, գալիս են մեզ վրա: Սիրում եմ ձեզ, ինձ կներեք...»**: Պատերազմում օրհնած փայտե խաչը կախել է նորածին որդու վզին: (Դա այն պատգամն էր, որ որդին պետք է իրականացներ հոր անավարտ գործը): Ցանկանում էր ռազմական բժիշկ դառնալ, կիսատ մնաց երազանքը...

27 երկրներում բեմեր նվաճած տենորը՝ Գևորգ Հաճյանը[28], պատերազմի լուրն առնելով՝ չէր գտնում իր տեղը: Ուներ ոտքի խնդիր, կամավոր մեկնեց ճակատ՝ կնոջը խոստանալով մի քանի օրից վերադառնալ:

Մեկնեց՝ իր հայրենասիրական երգերով ոգևորելու հայ զինվորին, լինելու նրա կողքին դժվարին պահերին, ապահովելու հաղթական մթնոլորտը: Հայրենիքը նրա երգերի մեջ էր, նրա սրտում, սակայն... հիմա ինքն է հայրենի հողի սրտում, հավերժ փարված են իրար: Նրանք՝ «Հավերժի ճամփորդները», իրենց պահվածքով ու գործողություններով ոչ միայն իրենց ծնողներին ու հարազատներին ներշնչեցին գլուխները բարձր պահել, այլև մեզ բոլորիս պատգամեցին ներշնչվել իրենց սխրանքներով, ՈԳԻ ԴՆԵԼ (չկոտրվել) ու շարունակել իրենց անավարտ գործը:

Հերոսականության դրսևորումները: Պատերազմից հետո շատ է խոսվում հերոսականության մասին, համարյա բոլոր մասնակիցներին անվանում են հերոս, սակայն կան այդ հասկացության տարբերակումներ: Հասարակությունը միշտ բացահայտում է մարդկանց մեջ հերոսներին, եթե անգամ նրանց հերոսականությունը հաղթանակների ժամանակ չի դրսևորվել: Հարազատները, իրենց հրամանատարները հաճախ պատմում են դեպքեր, որոնք բնորոշ են իսկական հերոսներին, պետության, ապագայի հանդեպ պատասխանատվություն ստանձնողներին: Նրանք չխնայեցին ոչինչ, նույնիսկ ամենաթանկը՝ կյանքը: Նրանք հաղթեցին մահին և անմահացան պատմության էջերում՝ պարգևատրվելով հայրենիքին մատուցած ծառայությունների համար տարբեր շքանշաններով ու պարգևներով: «Դուք չեք պարտվել, մեր լուսավո՛ր եղբայրներ, դուք հաղթել եք, իսկ հաղթողները չեն մահանում, նրանք անմահանում են ու իրենց տունը գտնում երկրից երկինք տանող ճանապարհին» (Մարության, 2022, 72): Հերոսի մարտական ընկերները, ականատեսները պատմում են, որ քաջարի Գեղամը[29] և նրա ընկերները զրահատեխնիկայով (ԲՄՊ, ՀՄՄ – 1)[30] թշնամուն մեծ կորուստներ են պատճառել: Հոկտեմբերի 7-ի լույս 8-ի գիշերը նկատում են իրենց ընկերների շրջափակման մեջ ընկնելը, անմիջապես իրենց դիպուկ հարվածներով փրկում են 19 զինծառայողի կյանք՝ փոխարենը կորցնելով իրենց կյանքը: Հոկտեմբերի 8-ը ավարտվեց առանց Գեղամի .... 25 տարի առաջ՝ Արցախյան առաջին պատերազմի ժամանակ, նույն վայրում, նույն տարիքում, նույն սխրանքով անմահացավ իր անվանակից հորեղբայրը՝ Գեղամ Պավլենի Ավետիսյանը: Հայոց պատմությունը նոր ԳԵՂԱՄՆԵՐՈՎ կերտվեց.... կարծես պատմությունը կրկնվում է, ճակատագիրը երկուսին էլ ընդամենը 20 գարուն նվիրեց.... Ամեն մշակույթ ունի իր հերոսական պատմությունը: Զինվորներից շատերը դեմ են արտահայտվում իրենց հերոսականացմանը, նույնիսկ բարդ փորձություններով անցած մարդիկ գտնում են, որ այդպես էլ պետք է լիներ: Ըստ նրանց՝ հերոսություն էր, երբ փրկել են ընկերների կյանքեր, որովհետև ամենամեծ կորուստն են դա համարել, նաև դիրքը, հողը թեկուզև մեկ թիզ ետ բերելը: Հետախույզ Նոյը[31] 8-ամսվա ծառայող էր: Առաջին անգամ ընկել են շրջապատման մեջ, ստեղծել են նահանջի տպավորություն, հավաքվել են և դժվարությամբ ետ վերադարձել: Երբ նկատել է, որ զինամթերքով մեքենան, որտեղ զինվոր էր մնացել, շրջվել է և ծխում է, նետվել է դեպի մեքենան, փրկել զինվորին, որը մահացել է ձեռքերի մեջ: Երբ ասում էին հերոս, բարկանում էր. «18 տարեկան երեխան ձեռքերիս մեջ մահացավ, ես ի՞նչ հերոս»: Հաջորդ առաջադրանքի ժամանակ զոհվել է: Մինչև դպրոց գնալը ոստիկան հայրիկից խնդրել է իր համար ծառայողական գրքույկ պատրաստել, մորը խնդրել է լրացնել այն: Հետո դպրոցական տարիքում ինքնուրույն լրացրել է այն, ինչը իրականություն է դարձել հետագայում: Ընտանիքը մահվանից հետո գտել է այդ գրքույկը, որտեղ լրացված է եղել «Նոյ Լյովայի Թևոնյան, կոչումը՝ մայոր, հետախուզության պետ, 2020 թ. ...»:

Շատերն են ընդունում, որ պատերազմին մասնակցությունը, նրա թոհուբոհի միջով անցնելը, աչքով այս ամենը տեսնելն արդեն հերոսություն է: Շատ զինվորներ գնացել են հերոսական քայլերի՝ հրամանատարին վստահելով. «Հրամանատարը զինվորի ամենահուսալի թիկունքն է, սպաների անձնական օրինակն անչափ կարևոր էր: Զինվորը պիտի հենվի հրամանատարին, որ կարողանա խիզախորեն դիմակայել թշնամուն, ծայրահեղ բան պիտի ասեմ. պատերազմի դաշտում զինվորը հայրենիքը սիրելուց առաջ պիտի իր հրամանատարին սիրի....հայ զինվորը ոգու զինվոր է, ոգին բարձր պահիր, մենակ կգնա 100 հոգու դեմ ու չի կոտրվի...»[32]: Դավիթը[33] արդար, ազնիվ, խիզախ, երդմանը հավատարիմ լավ սպա ու լավ առաջնորդ էր յուրաքանչյուր զինվորի համար: Երբեք չի առաջնորդվել ուսադիրներով, նրան առաջնորդողը մարդկային որակներն էին, մարդասիրությունը վեր է եղել ամեն ինչից: Զուսպ էր ու համեստ, բայց համեստության մեջ քողարկված էր հայրենիքի հանդեպ անսահման սերը: Նա գիտեր, թե ինչ է սահմանի մոտ արթուն գիշեր անցկացնելը, զինվորի հետ սոված մնալը, զինվորի հետ բաց երկնքի տակ լուսացնելը, անձրևի ու քամու հետ կռիվ տալը: Եղել է թե՛ հայր, թե՛ ծնող, թե՛ եղբայր, թե՛ լավ հրամանատար իր զինվորների համար: Երբ կատարած սխրանքների համար ներկայացրել են «Մարտական խաչ» շքանշանի, ասել է. «Շնորհակալ եմ, պարո՛ն գեներալ, հրաժարվում եմ այդ արյունոտ «Մարտական խաչ»-ից, ինձ համար խաչը թիկունքիս կանգնած իմ ամեն մի զինվորն է: Նրանք ինձ ողջ են պետք, ես հերոսություն չեմ արել, ես իմ պարտքն եմ կատարել հայրենիքիս հանդեպ:

Հավատարիմ եմ մնացել սուրբ երդմանս, երբեք չեմ ակնկալել ոչ մի հերոսական կոչում ու շքանշան»: Սակայն եղել են նաև ցավալի դեպքեր, երբ հրամանատարն իր «տեղում» չի եղել, և ընկել են շրջապատման մեջ. զինվորները չեն վստահել այդպիսիներին: Այսօր ականատես ենք նաև դատավարությունների, ըստ որոնց՝ թողնելով իր զինվորներին հրե ճարակի մեջ՝ հրամանատարները փախել են մարտի դաշտից:

Մարատը[34], որը տանկային ջոկատի հրամանատար էր, շարժվում էր Նժդեհի պատգամներով, ասում էր, որ սյունեցի լինելը պատիվ է, պարտք է Նժդեհի առջև:

Զինվորները հարգում և սիրում էին իրենց հրամանատարին, նրան «Մարատ քեռի» են կոչել, ինքն էլ հպարտանում էր նրանցով: Ջոհվելուց առաջ կնոջը պատգամել է իր որդիներին՝ 2 առյուծներին, լավ պահել...

Նոր պատմություն կերտողները: Հարությունը[35] տնեցիների հետ խոսելիս ասել է. «Նոր պատմություն ենք կերտում»: Չհասցրեց ավարտին, առաջնագծում էր: Վիրավորվել է մարտում՝ ոչ մի ռոպե չլքելով մարտադաշտը. հայտնվել են շրջափակման մեջ, դուրս եկել: Ջոհվել է՝ փրկելով կյանքեր: Հրամանատարը խոստովանել է. «Հպարտ է, որ Հարության նման զինվոր է ունեցել»: Անմահացավ՝ մնալով հայոց պատմության էջերում: Կարծում ենք՝ հիմնական ծանրությունը եղել է ժամկետային զինծառայողների վրա, որոնք բարձր մարտական ոգի են ունեցել. նորօրյա «Սասնա ծռեր»: Հրետանավոր Հայկը երազում էր. «Երանի գա, կայանա «նոր հայը», լինեինք Նժդեհի ասած էդ սերունդը»: Հայ զինվորը հաղթել է: Նրանք բոլորը մեծ հավատով «Նոր պատմություն էին կերտում»: ԴԱ ԱՅՆ ՍԵՐՈՒՆԴՆ ԷՐ, ՈՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԷՐ ՆՈՐ ԳՈՒՅՆԵՐ ՄՏՑՆԵԼ ԿՅԱՆՔ՝ դրանով հաղթահարելով պատերազմի չարիքը: Այս սերունդը իր կյանքի գնով մեզ կյանք շնորհեց: Մի բուռ երկիր ու անթիվ ցայտաղբյուրներ, բոլորի վրա սիրտ մաշեցնող թվեր՝ «18», «19», «20»:

Պատերազմը վերարժևորեց կյանքի, խաղաղության մասին ընկալումները: Հոդվածում կարևորել ենք պատերազմի նկարագրության բարոյական ընկալումը: Այս պատերազմը կարևորեց, վերարժևորեց կյանքի, խաղաղության մասին ընկալումները: Նաև առաջնային կարևորություն տրվեց հայրենիքը ոչ թե խոսքով, այլ գործով սիրելու գաղափարին: Գնդացրորդ Գրիգորը[36] իր ձեռքով վերանորոգել էր տունը՝ տեղադրելով պահապան խաչը՝ ինքնության վերահաստատումը: Ծառայության ընթացքում արժանացավ բազմաթիվ շքանշանների և պատվոգրերի: Ստեղծեց լայն ու հոգեհարազատ շրջապատ և կերտեց հայ զինվորի վեհ կերպարը: Առաջնորդվեց «Կռվի՛ր այնպես, որ քո ընթացքով հեշտացնես քեզնից հետո միևնույն նպատակի համար կռվողների գործը» կարգախոսով: Փրկեց իր մարտական ընկերներից շատերի կյանքը, սակայն քսանօրյա ծանր մարտերից հետո, հոկտեմբերի 15-ին իր մարտական ընկերներից շատերի նման հավերժ զինվորագրվեց...

Հայ զինվոր, **քո ներկայությունը միշտ զգում է մեր սուրբ հայրենիքը, քո բազկի ուժը միշտ հասու է լինելու նենգ թշնամուն...**Այո՛, պատերազմը ավերում է ամեն ինչ. «Պատերազմը, հատկապես, երբ հարձակվում են քեզ վրա, քանդում է ամեն ինչ: Կազմաքանդում է այն աշխարհը և նաև կազմաքանդում է այն մարդուն, որն այս կամ այն կերպ անցել է պատերազմի միջով»[37]: Հետո մարդիկ հաճախ են խոստովանում, որ էլ նախկինը չեն, որտեղ մարդն ապրում է՝ վերարժևորելով ամեն ինչ իր շուրջը:

ՈՄԱ (Ողջ մնալու արվեստը) ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության հիմնադիր Վարդանով Վովան նշում է. «Մեր բանակը հին էր, բայց լավն էր, մենք պարտվել ենք թուրքական ժամանակակից բանակին»[38]:

Դավթի պատգամն էր. «Հայ սպաներ... **լավ է մեռնել, քան թե ապրել մեռնելու համար» :** «Հայ սպա, սրիդ վրա գրիր իմ այս խոսքը, որպեսզի նրա ոգով դաստիարակես զինակիցներիդ, քանզի միայն հայրենապաշտ և արիացուցիչ դաստիարակությունն է, որ ուժ պիտի տա քեզ և զինվորիդ՝ հաղթելու մահը»:

Գևորգ Հաջյանի կինը՝ Ֆրիդա Ներսես Մկրտիչը, գրում է. «Կայ մեկ իրականութիւն՝ դուք մեր կողքին չեք, և մենք տկար ենք ու անզօր, ուժ տուէք մեզի. ձեր այդ ուժէն, որ գացիք մարտի դաշտ՝ յանուն յաղթանակի, յանուն պաշտպանութեան, յանուն լոյսի ու խաղաղութեան»[39]: Ժամանակները կանցնեն, բայց մենք չենք հաշտվի վաղվա խաղաղ օրվա համար հավերժի ուղին բռնելու ձեր տղամարդկային որոշման հետ: Տվեցիք կյանքեր հանուն... հավատարիմ մնացիք ձեր նշանաբանին. «Կյանքս՝ հայրենիքիս, հոգիս՝ Աստծուն, պատիվս՝ ինձ»:

Եզրակացություն

Ուսումնասիրելով 44-օրյա պատերազմում զոհվածների գործերը, նրանց պատմությունները, ընդունելով մեր հերոսների պատերազմի ընկալումները, նրանց բնութագրումները, կիսատ, անավարտ մնացած երազանքները, արեցինք հետևյալ եզրահանգումները՝ ա) համարյա բոլորի հեռախոսներում եղել է հեռախոսային վերջին զանգը, բ) հիմնականում մոր կերպարը ասոցացվել է հայրենիքի՝ Մայր Հայաստանի հետ, գ) զոհելով իրենց կյանքը՝ փրկել են այլ կյանքեր, դ) իրենց չհանձնվող տեսակով փորձել են կերտել **նոր պատմություն**, ե) վերարժևորել են կյանքը, խաղաղության ընկալումները, զ) առաջնային կարևորություն է տրվել հայրենիքը ոչ թե խոսքով, այլ գործով սիրելուն, է) իրենց օրինակով կերտել են նոր, վեհանձն, ինքնազոհաբերության պատրաստ զինվորի կերպարը...

Ծանոթագրություններ

Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2003, էջ 59-60:

2 Բալայան Վ., Արցախի պատմություն, հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ 263:

3 Նույն տեղում, էջ 275:

4 Բալայան Վ., Լեռնային Ղարաբաղ, պատմական անցյալն ու ներկան, Երևան, 2009, էջ 18:

5 Խորհրդային իշխանության պարտադրանքով Արցախի լեռնային մասն առանց նրա հիմնական բնակչության՝ հայության կամքը հաշվի առնելու՝ կուսակցության կովկասյան բյուրոյի 1921 թ հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ բռնակցվել էր Խորհրդային Ադրբեջանին: Դրանից հետո Ադրբեջանի խորհրդային իշխանությունները ծրագրված աշխատանքներ էին սկսել Արցախը հայաթափելու ուղղությամբ: Լեռնային Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի պայքարել էր ադրբեջանական իշխանությունների հակահայ քաղաքականության դեմ: Արցախն այդ երկարատև ու դաժան գոյամարտի տարիներին շատ անմեղ զոհեր է տվել, բայց խնդիրը մնացել է չլուծված:

6 Թադևոսյան Ա., Պատերազմի մասնակիցների պատմական, մարդաբանական հետազոտություն, Երևան, 2022, էջ 28:

7 Հակոբյան Թաթուլ, հետախույզ, հատուկ ջոկատային, ապրիլյանի կամավոր: Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 19-ին ԱԹՍ-ի հարվածից, ՀՊԹ, Նգպֆ:

8 «Կրթություն» շաբաթաթերթ, թիվ 48-49, Երևան, 2020, էջ 2:

9 Կիրակոսյան Գևորգ, Մատաղիսի ԿԱԴ-ի/կրակային աջակցման դասակ/ հրամանատար: Համոզված էր, որ հայրենիքի դարպասը սահմանն է: Զոհվել է Մատաղիսում 2020 թ. հոկտեմբերի 11-ին, ՀՊԹ, Նգպֆ:

10Գևորգյան Գևորգ, Ջրականում խոցել է 15 տանկ, 10 անօդաչու սարք: Զոհված ընկերոջը չթողնելով մարտի դաշտում՝ զոհվել է ԱԹՍ-ի հարվածից 2020 թ. հոկտեմբերի 10-ին, ՀՊԹ , Նգպֆ:

11 Մկրտչյան Արամ, ըմբշամարտիկ: Սիրահարվեց զինվորական գործին, երազանքն էր շարունակել ռազմական գործը... սիրում էր հայոց պատմությունը: Զոհվել է Մարտակերտում 2020 թ. սեպտեմբերի 2-ին, ՀՊԹ, Նգպֆ:

12 Գարիկ Կիզիրանց, Հոռաթաղի դիվիզիոնի 3-րդ դասակի հրամանատար: Զոհվել է նոյեմբերի 8-ին Գիշիում: Ունի մարտական օրագիր, ինչից կատարվել են մեջբերումներ. «Գա՛ր, դու առաջ մեզ հետ էիր մի քանի ժամ, հիմա՝ ամեն ժամը... Օրագիրը վերնագրված է «Небесный солдат»:

13 Տիգրան Գալստյան, սերժանտ, ականանետային հաշվարկի հրամանատար: Խոցել է 3 տանկ: Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 31-ին «Մարտունի-2»-ում, ՀՊԹ, Նգպֆ:

14 Գրիգորյան Ա., Բաղդասարյան Բ., Հայրենիքին նվիրված ծառայելու պատրաստակամությամբ, Երևան, 2018, էջ 21:

15 Մարգարյան Ալեն, ռեժիսոր, մեդիա ոլորտի ուսանող, Թումոյում ֆիլմերի ստեղծման դասընթացավար: Ընդունվել էր Բոստոնի համալսարան: Զոհվել է Մատաղիսում 2020 թ. սեպտեմբերի 30-ին: Արժանացել է «Արցախի հերոս» կոչմանը, ՀՊԹ, Նգպֆ:

16 «Մանկավարժական համալսարան» ամսաթերթ, Երևան, 12 մայիս 2021, էջ 5:

17 Վազգեն Գալստյան, ընդունվել էր ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, ապագա գիտնական՝ ֆիզիկոս: Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 10-ին: Նրա անունով բացվել է կրթական հիմնադրամ, որի հասույթը ծառայելու է գիտությանը, ՀՊԹ, Նգպֆ:

18 Համբարձումյան Ռուբեն, կառավարման դասակի հրամանատար: Զոհվել է ավիառումբի պայթյունից 2020 թ. նոյեմբերի 22-ին Մարտունիում, ՀՊԹ, Նգպֆ:

19 Գաբրիելյան Հովհաննես, մասնակցել է 2016-ի քառօրյա պատերազմին: Զոհվել Ջրականում 2020 թ. հոկտեմբերի 18-ին, ՀՊԹ, Նգպֆ:

20 Վահե Ասատրյան, երգում էր բժիշկ դառնալ: Զոհվել է Շուշիում 2020 թ. նոյեմբերի 11-ին, ՀՊԹ, Նգպֆ:

21 Գալստյան Արմեն, ծառայել է Ջրականում: Զոհվել է «Մարտունի-2»-ում հրազենային ծանր հարվածից 2020 թ. նոյեմբերի 2-ին, մարտական ընկերոջը օգնելիս: «Արմե՛ն, կարոտը քո անունն ունի, ուրախությունը՝ նույնպես, ցավն էլ...»:

22 Աղասարյան Յուրի, նախկին չեխովականը խոցել է թշնամու Դ-30, կամազ՝ իր հրետանիով: Երբ պատերազմի ժամանակ մտքերի մեջ էր, հարցրել են. «Ընտանիքիդ մասին ես մտածո՞ւմ»: Ասել է. «Ո՛չ, մարտական ընկերներիս...»: Զոհվել է «Մարտունի 2»-ում 2020 թ. հոկտեմբերի 27-ին ռումբի հարվածից, ՀՊԹ, Նգպֆ:

23 Վասիլյան Ռաֆայել Հովհաննեսի, մայոր, հակաօդային պաշտպանության պետ/ՀՕՊ/: Զոհվել է «Մարտունի-2»-ում 2020 թ. նոյեմբերի 9-ին:

24 Անտոնյան Սամվել, ծառայել է Հադրութում, դիրքի ավագ, մականունը՝ «Սատանա»: Մինչ օրս ընկերները պատրաստում են նրա բաղադրատոմսով սուրճը՝ մուրաբա, սուրճ, խտացրած կաթ: Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 9-ին, ՀՊԹ, Նգպֆ, № 6249:

25 Դավիթ Դավթյան, զոհվել է 2020 թ. հոկտեմբերին Ջաբրայիլում: 50 ընկերների հետ համարվել են անհետ կորած, աճյունը գտնելով՝ ամփոփել են Եռաբլուրում, ՀՊԹ, Նգպֆ:

26 Գասպարյան Նորիկ, դիպուկահար, հրաձիգ: Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 10-ին Ջաբրայիլում, ՀՊԹ, Նգպֆ, № 6241:

27 Արման Օհանջանյան, կամավոր: Ավարտել է Հայբուսակ համալսարանը: 2020-ի մարտին ծնվել է որդին: Զոհվել է Իշխանաձորում 2020 թ. հոկտեմբերի 21-ին հայկական համազգեստ հագած ադրբեջանցիների կրակոցից, ՀՊԹ, Նգպֆ:

28 Հաճյան Գևորգ, օպերային երգիչ, տենոր, մենահամերգներ՝ 27-ից ավել երկրներում, ունի 5 ալբոմ: Զոհվեց 2020 թ. հոկտեմբեր 6-ին Վարանգաթաղում (Մատաղիս), ՀՊԹ, Նգպֆ:

29 Ավետիսյան Գեղամ, զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 8-ին, ՀՊԹ, Նգպֆ:

30 ՀՄՄ-1, հետևակի մարտական մեքենա:

31 Թևոնյան Նոյ, հետախույզ, մականունը՝ «Ռազվետկի պոնչ», ՌԴ-ից եկել է Հայաստան՝ ծառայելու հայրենիքին: Զոհվել է Մատաղիսում, 2020 թ. հոկտեմբերի 9-ին, ՀՊԹ, Նգպֆ:

32 Գրիգորյան Ա., Բաղդասարյան Բ, Հայրենիքին նվիրված ծառայելու պատրաստակամությամբ, Երևան, 2018, էջ 511:

33 Նազարյան Դավիթ, 18 տարի ծառայել է ՀՀ զինված ուժերում, նախընտրում էր լեռնային կյանքը, ոչ օֆիսայինը. «Ես առանց ինքնաթիռի օդաչու եմ»: Մեծ ներդրում է ունեցել բանակաշինության մեջ, 2018-ին ստացել է մայորի կոչում: Զոհվել է Հադրութում 2020 թ. հոկտեմբերի 18-ին, ՀՊԹ, Նգպֆ:

34 Խաչատրյան Մարատ, պահեստազորային սպա, լեյտենանտ, ապրիլյան պատերազմի մասնակից, Ջրականում 30 հոգանոց տանկային դասակի հրամանատար: Զոհվել է անօդաչուի հարվածից 2020 թ. հոկտեմբերի 5-ին, ՀՊԹ,Նգպֆ:

35 Նիկոլյան Հարություն, ՀՊՄՀ-ի պատմության ֆակուլտետի ուսանող, զոհվեց 2020 թ. նոյեմբերի 3-ին Կարմիր Շուկայում, ՀՊԹ, Նգպֆ, № 6252:

36 Դավթյան Գրիգոր, ՀՊԹ, Նգպֆ:

37 Թադևոսյան Ա., Պատերազմը մասնակիցների պատմություններում. Երևան, 2022, էջ 9:

38 https://www.youtube.com/watch?v=1k2kvWkgiZk.մուտք 11.12.2022:

39 «Որդուս» ՀԿ/Vordus NGO/, Ֆրիտա Ներսես Մկրտիչ, https://www.facebook.com/vordusngo, հասանելի է 02.06. 23:

Օգտագործված Գրականություն

Բալայան Վ., Արցախի պատմություն, հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011

Բալայան Վ., Լեռնային Ղարաբաղ, պատմական անցյալն ու ներկան, Երևան, 2009

Գրիգորյան Ա., Բաղդասարյան Բ, Հայրենիքին նվիրված ծառայելու պատրաստակամությամբ, Երևան, «Ոսկան Երևանցի» 2018

Թադևոսյան Ա., Պատերազմը մասնակիցների պատմություններում. մարդաբանական հետազոտություն, Երևան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022

«Կրթություն», շաբաթաթերթ, թիվ 48-49, Երևան, 02.12. 2020

Кизиранц Г., Небесный солдат, Ереван, 2022

ՀՊԹ (Հայաստանի պատմության թանգարան), Նգպֆ (նորագույն պատմության ֆոնդ) գ/գ 19824, բ/մ 6239-6240, գ/գ 19825, բ/մ6242, գ/գ 19826, բ/մ6249-6251, գ/գ 19827, բ/մ6252-6253, գ/գ 19828, բ/մ6254-6258

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ, Երևան, 12 մայիս 2021

Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ. Երևան, 2013

Փաշինյան Ն., ՀՀ վարչապետ, ԱԺ 2020 սեպտեմբերի 27, https://ampop.am/speech-by-prime-minister-nikol-pashinyan-at-national-assembly-september-27/

https.//www.youtube.com/watch?v=1k2kvWkgiZk. {դիտվել է 10.06. 2023

«Հավերժի ճամփորդներ...անավարտ երազանքներ» ծրագրի իրականացումը ՀՊԹ-ում հնարավոր է դարձել Հայկական ընդհանուր բարեգործական միության (ՀԲԸՄ) դրամաշնորհի շնորհիվ.

...Զարթի՛ր, լաս

Մովսէս Հերկելեան
Արվեստաբան, արվեստաբանության դոկտոր

2023 թ. դեկտեմբերի 13-ին կլրանա Մուշեղ Գալշոեանի ծննդեան 90-ամեակը

Կարմրել են ծաղիկ ու սէզ
Քո արեան տաք շողքից,
Պառկել ես դու ֆիդայու պէս
Հրացանը կողքիդ...

Վահագն Դաւթեան

Երևան, Բաղրամեան փող., Հոկ. 1980

Սիրելի՛ ընթերցող,

համաձայն մեր ընկերական աւանդութեան՝ այդ օր ևս հաւաքուած էինք Վարուժան Խտըշեանի բնակարանը ըմբոշխնելու համար անցնող շաբաթուայ մեր որսորդական արշաւի արդիւնքը: Ունէինք գանատահայ գաղափարակից հիւրեր: Լևոն և Սիմոն Հասըրճեան եղբայրները, Գալուստ Պապեան, Սօսի և Սոնա Յովհաննիսեան երկու տիկիններ: Բացի Վարուժան Խտըշեանէն, Մարտիկ Պոյաճեանէն ու Ժան Ֆարրայէն՝ ներկայ էին նաև Սօս Սարգսեանը, Մուշեղ Գալշոեանն ու այդ օրերու ընկերուհիս՝ դերասանուհի Յասմիկ Տէր-Կարապետեանը, որ Գոհարիկի, Մարինէի և Զոյայի հետ ինք ևս մասնակցած էր անցնող շաբաթուայ որսորդական արշաւին: Զրոյցը կ՚ընթանար գանատահայութեան, գրականութեան և ապա մի՛ զարմանաք, եթէ ըսեմ՝ որսորդութեան ու զէնքի կարեւորութեան շուրջ: Սօսը փորձեց եզրակացնել.

— *Որսորդը պատրաստ զինուոր է....*

Իսկ Մուշեղը տեղեկացուց.

— *Ես նոր հրացան եմ առել ոչ թէ նրա համար, որ որսորդութիւնը շատ եմ սիրում, այլ նրա համար, որ կրակել իմանամ: Իւրաքանչիւր հայ տղամարդ պէտք է իր զէնքն ունենայ... ու կրակել իմանայ:*

Իբրև համաձայնութեան նշան ու գնահատանք Մուշեղի խօսքին՝ գանատահայ տղաքը սկսան «Զարթի՚ր, լաս» երգը երգել...: Կարծես թէ Մուշեղը այդ երգին կը սպասէր. շտկուեցաւ, սիկարէթը մարեց ու խանդավառուած՝ ինքն ալ միացաւ խմբերգին: Ապա երգի աւարտին բաժակը բարձրացնելով՝ ըսաւ.

— *Ուրախ եմ, որ մինչև իսկ Գանատայում էլ են երգում «Զարթի՚ր, լաս, մոնիմ քեզի»: Ես եմ յայտնաբերել ու տարածել այս երգը...: Աղջկե՛րք, տղե՛րք, ուրախ եմ նաև նրա համար, որ այսօր ես և Սօսը ժամադրուել էինք «մետրոյի» մօտ: Մետրո կառուցելն էլ քաջութիւն է: Եկե՛ք խմենք հայ բազկի ուժի կենացը, որ կռուի ժամանակ այն օգտագործի թշնամու դէմ, իսկ խաղաղ ժամանակ էլ հայրենիքը շէնացնի:*

Սօսը իր հերթին խանդավառուելով՝ առաջարկեց.

— *Մուշեղ ջան, ուրեմն հենց վաղը գնում ենք որսի, քանի հրացան ունես արդէն, դու էլ կը գաս մեզ հետ... Եղէգնաձոր:*

Մուշեղը բացատրեց, որ ինք արդէն իսկ խօսք տուած է ընկերներուն, որպէսզի երթան Կաթնաղբիւրի մօտերքը՝ հրացանը փորձելու..., միաժամանակ խոստացաւ, որ միւս կիրակի կը միանայ մեզ Սևանի հանդիպակաց կողմը, Գեղամայ լեռներուն վրայ՝ վայրի աղաւնի և կաքաւ որսալու:

Յաջորդ օրը մենք՝Վարուժան Խտըշեանը, Պօղոս Գասապեանը, Մարտիկ Պոյաճեանը, ինչպէս նաև Սօս Սարգսեանն ու Ռազմիկ Դաւոյեանը մեկնեցանք Եղէգնաձոր: Միւս օրը երեկոյեան վերադարձանք ու որոշեցինք, որ չորեքշաբթի գիշեր դարձեալ հաւաքուինք Վարուժանի մօտ աւելի շատ հիւրերով, որովհետև առատ որս բերած էինք մեզ հետ: Այդ օր ներկայ պիտի ըլլային գեղանկարիչներ Յակոբ Յակոբեանն ու Արտաշէս Յունանեանը, գրողներ Մուշեղ Գալշոեանն ու Ռազմիկ Դաւոյեանը, դերասաններ Լեւոն Թուխիկեանն ու Գոյժ Մանուկեանը, դերասանուհիներ Թամար Յովհաննիսեանն ու Յասմիկ Տէր-Կարապետեանը, երաժիշտներ Գէորգ Յունանեանն ու Ռուբէն Հախվերտեանը և այլն: Ի դէպ, Գէորգը միշտ ջութակով կու գար, երբ հայրը՝ Արտաշէսը, երգէր, ինք կը նուագակցէր անոր: Իսկ Ռուբիկը, թէև այն ատեն



Մուշեղ Գալշոեան

ճանչցուած չէր իբրև երգիչ (մասնագիտութեամբ բեմադրիչ էր), սակայն կիթառով կու գար ու տեղւոյն վրայ երգեր կը յօրինէր ու կ'երգէր: Եթէ յաջորդող օրերուն իրմէ խնդրէինք նոյն երգը անգամ մը ևս երգէր, չէր յիշեր....: Այնպէս որ, այդ չարաբաստիկ Զորեքշաբթին նախապատրաստուած էինք լաւ «քէֆ» ընելու: Ես պարտականութիւն ունէի քանի մը հոգիի յիշեցնելու, որոնց շարքին նաև Սօսին և Մուշեղին: Երբ Սօսին զանգեցի, ընկալուչն իր ուստրը՝ Անուշիկը, վերցուց և ըսաւ.

— *Հայրս Թալինում է, Մուշեղի մօտ...*

Զարմացած՝ ըսի.

— *Բայց Անուշի՛կ, այսօր մեր մօտ պիտի գային, ինչ գործ ունեն Թալինում...*

Անուշիկն իմ զարմանքիս վրայ աւելի զարմացած՝ ըսաւ.

— *Լուր չունե՞ս, Մուշեղը արկածի հետևանքով վիրաւորուել է... այժմ հիւանդանոցում է գտնվում...*

Ես լռեցի, Անուշիկը շարունակեց.

— *Որսորդական հրացանով ինքն իրեն է խփել... Կիրակի օր...*

Անմիջապէս շտապեցի մեր հաւաքավայրը՝ Բաղրամեանի վրայ... ներս մտայ, ընկերներս՝ Վարուժը երկու ձեռքով խմիչքի բաժակը կը տրորէր, Պօղոսը շրթունքները կը կրծոտէր ու բռունցքը սեղմած՝ հայեացքը սեւեռած էր պատուհանէն դուրս... : Մարտիկն ու Ժանոն մռայլ նայուածքով իրարու նայեցան, Ժանոն հարցուց.

— *Լուր ունի՞...*

Առանց պատասխանի սպասելու՝ ըսի.

— *Այո՛, լուր ունիմ:*

— *Ո՛չ, լուր չունիս,* —շեշտեց Մարտիկը,— *Անուշիկը նոր հեռաձայնեց և ամէն բան չէ ըսած քեզի...*

... Առաստաղը սկսաւ պտտիլ ու կարծես թէ փուլ պիտի գար... ակամայ անկողնին նստայ... Պօղոսը ջուր բերաւ... լռութիւնը երկար տևեց ու պահը խիստ ճնշիչ դարձաւ... ի վերջոյ ուժերս հաւաքեցի ու ըսի.

— *Չէ՞ք կարծեր, որ հարակաւոր է Կաթնաղբիւր մեկնիլ.*

Պօղոսը ընդմիջեց.

— Արդէն անիմաստ է... հոս պիտի բերեն:

Ամէն ինչ անսպասելի էր ու ահաւոր... Վարուժն աչքի թարթումով օդին ցոյց տուաւ... Պօղոսը շիշը երկարեց Վարուժին, իսկ Մարտիկն ու Ժանոն խոհանոց մտան՝ սուրճ պատրաստելու...: Կացութիւնն այնքան լարուած էր ու ճնշիչ, որ կարծէք թէ օդին անհրաժեշտ կը թուէր ըլլալ... այդ պահուն: Մինչ մենք իրարու երես կը նայէինք՝ շուարած, յանկարծ Յունանեանն ու Գէորգը ուրախ-զուարթ ներս մտան ջութակի հետ... երբ ուզեցին իմանալ մեր ամպամած հայեացքներուն պատճառը, Մարտիկը ամենայն դաժանութեամբ ճշմարտութիւնն ըսաւ...: Արտաշէսը կարծես շանթահար եղաւ...:

Նոյն գիշերն իսկ հետևեալ ձևով տարածուեցաւ Մուշեղի մահուան գոյժը:

Կիրակի առաւօտ, երբ մենք մեկնած էինք արդէն Եղեգնաձոր, Մուշեղի ընկերները կանուխ առաւօտեան կու գան զինք որսի տանելու, սակայն ան կ'ըսէ.

— *Վատ երազ եմ տեսել... եղբօրս տունը վառում էր...: Ուզում եմ Թալին գնալ նրա մօտ:*

Կերթան Թալին ու կը տեսնեն, որ եղբօր հետ ամէն ինչ բնական է ու հանգիստ: Խորոված կը պատրաստեն ու կ'ուրախանան...: Ճաշէն ետք գիւղէն դուրս կ'ելլեն ու հրացանը փորձելէ ետք ծառի մը շուքին կը տեղաւորուին՝ հանգստանալու: Մուշեղը նստած քարի մը՝ հրացանը քովը կը դնէ ու սիկարէթ մը կը վառէ: Ծխելէ ետք, երբ ոտքի պիտի ելլէ, հրացանը կը վերցնէ՝ խողովակը իր կողմը դարձուցած...: Պատահաբար չարաբաստիկ ճիւղ մը մտած կ'ըլլայ ձգանին արանքը ու քաշելու ատեն զէնքը կը պայթի, ու փամփուշտին կապարները ամբողջութեամբ կը լեցուին ձախ կուրծքը...: Երկու օր Թալինի հիւանդանոցը մնալէ ետք ներքին արիւնահոսութեան հետևանքով կը մահանայ...: Սօսը երբ եկաւ ու պատմեց եղելութիւնը, ինք ևս հաւատացած էր այս խորհրդաւոր ու անհեթեթ պատմութեան:

Յուղարկաւորութեան օրը Գրողներու միութեան տունն էինք: Մուշեղը ներսը հանգիստ կը ննջէր: Ինծի թուաց, թէ այդ պահուն ամբողջ հայ ժողովուրդը հոն էր: Ի՞նչ մեղքս պահեմ, ներս մտնելու «քաջութիւնը» չունեցայ: Երբ դրան դիմաց շուարած կը մտածէի՝ երթա՞մ Կաթնաղբիւր, թէ ոչ, յանկարծ դիմացէն Թամարը (Յովհաննիսեան) մօտեցաւ, խնաւ ու միաժամանակ զայրալից աչքերով փաթթուեցաւ ինծի ու ըսաւ.

ձախից աջ՝ Մովսէս Հերկելեան, Սոս Սարգսեան, Մուշեղ Գալշոեան

— Մովսէս ջան, գնանք Կաթնաղբիւր ու մի լաւ լացենք, սիրտս լացել է ուզում:

— Բայց Թամար, երէկ գիշեր ձեր տանը հօրդ (Հրաչեայ Յովհաննիսեանի), Յարութի (Մովսիսեան) և Յասմիկի (Տէր-Կարապետեան) ներկայութեան ուզում էիր այստեղ գալ՝ տխրելու..., իսկ հիմա պնդում ես, որ Կաթնաղբիւր գնանք լացելու համար:

— Այո՛, Մովսէս ջան, այո՛, տխրելը միշտ կայ ու կայ, սիրտս լացել է ուզում... գնանք...:

Գացինք... : Ինքնաշարժներու շարանին սկիզբն ու վերջը չէր երևեր: Ճանապարհին իւրաքանչիւր գիւղի մօտ, խճուղիի երկայնքին շրջանի աշակերտներն ու ժողովուրդը ծաղիկներով կը դիմաւորէին Մուշեղին՝ աւելի ևս շեշտելու ու խորացնելու յուղարկաւորներու վիշտը: Երբ գիւղին մօտեցանք, հեռուէն մեզ դիմաւորեց Մուշեղի ձայնը, որ գնահատականը կու տար Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» գիրքի, ուր կ'եզրակացնէր. «***Պայթող աղբիւրի հրաշքը հայ ֆիտայիներն էին»:***

Շնորհիւ Թամարի «աներեսութեան» ու համարձակութեան մենք, զիրար գրկած, բաւականին մօտիկ կանգնած էինք Մուշեղին:

Շոնդալից դամբանականներ խօսեցան կարգ մը գրողներ ու իր ընկերներէն ոմանք: Յատկանշական էին Վահագն Դաւթեանի արտասանած բանաստեղծութիւնն ու յատկապէս Սիլվա Կապուտիկեանի խիզախ ու գօտեպնդիչ խօսքը: Եթէ ուրիշներ Մուշեղի կողքին կը յիշէին նաև Սևակն ու Մինասը, ապա Կապուտիկեանը չվարանեցաւ Մուշեղին դասելու Գէորգ Չաւուշի, Հրայր Դժոխքի, Մուրատի, Սերոբ Աղբիւրի, Փեթարա Մանուկի, Սպաղանաց Մակարի և այլոց շարքին: Երբ ցրուելու պահը մօտեցաւ ու առյաւէտ պիտի բաժնուէինք Մուշեղէն, յանկարծ չդիմացայ ու բարձրաձայն սկսայ հեկեկալ...: Թամարը երկու ձեռքերով ցնցեց զիս ու արնակալած աչքերով ուղիղ աչքերուս նայելով՝ ըսաւ.

— Դու մուսալեռցի ես ու դաշնակցական... քեզ չի սազում լաց լինել: Ես կին եմ, ինձ սազում է: Դու տղամարդ ես... ուշքի եկ ու ձենդ կտրի՛... ամօթ է... տես՝ սասունցիք ո՞նց են ճանապարհում Մուշեղին...:

Ես զգաստութեան եկայ, աչքերս սրբեցի, հարազատի նման գրկեցի Թամարին ու աւելցուցի.

— Դու ճիշդ ես, մեր պապերը ասում էին. ***«Հերոսներու գերեզմանին վրայ արցունք չեն թափում, այլ կ'երդնուն՝ նրանց գործը շարունակելու...»***

Հայ ֆիտայիներու հանդէպ սէր ու ակնածանք ունեցող իմ հաւատարիմ ընթեցող, Մուշեղին հողին յանձնեցինք ***ֆիտայու նման՝ հրացանը կողքին***:

* * *

Ամիսներ ետք, երբ մենք նստած էինք Վարուժի մօտ... դարձեալ օղիի բաժակին շուրջ, առիթէն օգտուելով՝ հարց տուի.

— Սոս ջան, երբ հիւանդանոց գնացիր, Մուշեղի վէրքը տեսա՞ր:

— Այո՛, ահաւոր էր...

— Բա՞ց վիճակում, թէ՞ փակ.

— Փակ, վիրակապը վրան՝ ամբողջութեամբ արիւնոտած: Չլինի՞, թէ դու էլ ես կասկածում... :

— Սոս ջան,այստեղ մի անտրամաբանական հարց կայ, որ լուրջ կասկած է յարուցում դէպքի շուրջ:

— Ուշադիր լսում եմ...

— Նոյնիսկ եթէ Մուշեղը ձախ ձեռքով է վերցրել ու անխոհեմաբար դէպի իր կողմն է քաշել հրացանի փողը, ապա վէրքը պէտք է որ լինէր կեռասի հատիկի մը չափ փոքր, ոչ աւել: Իսկ եթէ վէրքը խնձորի մը չափ կամ աւել էր, ապա նշանակում է, որ առնուազն երկու կամ երեք մեթր հեռաւորութիւնից են կրակել իր վրայ:

— Վէրքը խնձորից էլ աւելի մեծ պիտի որ լինէր,— բժիշկն էր ասում: Բայց իր ընկերները հաւատում էին, որ եղածն արկած է... քո ասածով դա ծրագրուած սպանութիւն է... բնաւ պիտի չուզէի, որ... դա այդպէս լինէր:

— Այո՛, բնաւ ցանկալի չէ, որ դա այդպէս լինէր, սակայն բոլորս էլ որսորդներ ենք և ինչ-որ չափով նաև՝ զէնքի մարդ: Այս հարցն արդէն իսկ քննարկել ենք ու եզրակացրել, որ դէպքի ներկայացուած ձևը համոզիչ չէ: Մեր ունեցած զէնքի փորձառութիւնը դա է թելադրում...:

— Դու համոզուա՞ծ ես, որ եղածը ծրագրուած սպանութիւն է:

— Ես համոզուած եմ, որ մեզի ներկայացուած պատմութիւնը խիստ կասկածելի է ու անհեթեթ այնպէս, ինչպէս Սևակի կամ Մինասի մահերը: Գուցէ իր ընկերներից մէկնումէկը սխալմամբ կրակել է իր վրայ, ու չեն ուզեցել բացայայտել... ճշմարտութիւնը:

— Գուցէ... դա էլ է տարբերակ, բայց դժուար թէ... :

Իմ կասկածամի՛տ ընթերցող, արդար ըլլալու համար այն ատեն ես վստահ չէի, որ ատիկա ծրագրուած սպանութիւն է: Սակայն, երբ տարիներ ետք զրոյց ունեցայ հայրենի յայտնի գեղանկարիչներէն Էդիկ

Բերդեանի հետ ու հարց տուի իր ուսուցիչներու մասին, ան առաջին հերթին յիշեց Վանիկ Համբարձումեանին ու ըսաւ.

— Հայրենասէր, խիզախ ու տաղանդաւոր արուեստագէտ էր, նա ինձ շատ էր օգնում դեռևս երիտասարդ տարիքին, 1965-ին նրան էլ սպանեցին ճիշդ այնպէս, ինչպէս Մուշեղ Գալշոյեանին:

— Չեմ հասկանում:

— Այո՛, նրա համար էլ ասացին, որ ինքն իրան է խփել որսի հրացանով, և նոյն պատմութիւնն էին պատմում իր մասին: Իբրև թէ հրացանի խողովակից բռնած դէպի իրան է քաշել, ու զէնքը պայթել է չարաբաստիկ շիւղի մը հետևանքով: Եթէ Գալշոյեանը անփորձ էր, ապա Վանիկը վարպետ որսորդ էր, այդպիսի անփոհեմութիւն չէր անի: Այն ատեն մենք կասկածում էինք, իհարկէ, սակայն, երբ Գալշոյեանի պատմութիւնը լսեցի, արդէն վստահ էի, որ երկուսն էլ յօրինուած են: Երբ Գալշոյանի դէպքը պատահեց, ես ասում էի. «Մի՛ հաւատացէք, նրան էլ սպանել են ճիշդ

Ծաղկաձոր, Կեչառիսի վանք, դեկտեմբեր 1980 թ.

այնպէս, ինչպէս Վանիկին»: *Սակայն լսող չկար...:*

Սիրելի՛ ընթերցող, Բերդեանի տուած վկայութենէն ետք եզրակացութիւնը կը վստահիմ ձեր խելամիտ ու արդար դատողութեանը:

* * *

Իսկ հիմա, իմ գրասէր ու բանիմա՛ց ընթերցող, ինծի վերապահուած չէ Գալշոյեանի գրականութիւնը գնահատել, վերլուծել ու մեկնաբանել: Ձայն արդէն իսկ արժևորած են մեր ամենայայտնի գրականագէտներն ու գրողները, ինչպէս՝ Վահէ Օշական, Համօ Սահեան, Ալ. Թոփչեան, Ն. Դիմաքսեան (Վազգէն Էթիէմեզեան), Հրանդ Թամրազեան, Պերճ Զէյթունցեան, Յակոբ Կարապենց, Հէնրիկ Էդոյեան, Ալպերթ Կոստանդեան և դեռևս շատ-շատեր: Ես անոնցմէ աւելի լաւ պիտի չկրնայի ներկայացնել ու գնահատել իր գրական վաստակը, որ տակաւին իր մասնագիտական ուսումնասիրողներուն կը սպասէ...: Սակայն թերի պիտի մնար այս յուշագրութիւնը, եթէ չներկայացնէի նաև իր «հոգեհանգստեան արարողութիւնը», որ կարծէք թէ իւրայատուկ խորհուրդ ու ոգեղէն իմաստ կը պարունակէ իր մէջ: Հակառակ անոր, որ գրած ու որոշ առիթներով պատմած եմ այս դէպքը, սակայն իր շահեկանութեան համար չեմ վարանիր անգամ մը ևս հրատարակելու այն՝ որոշ յապաւումներով ու թեթև հպումներով:

<u>Ծաղկաձոր, 1980, Դեկտեմբեր</u>

Այդ օր հայրենի ամենաբարձր կարգի մտաւորականութիւնը, հարիւր յիսունէ աւելի կարկառուն դէմքեր հաւաքուած էինք Մերկելեանի անուան Ծաղկաձորի հանգստավայրը: Միակ սփիւռքահայը ես էի իրենց մէջ: Կազմակերպութեամբ «Թարգմանչաց տօներ» «կիսագաղտնի» միութեան այդ տարիներուն մշակութային անուան տակ ազգային-քաղաքական բնոյթի ամենամեայ «հաւաքներ» տեղի կ'ունենային Ծաղկաձորի մէջ, որուն մնայուն մասնակիցներէն էր նաև Մուշեղ Գալշոյեանը: Անոր «խորհրդաւոր» մահուան ցաւը տակաւին խորն էր, ու վէրքը՝ բաց: Առաջարկուեցաւ կէսգիշերին Կեչառիսի վանքը իջնել խմբովին՝ Մուշեղի հոգիին մոմ վառելու և հոգեհանգստեան պաշտօն կատարելու... մանաւանդ որ այդ օր մեզ հետ էին նաև Էջմիածնէն երկու հոգևոր հայրեր՝ յատուկ Վազգէն Վեհափառի կողմէ ղրկուած: Իսկ ես, նկատի առնելով իմ յուզուող ըլլալու տկարութիւնս, կը տատամսէի միանալու խումբին: Սակայն Աննա Պետրոսեանը խրախուսեց զիս.

— Գիտեմ՝ ընկերդ էր, դժուար է, սակայն վստահ եղիր, որ կը թեթևանաս:

Այո՛, Մուշեղի հետ մտերիմ ընկերներ էինք, որուն կը վստահէի ամէն ինչ: Թէ՛ «Բագին» և թէ՛ ազգային-յեղափոխական բնոյթի գրականութիւն կը տրամադրէի անոր, որոնց շարքին նաև՝ Սուրբ Գիրքը:

Ձմեռ էր: Կէսգիշեր ու ցուրտ: Լուսնի լոյսի հովանու ներքոյ կ'իջնէինք անխօս ու յամրաքայլ: Երբ հասանք, իրարու սպասեցինք ու միասնաբար մտանք եկեղեցի, որուն քանդուած գմբեթէն լուսինը լուսեղէն կալ մը ու-

ռուագծած էր սալայատակին: Բնազդաբար կիսալուսնի ձևով շրջանակ մը կազմեցինք, ուր առաջին շարքի վրայ կեցած էին Էջմիածնէն երկու հոգևորականներ, իսկ անոնց կողքին Լուսինէ Զաքարեանն ու կողակիցը՝ Խորէն Պալեանը:

Բաց գմբեթէն երևացող երկինքը պայծառ էր: Աստղերը շողարձակ մոմերու նման կը դիմաւորէին ու կը մեծարէին լուսնեակին, որ երկինքէն կախուած՝ կը հսկէր մեր վրայ...: Վարդապետները սկսան իրենց աղօթքը հնչեցնել, Կեչառիսի վանքը վերակենդանացաւ, կարծէք, ու մենք կտրուած միջավայրէն ու իրարմէ՝ տեղափոխուեցանք կախարդական ոլորտներ...: Երբ հոգեհանգստեան արարողութիւնն աւարտած կը թուէր ըլլալ, ու քանի մը վայրկեան սառած լռութիւն տիրեց, յանկարծ աղաւնիներ սկսան խուճապահար թռիլ կիսափուլ տաճարի տարբեր անկիւններէն ու ծերպերէն, բարձրացան երկինք ու ստուարաթիւ երամ մը կազմելէ ու քանի մը անգամ մաղուելէ ետք մեր գլխավերևը... անհետացան միջոցին մէջ: Շնորհիւ Խորէնի ու Լուսինէի պահը կը լիանար «*Աւո՛ւն- աւո՛ւն*»ի, «*Խորհուրդ խորին*»ի ու «*Սուրբ-սուրբ*»ի միսթիկ երանգներով... : Ակամայ կը յիշեմ Մեծարենցին, ու *«հոգիս քիչ-քիչ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ...»* : Այն տպաւորութիւնն ունէի, որ Մուշեղը մեզ հետ էր, մեր կողքին... հոն ան ներկայ էր այդ պահուն...:

Իմ հաւատացեալ ընթերցող, այնքան ալ դիւրին չէ նկարագրել նմանօրինակ ոգեղէն վիճակ մը, ուր տեսողութիւնը կանգ կ'առնէ, ու... յաւիտենականութեան զգացողութիւնը կը պարուրէ քեզ...:

Թէև կը կարծուէր, թէ արարողութիւնն աւարտած է, սակայն բոլորը հոն էին, ու տեղէն շարժող չկար... ամէն մարդ ինչ-որ բանի կը սպասէր, կարծէք: Լուսինէն անխօս քայլ մը առաջ անցաւ, ջերմեռանդ քրմուհիի մը հանգոյն ձեռքերը բազկատարած տարածեց դէպի լիալուսին ու սկսաւ. «*Լո՛յս... արարի՛չ լուսոյ...*»... : Այս անգամ ան չէր երգեր և ոչ ալ կ'աղօթէր, այլ պարզապէս ուղղակիօրէն Աստուծոյ հետ զրոյցի բռնուած կը թուէր ըլլալ: Պահն աւելի ևս լարուեցաւ ու նուիրագործուեցաւ, կարծէք...: Երբ Լուսինէն կ'աւարտէր իր լուսեղէն հնչիւնները, յանկարծ չես գիտեր ուրկէ (ինծի՞ թուաց, թէ ուղղակի խորանէն) սպիտակ աղաւնի մը թռաւ, քանի մը անգամ մեր գլխավերևը պտոյտ կատարելէ ետք երկինք բարձրացաւ ու հոն՝ երկնակամարին վրայ ևս, քանի մը անգամ թևածելէ ետք դիմեց ուղիղ դէպի լուսնկան...: Ներկաներս ապշած էինք ու հիացած: Ի՞նչ գործ ունէր այդ սպիտակ աղաւնին արարողութեան ողջ ընթացքին...: Եթէ խօսքը պարզապէս փախուստի մասին էր, ապա ինչո՞ւ միւսներուն հետ չթռաւ:

Երբ դուրս ելանք վանքին բակը, ոմանք սկսան Սուրբ Հոգիի հետ համեմատել զայն, ուրիշներ ըսին՝ Մուշեղ Գալշոյեանի հոգին կը խորհրդանշէ, իսկ ոմանք ալ գեղեցիկ զուգադիպութեան մը կը վերագրէին... :

Բոլոր պարագաներուն ես խորապէս տպաւորուած ու զգացուած էի: Աննան մօտեցաւ ու թևս մտնելով՝ ըսաւ.

— *Գո՞հ ես, որ եկար...*

— *Իհարկէ, իսկապէս թեթևացած կը զգամ... իսկ Լուսինէի հմայքը ուրիշ էր այսօր:*

— *Այո՛, Խորէնին ընկերակցութեամբ. երկոքն ալ տարբեր տրամադրութեան ու ոլորտներու մէջ էին...*

— *Յաւուր պատշաճի արարողութիւն մը չեղաւ... մինչդեռ Մուշեղի «տաո ու բանին» համարժէք գեղարուեստական «աղօթք» մը եղաւ, որուն հոգեմտաւոր «վայելքը» դժուար թէ անգամ մը ևս կրկնուի... :*

Իմ հաւատարիմ ընթերցող,

յաջորդ օրը նախաճաշի ընթացքին ու անկէ ետք խօսակցութեան նիւթը Մուշեղն էր, ներկաներէն իւրաքանչիւրը յուշ մը, դրուագ մը կը պատմէր կամ կարծիք մը կը յայտնէր անոր մասին: Անոնք, որոնք ներկայ չէին, նախ զղջացած կը թուէին ըլլալ և ապա կ'ուզէին իմանալ ամէն մանրամասնութիւն, յատկապէս աղաւնիներուն վերաբերող բաժինները...:

Այո՛, Մուշեղը սիրուած ու գնահատուած էր ազգին կողմէ: Եւ այս մէկը պատահական չէր: Պատահական չէր, որովհետև ան կու գար իր ժողովուրդի արմատներէն ու կը բաշխուէր ազգային ու համամարդկային տարածքներու վրայ՝ իբրև արժանաւոր շառաւիղն իր սասունցի պապերուն: Ան յաճախ կը կրկնէր. *«Նոյնիսկ եթէ խորհրդային կաշկանդումները գոյութիւն չունենային, դարձեալ ես այսպէս պիտի գրէի»* ու կ'աւելցնէր. *«Հարկաւոր է նոյն կէտին կրակել, մինչև որ թիրախը ծակի կամ փշրուի»:* Ան իր բացառիկ տաղանդով ու ամբողջական նուիրումով շարունակեց *նոյն կէտին կրակել*, սակայն մինչև որ «թիրախը փշրուէր», զինք հեռացուցին մեզմէ՝ «**նոյն կէտին կրակելու**» պատգամը կտակելով մեզ՝ բոլորիս... :

Մուշե՛ղ ջան,

«Թարգմանչաց տօներու» սերունդը շարունակեց *կրակել նոյն կէտին*, թիրախը փշրուեցաւ, ու մենք անկախութիւն յայտարարեցինք: Սակայն այսօր այդ չարաբաստիկ «թիրախները» այնքան շատ են ու բազմազան, որ մենք ազգովին փշրուելու վտանգին տակ ենք: Չկաս դուն, չկան նոյն կէտին կրակող ընկերներդ շատ-շատեր, սակայն կան պատգամներուդ յանձնառու և *նոյն կէտին կրակող* բազում հայորդիներ, որոնք ինչպէս որ Քրիստոսը մաքրագործեց իր Հօր Սրբազան Տաճարը, այնպէս ալ իրենք ուխտած են վերասազերծել մեր պապենական հայրենիքը եղինջներէն, տատասկներէն, մակաբոյծներէն ու մանաւանդ... առնէտներէն... : ■

Հայ «Նեմեսիս»-ը, հետախոյզ առասպելն ու ազգային-պետական գործիչը - Հրաչ Փափազեան (մաս 3)

Աւօ Գաթրճեան
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս



Հին ու նոր գրչակներ, լուրջ ու խորհրդաւոր դէմքեր ինչեր ըսես չգրեցին Հրաչ Փափազեանին մասին: Խեղաթիւրուած տեղեկանքներ, ապատեղեկատուութիւն տարածող լուրեր, զրպարտանքներ, պարսաւանքներ, ստայօդ գրութիւններ եւ անվայել այլ խօսքեր, նոյնիսկ ծաղրանկարներ: Այլ խօսքով՝ սուտին ու կեղծիքին վրայ խարսխուած քարոզչութիւն ծաւալեցին:

Բոլոր տկարներուն զէնքը միշտ սուտն ու հայհոյութիւնն է եղած:

Հրաչ Փափազեանի դէմ ստայօդ քարոզչութիւն կատարած թերթերէն հոս կարելի է յիշել քանի մը հատը միայն, ինչպէս՝ «Սուրիա» (Հալէպ), «Երիտասարդ Հայաստան» (ԱՄՆ), «Լրաբեր» (Ամերիկայի համայնավար օրկան), «Յառաջ» շաբաթաթերթ (Պէյրութ) եւ այլն:

Այս եւ նոյնանման թերթերու, որոնք պորտակապով կապուած էին իրենց նոյն տիրոջ՝ իբրեւ ամէնէն ցայտուն եւ դիպուկ արտայայտութիւններու մասին, ու հակազդելու իմաստով հոս կը մէջբերենք Գահիրէի մէջ հրապարակուող «Յուսաբեր»-ի խմբագրականը, որ «Վերջամնացներէն, (Ընկ. Հրաչ Փափազեանի մահուան առիթով)» խորագրի տակ կը գրէր. «Յարգուած ու սիրուած էր ամէն տեղ, ուր ապրած ու գործած էր: Բայց զերծ չէր մնացած նաեւ բամբասանքէ ու չարախօսութենէ: Ինչեր չըսուեցան ու չգրուեցան իր մասին: Ատեն մը նոյնիսկ «սուրիական հայրենիքի դաւաճան» կամ դաւաճաններու ուղեկից կոչեցին զինք: Օդանաւով մինչեւ Անգարա ղրկեցին զինք՝ թուրք վարիչներուն հետ բանակցելու դեր մը վերագրելով իրեն:

«Այս բոլորին հանդէպ զարմանալիօրէն պաղարիւն ու անտարբեր, փորձն իսկ չէր ըրած հերքելու կամ ժխտելու այս չարամիտ ու չարաբարոյ վերագրումները: Իր դատախազը իր խիղճն էր, եւ ինք անպարտ էր խղճին առջեւ: Ասիկա գիտէր ինք, գիտէինք նաեւ մենք: Գիտէինք, որ մեր գաղափարական հակառակորդները ատեն-ատեն Անգարա կը ղրկէին ամերիկեան օդանաւով կամ բրիտ. ռազմանաւով Դրօն եւ Իփէկեանը, Հրաչ Փափազեանը եւ ուրիշներ:

«Մեր հանգուցեալ ընկերը Գահիրէ էր, երբ «լաւատեղեակ» թերթեր գրեցին, թէ ինչ-որ դաւաճանի հետ Անգարա գացած է՝ Մենտերէսի այցելութեան...: Երբ, հազիւ զսպելով գարշանքը, այս «լաւատեղեակ»-ներուն անասելի զրպարտանքը յայտնեցինք մեր ընկերոջ, անտարբեր ու պաղարիւն, Աստուծոյ արարածները լաւապէս ճանչցող, ան ըսաւ մեզի. «Այդ թերթերը կը հրատարակուին՝ նման բաներ գրելու համար: Կարեւորութիւն մի՛ տաք»:

Հետեւաբար, Հրաչ Փափազեան, հակառակ ամէն տեսակի դժուարութեան՝ կրցաւ յաղթահարել բոլոր խոչընդոտներն ու մարտահրաւէրները՝ իր հեռատես, զարմանալիօրէն սառնասիրտ, անտարբեր ու իմաստուն քաղաքականութեամբ:

Փափազեան անսահման սէր ունէր մանուկներու հանդէպ: Որեւէ ատեն աննկատ չէ առած զանոնք ու ուզած է գոհացնել անոնց անյագ հետաքրքրութիւնը:

Վերջին տարիներուն, նախքան Պէյրութ հաստատուիլը աւելի շատ Սուրիայէն դուրս եղած է, քան Սուրիա: Հակառակ յառաջացած տարիքին եւ խանգարուած առողջութեան՝ յաճախակի ճամբորդած է, հիւրանոցներ մնացած, տքնած է անտրտունջ: Ազգային իւրաքանչիւր յաջողութիւն մը մոռնալ տուած է անոր անձնական ցաւերն ու մտահոգութիւնները: Հիւանդութեան վերջին շրջանին մէկ բան ամէն ատեն մղձաւանջի պէս զինք կը զբաղեցներ, զինք կը տանջէր: Ան ալ հայութեան միութիւնն էր: Իր մօտ այցելողներուն միակ հասկնալի խօսքը, զոր կը կրկնէր. «Հայերը թող միանան, իրարմէ թող չբաժնուին»:

1957-ին Հրաչ Փափազեան կը փոխադրուի Պէյրութ, երբ անողոք հիւանդութիւնը սկսած էր արդէն գործել իր աւերը: Իր կեանքին վերջին ամիսները ծանր տառապանք մը կ՚ըլլան իրեն համար: Յետ երկարատեւ հիւանդութեան ան աչքերը կը փակէ Երեքշաբթի, 16 Օգոստոս 1960 թուականին, Լիբանանի այդ օրերուն հայաբնակ ամարանոցներէն Շթորայի մէջ: Խոր կսկիծի մատնելով այրին՝ Երանուհին եւ զաւակը՝ Վարդգէսը, հարազատները, ապա հայութիւնը, գաղափարակից ընկերները, սուրիացի արաբ ընկերներն ու բարեկամները:

«Արեւելք» օրաթերթը Չորեքշաբթի, 17 Օգոստոս 1960-ի իր թիւին առաջին էջով Հրաչ Փափազեանի մահուան լուրը՝ մեծատառ վերնագրով իր ընթերցողներուն այսպէս կը հաղորդէր. «ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԽՈՐ ՑԱՒՈՎ ԿԸ ԳՈՒԺԵՆՔ ՄԱՀԸ ԸՆԿ. ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆԻ»[1]:

Ընդհանուր ժողովի մասնակիցներու մէջ է Հրաչ Փափազեանը

Ապա, կը շարունակէ. «Երէկ գիշեր ստացանք հետեւեալ հեռագիրը Պէյրութէն.

««Ամենախոր կսկիծով կ'ողբանք մահը հանրային անխոնջ գործիչ եւ հաւատաւոր դաշնակցական ընկ. ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆԻ, որ տեղի ունեցաւ երէկ առաւօտ, յետ երկարատեւ հիւանդութեան»:

«Ընկ. Հրաչ Փափազեանի մահով հողին կու տանք հայ ժողովուրդի անզուգական զաւակներէն հանրային գործիչ եւ սուրիական խորհրդարանի երկար տարիներու անդամ, հաւատաւոր դաշնակցական մը ու Հայ Դատի ախոյաններէն մէկը: Ան երկար ատեն պահեց «Արեւելք»-ի արտօնատիրութիւնը:

«Ողբացեալ ընկերոջ գործին եւ ալեկոծ կեանքի մասին պիտի անդրադառնանք առանձին: Մինչ այդ յանուն մեր բոլոր ընկերներուն եւ բարեկամներուն կ'ոգեկոչենք քաղցր յիշատակը մեր անմոռանալի ընկերոջ:

«Հողը թեթեւ՝ սիրելի՛ ընկեր:

«Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը պիտի կատարուի վաղը, Հինգշաբթի, 19[2] Օգոստոսի, առաւօտեան ժամը 9:00-ին, Ս. Նշան եկեղեցին»[3]:

Հինգշաբթի, 18 Օգոստոսի, առաւօտեան ժամը 9:00-ին, Պէյրութի Ս. Նշան մայր եկեղեցւոյ մէջ ազգային յուղարկաւորութիւն կը կատարուի՝ նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Զարեհ Ա.-ի:

Արարողութիւններէ յետոյ խորհրդաստ դամբանական մը կը խօսի Վեհափառը՝ առաւելաբար ծանրանալով Հրաչ Փափազեանի ազգային գործունէութեան ցայտուն գիծերուն վրայ՝ իբրեւ հեռատես եւ խոհուն ղեկավար, անձնուրաց ազգային գործիչ եւ սիրուած ու յարգուած առաջնորդ: Երջանկայիշատակ Զարեհ Ա. Վեհափառը այսպէս կը սկսէր իր դամբանականը Հրաչ Փափազեանի դագաղին առջեւ. «Սգակի՛ր բարեկամներ, ծանր պարտականութիւն է ինծի համար այս եկեղեցիին մէջ խօսիլ դամբանականը մէկու մը, որ իր ամբողջ կեանքին տեւողութեան գիտակցաբար խուսափեցաւ իր մասին խօսիլ տալէ: Ծանր պարտականութիւն, որովհետեւ հանգուցեալ Փափազեանը եղաւ այնպիսի մեծութիւն մը մեր ազգին մէջ, որ իր մասին գաղափար յայտնելը կը վախնամ կարելի չըլլայ եւ պակսեցնէ իր բնական արժանիքները»[4]: Վեհափառը գլխաւոր կ'ընդգծէ Հրաչ Փափազեանի մօտ կիրքի ու քինախնդրութեան բացակայութիւնը, այլեւ անոր իրատեսութիւնը հայ կեանքի բոլոր երեւոյթներուն հանդէպ:

Եռագոյնով ծածկուած դագաղը յուղարկաւորներու հոծ բազմութեան մը շքերթով, մեծամասնութեամբ նախկին հալէպահայեր կ'ուղղուին Ֆըրն աշ-Շըպպեքի Ազգային գերեզմանատունը, որուն մատրան մէջ առաջին հերթին դամբանական կը խօսի մտաւորական, ազգային գործիչ Կարօ Գէորգեան՝ յանուն ՀՅԴ Բիւրոյին եւ կուսակցական մարմիններուն:

Իր դամբանականին մէջ Կարօ Գէորգեան հետեւեալ տողերը պիտի արտասանէր. «Ազգային գործիչի եւ քաղաքական մարդու իր բոլոր ընդունակութիւնները ի սպաս դրաւ ան հոն եւ տասնամեակներով գործեց ժողովուրդի ծոցին մէջ ժողովուրդին համար, թէ՛ իբրեւ ներկայացուցիչը իր պատկանած կուսակցութեան, թէ՛ իբրեւ ազգային մարմիններու ժողովական եւ թէ՛ իբրեւ պարզ անհատ մը, իբրեւ Հրաչ Փափազեան: Սիրուեցաւ եւ յարգուեցաւ ոչ միայն ազգային շրջանակներէ, այլեւ Սուրիոյ ղեկավարութենէն: Այդ յարգանքին ու սիրոյն արտայայտութիւնն ալ եղաւ իր ընտրութիւնը, երկու անգամ՝ իբրեւ սուրիական խորհրդարանի անդամ»[5]:

Յանուն Հ. Յ. Դաշնակցութեան Հրուանդանի[6] եւ Լեռնավայրի[7] Կեդրոնական կոմիտէներուն դամբանական կը կարդայ բանաստեղծ, հասարակական գործիչ Մուշեղ Իշխան, որ շատ սեղմ, այլ տպաւորիչ գիծերու մէջ կը ներկայացնէ Հրաչ Փափազեան մարդու ու ղեկավարի գլխաւոր արժանիքները՝ առաւելաբար ծանրանալով անոր խառնուածքին վրայ, ուր միտքը, հոգին ու կամքը գտած էին իրենց արդիւնաւոր ներդաշնակութիւնը: Մուշեղ Իշխան Հրաչ Փափազեանի մասին կը հաստատէ. «Ո՛չ գրչի մարդ էր ընկ. Հ. Փափազեան, ո՛չ բեմի, այլ իսկական ղեկավար մը,

աննկուն վարիչ մը, հեղինակաւոր կազմակերպիչ մը, որուն համար գործն էր էականը եւ գործին յաջողութեան մէջ կը փնտռէր հանրային ծառայութեան իմաստը»[8]:

Իշխան, անդրադառնալով Փափազեանի հեղինակութեան մասին, ընդգծած է՝ ըսելով. «Գաղտնիքը պէտք է փնտռել ընկեր Հրաչի բացառիկ խառնուածքին մէջ: Քիչ անգամ մարդու մը անձը այդքան գեղեցկօրէն իրարու կը միացնէ մտքի, սրտի եւ կամքի հաւասարազօր արժէքներ՝ ստեղծելու համար նկարագիրի այն հազուագիւտ ներդաշնակութիւնը, որ մեծ մարդու տիպարը կը յատկանշէ: Բոլոր անոնք, որ քիչ, թէ շատ մօտէն ճանչցած են զինք, պիտի վկայեն անպայման, որ հաւասարակշռութեան մարմնացումն իսկ էր ընկ. Հրաչ Փափազեան:

Որքան սառնարիւն դատողութեան մարդ, նոյնքան նուրբ եւ խորունկ զգացումներու տէր, ան գիտցաւ ամբողջ կեանքի ընթացքին ըլլալ հեռատես, վճռական, ուժեղ, բայց նոյն ատեն գերազանցօրէն մարդկային, պարկեշտ ու շիտակ»[9]:

Կարօ Գէորգեանի եւ Մուշեղ Իշխանի դամբանականներէն ետք Հրաչ Փափազեանի մարմինը ընդհանուր յուզումի եւ երկիւղած յարգանքի մէջ կը յանձնուի հողին:

Հրաչի մահուան գոյժը բնականաբար ցնցած էր ազգային, կուսակցական եւ սուրիական պետական աւագանին: Անոր մահուան յաջորդող օրերուն բազմաթիւ գործիչներ, արաբական եւ հայկական թերթեր մեծ բաժին տուին անոր մասին:

Տեղական մամուլը յատուկ լուսարձակի տակ կ՚առնէ ու կը ներբողէ Հրաչ Փափազեանի արժանիքները:

Այսպէս, օրինակ՝ «Աշ-Շեպապ» թերթը, որուն արտօնատիրոջ Պ. Մուհամմետ Թալասի սերտ բարեկամը եղած է Փափազեանը, անոր մահուան տխուր առիթով կը գրէ. «Ողբացեալը հայրենասէր, մեծ ղեկավար մըն էր, պայքարի ջահակիր, ազատագրութեան հերոս եւ մտերիմ բարեկամը Սաատ Ալլահ ալ-Ժապրիի: Ան պայքարեցաւ ֆրանսական գաղթարարութեան դէմ, մասնակցեցաւ առաջին ղեկավարներուն հետ Սուրիոյ ազատագրութեան սրբազան պայքարին: Ան իր թերթը ի սպաս դրաւ Սուրիոյ ազատագրութեան, ինքնակալութեան եւ անկախութեան դատին: Անոր կեանքը բեղուն գործունէութեամբ ու անսահման զոհողութիւններու շարք մը եղաւ»[10]:

Իսկ «ալ-Հաուատէս» թերթի արտօնատէր Հիւսէյն Շաապանի Հրաչ Փափազեանի մահուան լուրը տալէ յետոյ կը գրէ. «Հրաչ Փափազեան մեր հայ եղբայրներուն մեծ ղեկավարներէն մէկն էր: Բարձր զարգացումի տէր, արթուն եւ ուշիմ մեծ անձնաւորութիւն մը: Ան երկար տարիներ երեսփոխան եղաւ սուրիական խորհրդարանին մէջ: Հաւատարիմ եւ անձնուէր էր իր երկրորդ հայրենիքին՝ Սուրիոյ: Անձնական բարեկամն էր Սուրիոյ բոլոր կազմակերպութիւններու ղեկավար մեծ անձնաւորութեանց, որոնք կը յարգէին զինք, իր պայծառ գաղափարներուն, յստակ տեսակէտներուն, խոր անկեղծութեան, հաստատ ու աննկուն նկարագրին եւ օրինակելի պարկեշտութեան համար»[11]:

Այնուհետեւ «Պարզ աշ-Շիմալ» թերթը Հրաչ Փափազեանի մահազդը հրատարակելով՝ առանձին գրութեամբ մը կ՚անդրադառնայ անոր կեանքին եւ գործին:

Տեղական արաբերէն օրաթերթերէն «աթ-Թերպիէ» եւ «ալ-Ուաթան» գոհացած են՝ հաղորդելով Հրաչ Փափազեանի մահուան լուրը եւ արտատպելով մահազդը միայն: Լուրը հաղորդած է նաեւ Հալէպի հեռագրական գործակալութիւնը (Պետեւի Թէմմամ)[36]:

Միւս կողմէ՝ հայկական մամուլը Հրաչ Փափազեանի մահուան լուրը նախ՝ հաղորդեց, ապա՝ շուրջ 50 օրերու վրայ երկարող խմբագրականներով, վկայութիւններով, սրտի խօսքերով եւ այլ գրութիւններով անոր կեանքի, արժանիքներու մասին նիւթեր հրապարակեց:

Շաւարշ Միսաքեան Հրաչ Փափազեանի մահուան առիթով «Յառաջ» օրաթերթի մէջ՝ «ՅԱՌԱՋ» ստորագրութեամբ, «Օրուան խօսքը» ենթագլուխի տակ «Փոս մը եւս» խորագրով՝ Վահան Նաւասարդեանի կարեւոր մէկ բանաձեւումը մէջբերելով՝ կը գրէ. ««Հանրային կեանքի եւ մտաւոր անդաստանի մէջ բացուած փոսերը ո՛չ հառաչանքով կը փակուին, ո՛չ ալ արցունքով»» ընթացք կու տայ իր գրութեան՝ ըսելով. «Այդպէս պիտի գրենք այլեւս ամէն անգամ, որ հանրային դէմք մը անհետանայ՝ նոր պարապ մը ձգելով իր ետին:

«Այդպէս կը գրենք ուրեմն այսօր, երբ Հրաչ Փափազեան կ՚երթայ միանալու մեզմէ առայաւէտ բաժնուած մեծ ընկերներուն»[12]:

Շ. Միսաքեան, շարունակելով, կը հաստատէ. «Պարզ եւ համեստ, Հրաչ Փափազեան չէր սիրեր իր մասին խօսիլ: Իր բերնէն չէ, որ պիտի լսէինք այն պատասխանատու պաշտօնները, զորս ստանձնած էր եւ յաջողութեամբ գլուխ հանած: Ինք չէ, որ պիտի պատմէր այն դերը, զոր խաղացած է Ճեմալ Ազմիի եւ Պեհաէտտին Շաքիրի ահաբեկումներուն մէջ»[13]:

Իսկ Աթէնքի մէջ լոյս տեսնող «Ազատ օր» օրաթերթի «Խմբագրական նոթեր» խորագրի տակ խմբագիր Վազգէն Եսայեան «Հրաչ Փափազեան»-ով կը սկսի իր նոթերուն, հոն կը կարդանք. «Շաբաթ մը առաջ Պէյրութէն քաշուած հեռագիր մը գուժեց մահը մեր վեթերան ընկերներէն Հրաչ Փափազեանի:

«Քիչերուն ծանօթ է մեր ողբացեալ ընկերը:

«Այդ քիչերուն մէջ ենք նաեւ մենք, որ քիչ ճանչցանք զինքը, երբ Յունաստան կը գտնուէր 1924-26 թուականներուն:

«Ինք ուզեց, որ քիչ ճանչցուի:

«Բազմութիւններու մարդը չէր:

«Միշտ նախընտրեց, գոնէ Յունաստանի մէջ, մենութիւնը:

«Բեմերու մարդ չէր: Բայց փոխաբերական իմաստով՝ բեմադրութիւններու մղիչ ուժն էր՝ միշտ մնալով

Ընդհանուր ժողովի մասնակիցներու մէջ է Հրաչ Փափազեանը

քուլիսներու ետին: Ըսել կ'ուզենք՝ փառքի եւ խօսքի մարդ չէր, այլ գործի:

«Եւ իր գործի մասին չխօսեցաւ երբէք»[14]:

Միւս կողմէ՝ բժիշկ Յարութիւն Տէր Ղազարեան Հրաչ Փափազեանի բնաւորութեան մասին «Արեւելք»-ին մէջ այսպէս կ'արտայայտուէր. «Հրաչը փայլուն դիւանագէտ, քաղաքական հասունութեան տէր, ազնիւ, բարեհամբոյր հանրային գործիչ մը եղաւ:

«Մտաւորականի մը վայել ճոխ հմտութեամբ բոլոր խնդիրներու մասին իր կարծիքը կը յայտնէր համոզիչ լեզուով մը:

«Օժտուած էր նախաձեռնութեան անվիճելի ոգիով մը»[15]:

Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար Հրաչ Փափազեանի հեռատես եւ իմաստուն քաղաքականութիւն վարելու, ինչպէս նաեւ հայրէնասիրութեան իրողութեան ցայտուն մէկ օրինակը կը ներկայացուի «Հայրենիք» օրաթերթի մէջ՝ Վահան Փորթուգալեանի խիստ կարեւոր խոստովանութեամբ:

Մկրտիչ Փորթուգալեանի զաւակներէն Վահանը համբաւաւոր դատաւոր էր եւ Սուրիոյ վրայ ֆրանսական գաղութատիրութեան շրջանին (1930-ականներ) Հալէպի դատական բարձրագոյն ատեանի նախագահն էր: 1947-ին վերջնականապէս Ֆրանսա հաստատուելէ ետք Վահան Փորթուգալեան դարձած էր Էքս-Ան-Փրովանսի վճռաբեկ ատեանին նախագահը: Ան մահացած է 1974-ին:

Արդ, ֆրանսական ատեաններու նախկին նախագահ, հայ կամաւորական գունդերու հին սպայ Վահան Փորթուգալեան, որ Երկրորդ աշխարհամարտի ընթացքին պաշտօնով գտնուած է Սուրիա, հետեւեալ ուշագրաւ յայտնութիւնը կ'ընէ Հրաչ Փափազեանի մասին. «Ժամանակին «Յառաջ»-ի մէջ, «Վիժած յարձակման մը պատմութիւնը» գրի առնելով՝ յիշեցինք, թէ 1940-ի սկիզբը էր, զօր. Վէյկան՝[16] վերին հրամանատար ֆրանսական ուժերու Միջերկրական Արեւելքի մէջ, յարձակում մը կը պատրաստէր Խորհրդային Միութեան վրայ՝ թրքական գործակցութեամբ («Յառաջ», 5 եւ 12 Օգոստոս 1958):

«Յիշած էինք, իբր անձնական վկայութիւն, թէ զօր. Վէյկանի սպայակոյտէն երկու սպայ Հալէպ եկան եւ փափաք յայտնեցին տեսակցելու հայ «հակախորհրդային», այսինքն՝ Դաշնակցական կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ: Կ'ուզէին իմանալ, թէ կուսակցութիւնը յանձն կ'առնէ՞ ապստամբութիւն յարուցանել Խորհրդային Հայաստանի մէջ՝ դիւրացնելու համար արշաւող բանակին մուտքը:

«Ստացած էին բացասական պատասխան:

«Զանց առած էինք հայ խօսակիցներուն անունները՝ նկատի ունենալով իրենց բնակավայր Մ. Արեւելքի անկայուն վիճակը եւ աննախատեսելի ելեւէջները:

«Հրաչ Փափազեան իր մահկանացուն կնքեց:

«Այժմ կրնանք առանց անպատեհութեան եւ յաղագս պատմական ճշմարտութեան յայտնել, թէ ինքն էր պարագլուխը, որ առանց ազդուելու վերին հրամանատարի աշխարհահռչակ հմայքէն եւ ներշնչուելով միայն հայրենիքի շահէն՝ մերժեց իր կուսակցութեան մասնակցութիւնը ծրագրուած բախտախնդրութեան»[17]:

Հ.Յ.Դ. շարքայիններու եւ մօտ պարագաներու կարծիքն է եղած, որ Հրաչ Փափազեան վարած է շատ համեստ կեանք մը: Ազգային, պետական ու կուսակցական գործունէութեան պատճառով ան զուրկ մնացած է վայելելէ ընտանեկան պատշաճ կեանքի մը ջերմութիւնը: Ունէր որդեգիր զաւակ մը՝ Վարդգէսը, որ յաճախած էր Ազգ. Հայկազեան վարժարան:

Վերջապէս, Հրաչ Փափազեանի անունը անքակտելի կերպով եւ ոսկեայ տառերով գրուած ու ամուր

կապուած կը մնայ երկու կարեւոր բնագաւառներու մէջ, մէկը՝ յեղափոխական՝ 1920-ական թուականներու, Հայոց ցեղասպանութեան պատասխանատու թրքական պետութեան ներկայացուցիչները պատուհասող դաշնակցական արդարագործներու «Նեմեսիս»-ի գործունէութեան՝ իբրեւ գլխաւոր կազմակերպիչներէն մէկը:

Քաջ գիտակցելով՝ կը հաստատենք, որ առանց իրեն այդ ահաբեկումները հաւանաբար գլուխ կրնային չելլել:

Իսկ երկրորդը՝ դիւանագիտական-քաղաքական. երկու շրջան ընտրուած երեսփոխան սուրիական խորհրդարանին: Քաղաքագէտ, ճկուն ու հեռատես, իւրայատուկ այս դէմքը իր առաքելութեան ընթացքին ամբողջական գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ գործեց:

Անոր էութեան մէջ գոյութիւն ունէր չորս հիմնական յատկանիշներ՝ արդարադատ մարդը, ազգանուէր հայը, գաղափարապաշտ կուսակցականը, նախանձախնդիր եւ իմաստուն պետական գործիչը:

Իբրեւ սուրիացի ազգային գործիչ՝ Հրաչ Փափազեանի գործունէութիւնը Սուրիական Հանրապետութեան քաղաքական, հասարակական կեանքին մէջ, անոր շահած փորձառութիւնը, ինչպէս նաեւ բարձր արժանիքները եւ անոր դիւանագիտական իմաստութիւնն ու խելքը, անկասկած, երաշխիք մըն էին փայլուն ու հռչակաւոր դառնալու Սուրիոյ պետական վերնախաւին մօտ: Այդ իսկ պատճառով անոր վարկը նոյնիսկ իր մահուընէ ետք բաւարար եղաւ, որ դիւրութիւն ընծայէ շատ մը կարեւոր իրագործումներու գործընթացի մէջ: Այստեղ բաւական է նշել միայն մէկ օրինակ. 1967-ին Սուրիոյ կառավարութեան կողմէ հրապարակուեցաւ հրամանագիր մը, որով բոլոր մասնաւոր վարժարաններու տնօրէնները պիտի նշանակուէին կրթական նախարարութեան կողմէ, ու անոնք պիտի հսկէին պետական կրթական ծրագիրի լրիւ գործադրութեան: Նոյն հրամանագրով ամբողջովին կ՚արգիլուէր հայերէնի դասաւանդութիւնը:

Սուրիոյ հայկական վարժարաններու դիմագրաւած տագնապի առնչութեամբ Բերիոյ Հայոց թեմի օրուան ազգային իշխանութիւնը զօրաշարժի ենթարկեց ազգային ու պետական գործիչները, ազգային սրբութեան պահպանման՝ հայերէն դասաւանդութեան պահերու վերատիրանալու համար: Այդ կարեւոր աշխատանքը օրին վստահուած էր պետական երեսփոխան մեթր Գրիգոր Էպլիղաթեանի, որ ոգի ի բռին պայքարեցաւ հայապահպանման արմատական հիմք ծառայող հայերէնի դասաւանդութեան պահերու վերատիրացումին:

Այդ գործընթացի մէջ կարեւոր հանդիպումի մը ընթացքին օրուան սպայակոյտի պետ զօր. Մուսթաֆա Թլասի եւ յատկապէս վերջինի տիկնոջ՝ Լեմիա ալ-Ժապիրիի շեշտակի հարցումը. «Դուն հանգուցեալ Հրաչ պէյի կողմնակիցներէն ես, թէ՞ իր հակառակորդներէն» ու մեթր Էպլիղաթեանի դրական պատասխանէն ետք տիկին ալ-Ժապիրի զօրավարին ըսած է. «Մուսթաֆա՛, ասոնք իրական ուաթանիներ են (ազգայնական), եւ պէտք է իրենց օգնես»[18]: Անշուշտ, արդիւնքին քաջածանօթ ենք, եղած է բաւական դրական ու արդիւնաւէտ, հայկական վարժարաններէն ներս հայերէն դասապահերը վերականգնած են: Անկասկած, շնորհիւ մեթր Էպլիղաթեանի իրաւաբանի հմտութիւններուն, սակայն Հրաչ պէյ Փափազեանի յետմահու շարունակուող վաստակի միջնորդութեան:

Ահաւասիկ երեսփոխան Հրաչ Փափազեանի տե-

Ընդհանուր ժողովի մասնակիցներու մէջ է Հրաչ Փափազեանը

սակի զօրութիւնը, իւրայատկութիւնը, արժանիքի անժամանցելիութիւնը:

Հրաչ իր ամբողջ կեանքի ընթացքին գործեց հաւատարմօրէն, եղաւ ուղղամիտ, լայնամիտ, անկաշառ, հանրային պարկեշտ գործիչ եւ ճշմարիտ հայրենասէր: Համեստ եւ պարզ իր ապրումով եւ սակայն մեծ է եղած սիրով ու գործով: Կեղծիք եւ նեղմտութիւն չէ գիտցած երբէք: Անձնուիրութեան եւ զոհողութեան տիպար ու անշահախնդիր է եղած: Անձնական, նիւթական շահագործումի եւ կիրքի իբրեւ միջոց չէ օգտագործած իր ստանձնած պաշտօններն ու պարտականութիւնները: Թէեւ անոր քսակը համեստ եղած է, սակայն գոհ եւ ուրախ եղած է, այլ խօսքով՝ նիւթական ապօրինութեան եւ սայթաքումի ծանրութեան տակ չեն ճմլուած անոր սիրտն ու խիղճը: Իր գործերուն մասին երբէք արտայայտուիլ չսիրող, ուրիշներու կողմէ իր ներկայութեան իր մասին եղած գովեստները մերժող, յոգնիլ չգիտցող, գործի մարդու առաքինութիւններով օժտուած յեղափոխական գործիչն էր Հրաչ Փափազեան: Կիրք ու բարկութիւն չէ ունեցած երբէք խօսակցութեան եւ վիճաբանութեան ընթացքին: Գաղափարի, համոզումի, կարծիքի տարբերութեան համար չէ անարգած, չէ ցաւցուցած ուրիշները: Բարկացած է, սակայն չէ մեղանչած: Մեղմ եւ անուշ խօսքերով մեղմացուցած է խօսակիցը եւ համոզած զայն:

Ան երկար տարիներ նախանձախնդրօրէն եւ անձնուիրաբար իր բաժինը բերաւ սուրիական օրինեալ հայրենիքի հողային ամբողջականութեան, ազատութեան, խաղաղութեան, ապահովութեան եւ զարգացման ու բարգաւաճման առաքելութեան:

Հրաչ Փափազեան՝ պատկառազդու անուն մը, որ ոչ միայն սուրիահայ կեանքին մէջ ուրոյն իր տեղն ունի, այլև ժամանակակից հայոց պատմութեան մէջ քանդակուած է: Այդ պատճառով ալ շատեր, յատկապէս անմիջական կապ ունեցողներ կամ այսպէս կամ այնպէս առնչուողներ անոր հանդէպ իրենց տածած սէրէն ու անհուն համակրանքէն Հրաչ անունը տուած էին իրենց զաւկին:

Մէկ կողմէ՝ յաւերժացնելու հերոսի անունը, իսկ միւս կողմէ՝ կը հաւատային, որ այդ անունով նաեւ պիտի ձեւաւորէ մանուկին ինքնութիւնը եւ նկարագիրը:

Քաղաքական, ազգային եւ կուսակցական իրատեսութեամբ երբ վերլուծենք Հրաչ Փափազեան երեւոյթը, մեր մօտ պիտի յառաջանայ անկորնչելի բարոյական հարստութիւն մը, զոր ժառանք թողած է մեզի:

Հրաչի համար ամբողջ կեանքի ընթացքին՝ սկսած «Նեմեսիս»-ի գործողութենէ, հասնելով Հ.Յ.Դ. Բիւրօ, Սուրիոյ Խորհրդարանի պատգամաւոր եւ այլ իրագործումներ, ազգային եւ կուսակցական պարտաւորութիւն եւ պարտականութիւն էր:

Իրեն համար կարեւոր չէր պատմութեան մէջ իր անունը կը գրուի, թէ ոչ: Կարեւորը ինք չէր, այլ արդարադատութեան հաստատման համազգային ծրագիրը. ամբողջ ժողովուրդ մը ցեղասպանողները անպատիժ պիտի չմնային, ինչպէս նաեւ ազգին ու կուսակցութեան ապահովութիւնը, անվտանգութիւնը, սուրիահայութեան հայապահպանումը, հայեցի դաստիարակութիւնը, ինքնութեան գիտակցութիւնը, գոյատեւումը, Կիլիկիոյ կաթողիկոսութեան անսասանութիւնը եւ այլն:

Հալէպի մէջ Թիլել փողոցի վրայ գտնուող Հ.Մ.Ը.Մ.-ի ակումբը, որ գաղափարական դարբնոց մըն էր, Հրաչ Փափազեանի ամէնօրեայ այցելութեան ժամադրավայրն էր:

Հրաչ Փափազեանի մահէն յետոյ ակումբի ճակատի սրահը մկրտուեցաւ Հրաչ Փափազեան անունով՝ ի պատիւ գաղափարապաշտ, ազգանուէր մեծ առաջնորդին:

Արդ, Հ.Մ.Ը.Մ.-ի ակումբը, որ քանի մը տասնեակ տարիներ յետոյ յանձնուեցաւ Հ.Ե.Մ.-ի 1988-1989, յատկապէս սրահը հիմնովին վերանորոգուելէ ետք վերանուանուեցաւ Հրաչ Փափազեանի անունով: Սակայն Սուրիոյ պատերազմի պատճառով բաւական վնասուած էր: Այժմ նորոգուած է, սակայն ոչ Հրաչ Փափազեան անունով:

Այստեղ կարեւոր կը նկատենք աւելցնելու, որ տարիներ ետք՝ Կիրակի, 27 Մայիս 2012-ին, Հ.Յ.Դ. Լիբանանի ընտանիքի նախաձեռնութեամբ մայրաքաղաք Պէյրութի Ֆըրն աշ-Շըպպեք շրջանի մէջ գտնուող Ազգ. գերեզմանատան մէջ անշուք պատի մը տակ գտնուող Հրաչ Փափազեանի քարուքանդ շիրիմը փոխարինուեցաւ պատշաճ դամբարանով մը, եւ տեղի ունեցաւ նորակառոյց շիրմաքարի բացման արարողութիւնը:

Իսկ 25 ապրիլ 2023-ին Երեւանի օղակաձեւ զբօսայգիին մէջ մեծ շուքով բացումը կատարուեցաւ 1919-ին «Նեմեսիս» գործողութիւնը կազմակերպած եւ զայն իրականացուցած հերոսներուն նուիրուած «Նեմեսիս» յուշաղբիւր-կոթողը:

Աղբիւր-յուշակոթողը, որ կը կրէ «Ազգային արժանապատութեան ասպետներին» խորագիրը, տեղադրուած է Երեւանի աւագանիին որոշումով, իսկ քանդակին հեղինակն է ճարտարապետ Տիգրան Բարսեղեանը:

Յուշարձանին վրայ կան Սողոմոն Թեհլիրեանի, Արամ Երկանեանի, Արշաւիր Շիրակեանի, Պետրոս Տէր-Պողոսեանի, Արտաշէս Գէորգեանի, Միսաք Թորլաքեանի, Ստեփան Ծաղիկեանի, Յակոբ Մելքումովի, Երուանդ Ֆունտուքեանի, Արմէն Գ(Կ)արոյի (Գարեգին Փաստրմաճեան), Գրիգոր Մերճանովի, Աւետիք Իսահակեանի, Արշակ Եզտանեանի (Մուշեղեան)՝ յայտնի որպէս Եզիտ Արշակ, Արա Սարգսեանի, Հրաչ Փափազեանի եւ Շահան Նաթալիի (Յակոբ Տէր-Յակոբեան) անունները: Անոնք Հայոց ցեղասպանութիւնը կազմակերպած եւ գործադրած երիտթուրքերու պարագլուխներէն, ինչպէս նաեւ 1918-ին Պաքուի հայերու ջարդը կազմակերպողներէն վրէժ լուծած հերոսներն են: Արդ, Հրաչ Փափազեանի անունը «Ազգային արժանապատութեան ասպետներին» աղբիւր-յուշակոթողին վրայ փորագրուած է չորրորդ հատուածին մէջ:

Վերջապէս պէտք է արձանագրել, որ Հրաչ Փափա-

զեան եղաւ ազգային-կուսակցական գաղափարախօսութեան կարեւորագոյն հիմնադրոյթը մարմնաւորող ղեկավարը: Անոր լայնածաւալ ու լայնածիր հասարակական գործունէութիւնը յատկանշուած է պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, օրէնսգիտական եւ իրաւագիտական մասնագիտութեամբ զինուած լրջախոհ մօտեցումներով, որուն համար արժանացաւ ազգային եւ պետական շրջանակներու բարձր գնահատանքին:

Փափազեան որքան պաղարիւն ու անտարբեր գտնուեցաւ անձնապէս իր դէմ կատարուած գոեհկագոյն բանսարկութիւններուն եւ վարկաբեկման արշաւներուն նկատմամբ, նոյնքան հաստաբուն կաղնիի պէս աներեր կանգնեցաւ ամէն կարգի յորձանքներու դէմ ու անխախտ հաւատքով փարեցաւ նախ իր սկզբունքներուն, ապա կուսակցութեան արժանաւորապէս տէր կանգնելու իր կոչումին եւ առաքելութեան:

Պատմական եզակի դէմք մըն է անմահանուն Հրաչը՝ որպէս գաղափարապաշտ հսկայ, որպէս Հայ Դատի անձնուէր պահակ, քաղաքական գործիչ ու հայ վրիժառութեան կերտիչ՝ ցեղային լրիւ արժանիքներով:

Իր սկզբունքը եղաւ չխօսիլ, այլ գործել: Անայլայլ քայլերով յառաջանալ դէպի նպատակակէտ: Ու իր նպատակակէտը ուրիշ բան չէր, եթէ ոչ ծրագիրն ու նպատակակէտը Հ. Յ. Դաշնակցութեան:

Հրաչի ազգային-կուսակցական, հասարակական, քաղաքական գործունէութեան մասին կարելի է երկար գրել ու խօսիլ, սակայն հոս վերապահ մնալով՝ զանց կ'առնենք անոր հետ առնչութիւն ունեցող բազմաթիւ իրադարձութիւններ, դէպքեր ու որոշումներ: Կը հաստատենք, սակայն, թէ Հրաչ Փափազեան ամբողջ իր կեանքը գործած է յանուն իր ազգի ու կուսակցութեան: Ան մինչեւ իր մահը մնաց պատնէշի վրայ՝ իր առաքելութեան գիտակից:

Հարկ է արձանագրել, որ Հրաչ Փափազեան երեւոյթը՝ անբասիր, զմայլելի, աներեր անձնուիրութեամբ մը եւ երկարամեայ կուսակցական ու քաղաքական գործունէութեամբ զտարիւն հայ գաղափարաբանութեան հոգեկան ներշնչարան մը որպէս. մէկ խօսքով՝ իր ամբողջական էութեամբ այս բոլորին, իբրեւ միաձուլուած անկրկնելի կերպարը ներշնչման աղբիւր կը շարունակէ մնալ Հայ Դատի պայքարին եւ պետական քաղաքական գործունէութեան զինուորագրուած հայոց սերունդներուն:

Ստորեւ կը ներկայացնենք ազգային-կուսակցական, ականաւոր հետախոյզ եւ պետական գործիչ Հրաչ Փափազեանին նուիրուած ««Նեմեսիս» Հրաչ Փափազեան» երգին բառերը: Երգը գրուած է 15 Յունիս 2002 թուականին Աւօ Գաթրճեանի կողմէ, իսկ երաժշտութիւնը՝ Զարեհ Քէշիշեանի, մեկնաբանութեամբ՝ Գառնիկ Սարգիսեանի:

«ՆԵՄԵՍԻՍ» ՀՐԱՉ ՓԱՓԱԶԵԱՆ

Խօսք՝ Աւօ Գաթրճեանի
Երաժշտ.՝ Զարեհ Քէշիշեանի

Հետախոյզ ու կազմակերպիչ,
Պատասխանատու վեհ գործիչ,
Արտաքնապէս անխռով միշտ,
Անշէջ վրէժը սրտիդ վիշտ:

Կրկներգ.–
Պայծառ արեւ անկրկնելի,
Անզուգական «Մեհմէթ Ալի»,
Կայծը մէկ ու կէս միլիոնի,
Դարձար հաւատքը մեր ցեղի:
Մեծ Եղեռնի դահիճներուն,
Ճարտար սարսափն էիր թաքուն,
Լուսաւոր փարոս մարտական,
«Նեմեսիս»՝ Հրաչ Փափազեան:

Քալեցիր հաստատ քայլերով,
Յաւերժ ու պայծառ ուղիով,
Երեսփոխան Դաշնակցական,
Պարծանքն ես ամբողջ հայութեան:

Կրկներգ.–
Պայծառ արեւ անկրկնելի...

«Նեմեսիս» գործողութեան մասնակիցներին նուիրուած հուշարձանը Երեւանում: Հիշատակուած է նաեւ Հրաչ Փափազեանի անունը

Օգտագործուած աղբիւրներ

1. Արեւելք» օրաթերթ, Չորեքշաբթի, 17 Օգոստոս 1960, էջ 1:
2. Տպագրութեան վրիպակ, պէտք է ըլլայ 18-ը:
3. «Արեւելք» օրաթերթ, Չորեքշաբթի, 17 Օգոստոս, 1960, էջ 1:
4. «Ազդակ» օրաթերթ, Շաբաթ, 20 Օգոստոս, 1960, էջ 2:
5. «Ազդակ» օրաթերթ, Երկուշաբթի, 22 Օգոստոս 1960, էջ 2:
6. Լիբանան:
7. Սուրիա:
8. «Ազդակ» օրաթերթ, Երեքշաբթի, 23 Օգոստոս 1960, էջ 2:
9. Նոյն տեղը, էջ 2:
10. «Արեւելք» օրաթերթ, Ուրբաթ, 19 Օգոստոս 1960, էջ 1:
11. Նոյն տեղը, էջ 2:
12. «Յառաջ» օրաթերթ, Կիրակի, 21 Օգոստոս 1960, էջ 1:
13. Նոյն տեղը, էջ 1:
14. «Ազատ օր» օրաթերթ, Ուրբաթ, 26 Օգոստոս 1960, էջ 1:
15. «Արեւելք» օրաթերթ, Շաբաթ, 24 Սեպտեմբեր 1960, էջ 2:
16. Հրամանատար Մաքսիմ Վէյկան (General Maxime Weygand), Սուրիոյ ֆրանսական հովանաւորութեան բարձր յանձնակատարը՝ 19 Ապրիլ 1923 մինչեւ 28 Նոյեմբեր 1924:
17. «Հայրենիք» օրաթերթ, Երեքշաբթի, Հոկտեմբեր 25, 1960, էջ 3:
18. Էպլիղաթեան Գրիգոր, «Յուշեր եւ վկայութիւններ», Հալէպ, 2011, էջ 60:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Գրականութիւն

1. Անձնական արխիւներ:
2. Երկանեան Արամ, «Այսպէս. սպաննեցինք կամ գիրք մատուցման եւ հատուցման», Պէյրութ, տպարան «Օնիպար», 1954:
3. Էպլիղաթեան Գրիգոր, «Յուշեր եւ վկայութիւններ», Հալէպ, 2011:
4. «Թեհլիրեան արդարահատոյցը», խմբագիր՝ Յարութիւն Քիւրքճեան, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 1981:
5. Լազեան Գաբրիէլ, «Հայաստան եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ», տպարան «Յուսաբեր» Գահիրէ, 1957:
6. Ծառուկեան Ա.[նդրանիկ], «Երազային Հալէպը», Պէյրութ, 1980:
7. Շիրակեան Արշաւիր, «Կտակն էր նահատակներուն», Պէյրութ, տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1965:
8. Տասնապետեան Հրաչ, «Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողովը (1890-1924)», Աթէնք, 1988:
9. أريسيان د. نورا، "النواب الأرمن في المجالس النيابية السورية: 1928-2011"، دمشق، 2011.
10. الجابري رياض، "سعد الله الجابري وحوار مع التاريخ: أوراق مضيئة"، دمشق، 2006.

2. Պարբերական մամուլ

1. «Ազատ օր» օրաթերթ, Աթէնք, Յունաստան:
2. «Ազդակ» օրաթերթ, Պէյրութ:
3. «Ալիք» օրաթերթ, Թեհրան (Իրան):
4. «Արեւելք» օրաթերթի հաւաքածոյ, Հալէպ, Սուրիա:
5. «Երիտասարդ Հայաստան», Նիւ Եորք (ԱՄՆ):
6. «Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն (ԱՄՆ):
7. «Հասկ» պաշտօնական ամսաթերթ, Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Բացառիկ թիւ, նուիրուած Վեհափառ Տ. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսին, նորընտիր հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ, թիւ 1-4, ԻԵ. տարի, Յունուար-Ապրիլ, Պէյրութ, 1956:
8. «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, Ֆրանսա:
9. «Յառաջ», Պէյրութ, Լիբանան:
10. «Յուսաբեր», օրաթերթ, Գահիրէ, Եգիպտոս:
11. مجلة «السنابل» أسبوعية، آب، 1960، حلب .

Զգոյշ ակնարկ մը
Գիրքը տպաւորիչ է առաջին հայեացքով

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Խօսքս կողքին մասին չէ, իհարկէ, որ ժուժկալ ըլլալով հանդերձ, իր գոյներով ու տառաչափերով աչք կը գրաւէ: Խօսքս բովանդակութեան կը վերաբերի, այդ պատճառաւ ալ կ'ուզեմ ընթերցողին փոխանցել գրքին միտք բանին: Ի՞նչ գիրք է այս, ուրեմն:

LA FIN DU NÉO-LIBERALISME («Նորազատականութեան վերջը»), հեղինակը՝ Claude Vaillancourt (Գլոտ Վայանգուր), հրատարակիչը՝ écosociété, լոյս տեսած 2023-ի առաջին եռամսեակին, Մոնթրէալ, 200 էջ: Հետաքրքրական է ինչ-որ նշուած է տիտղոսին ներքեւ փոքր տառերով. Regard sur un virage discret, որ թարգմանի «Ակնարկ՝ զգոյշ շրջադարձի մը վրայ»:

Մի՛ մոռնաք այս երկու բառերը՝ «զգոյշ» եւ «շրջադարձ»:

Իսկ ո՞վ է հեղինակը:

Վայանգուր վիպագիր մըն է, փորձագիր մը եւ այլաշխարհի զինուորեալ մը (militant altermondialiste): Ան À bâbord ընկերային-քաղաքական եռամսեայ հանդէսի խմբագրութեան անդամ է: Այս անկախ հանդէսը, որ նոյնպէս Մոնթրէալ լոյս կը տեսնէ, կը հրատարակուի «մարտնչողներու, անկախ լրագրողներու, փրոֆեսորներու, ուսանողներու եւ աշխատաւորներու կողմէ՝ ամեն տեսակ ըմբոստներու, որոնք կ'առաջադրեն յեղափոխել մեր ընկերութիւնը՝ այրերու եւ կիներու միջեւ յարաբերութիւններուն եւ բնութեան հետ մեր առնչութիւններուն առումով»,— ինչպէս կը նշուի հանդէսի կայքէջին վրայ: Ան նաեւ նախագահն է միջազգային կազմակերպութեան մը տեղական՝ Attac-Québec մասնաճիւղին, որ կը հետապնդէ ժողովրդավարական հակակշիռ ստեղծել ելեւմտական գործառնութիւններուն եւ անոնց հաստատութիւններուն վրայ: Այսքանը գաղափար մը կու տայ հեղինակի գաղափարական կողմնորոշումներուն մասին:

Գիրքը կը բաղկանայ երեք մասերէ, ունի յառաջաբան մը եւ եզրափակում մը: Այդ երեք մասերու եւ իրենց ենթամասերու վերնագրերը խօսուն են իրենքիրենց.

- Առաջին մաս՝ Ժամանակաշրջանի մը վերջը (Յետնորազատականութիւնը / Մեծ ինքնաժխտումը / Տկարացած համակարգ մը / Հնացած համախոհութիւն մը / Ձախորդութեան մարգարէները):

- Երկրորդ մաս՝ Յետնորազատական աշխարհը (Անյուսալի կամ պատահական aléatoires – համոզումներու եւ ճշմարտութիւններու վերջը / Կեդրոնի տեղափոխումը դէպի ձախ / Անբարդոյթ ու ռազմատենչ ծայրայեղ աջը / Ինքնութիւններու պարահանդէսը / Սովորական ջղագարութիւնը / Նոր արհեստավարութիւնը / Միացեալ Նահանգներու մշակութային տիրապետութիւնը / միջավայրը՝ պատճառներու պատճառը):

- Երրորդ մաս՝ Շփոթի ժամանակաշրջանը եւ դրամատիրութեան տեւականութիւնը / Անշարժականութեան ուժերը / Քեպէկի պարագան):

Նման ամսագրային յօդուածի մը մէջ կարելի չէ այս բոլորին մասին բերել հեղինակի արտայայտած մտքերու ամբողջական պատկերը: Պիտի ջանամ, սակայն, ներկայացնել կարգ մը նշումներ կամ հաստատումներ, որոնք կը վերաբերին բոլորին, պէտք է մտահոգեն բոլորը, անոնց կարգին նաեւ մեզ, քանի որ մենք ալ կ'ապրինք նոյն այս մոլորող մոլորակին վրայ եւ մեր բնակած երկիրներն ու մեր հայրենիքը նոյնպէս ենթակայ են միեւնոյն ազդեցութիւններուն:

Ասկէ ետք արտայայտուած մտքերը՝ չակերտուած կամ ոչ, առնուած են գիրքէն. փակագիծի մէջ նշուած են անոնց էջաթիւերը:

Մարդկութեան վերապրումը ապահովելու համար պարտաւոր ենք յարմարիլ բնապահպանման նոր իրավիճակներուն, սակայն չյարմարելու գլխաւոր ազդակը մեր տնտեսական դրոյթն է (համակարգը), որ ընդդիմանալու անհաւատալի ուժ մը ունի: Խորհրդային կարգերու անկումէն ետք ստեղծուեցաւ այն տպաւորութիւնը, թէ շուկայի տնտեսութիւնը հաստատուած է ընդմիշտ՝ առանց որեւէ այլընտրանքի: Պահպանողականութեան նոյն այս տպաւորութիւնը կը զգացուի նաեւ ձախին կողմէ, որ սակայն պիտի չուզէր համակերպիլ անոր (11):

Բայց եւ այնպէս անցնող քսանամեակին, յատկապէս Գովիտ-19 համաճարակէն ետք տեղի ունեցան որոշ ձեւափոխութիւններ, որոնք մեծ փոփոխութիւններ կրնան յառաջացուցած չըլլալ, սակայն կը հանդիսանան զգոյշ շրջադարձ մը (13):

«Կը մտնենք դրամատիրութեան մէկ նոր փուլը՝ շփոթի, հակամարտութիւններու, ծայրայեղութիւններու՝ կառավարութիւններով, որոնք երբ բռնապետական չեն, յստակօրէն կ'անջատեն խօսքը գործքէն: Ուստի կարեւոր է գծել ուրուագիծը այս նոր աշխարհի, այս յետնորազատականութեան եւ հասկնալ հեռանկարները, որ ան կը մատուցէ մեզի» (16):

Գլոր Վայանգոր

Կրնայ ինքնին հակասական թուիլ «յետնորազատականութիւն» եզրը, —կ՚ըսէ հեղինակը, —սակայն ան կրնայ լաւագոյնը բնութագրել այն անորոշութիւնները, որոնց դէմ-յանդիման կը գտնուինք. պատմութեան շրջան մը, երբ «հինը կը մերժէ մեռնիլ, եւ նորը դժուարութեամբ ձեւ կը ստանայ» (21):

Նորազատականութիւնը յառաջ եկաւ՝ ժխտելով իր գոյութիւնն իսկ: Ինչ իմաստ ունի ազատականութեան մասին խօսիլ, երբ այլընտրանքի իրաւունք չես ընդունիր: Ան «պտուղն էր ընկերութեան օրգանական եւ բնական զարգացման», ժամանակամիջոցի մը, երբ որպէս մարդկային ոգիի խեղճ կառոյցներ փուլ կու գային գաղափարաբանութիւնները՝ մարքսիզմը, հոգեվերլուծումը, կառուցապաշտութիւնը, եւ կը հասկնայինք, թէ աւելի լաւ կ՚ըլլար, որ «ընտելացնէինք բանականութեան մեր ըղձանքը, եւ գործնականապաշտութիւնը յաղթէր մեծ մտաւորական կառուցումներուն» (22-23):

Դէպի յետնորազատականութիւն անցքը անխուսափելի դարձուցին չորս ազդակներ՝ արդիւնքներու բացակայութիւնը, 2007-2008-ի տնտեսական Մեծ անկումը (Grande Récession), կլիմայական ջերմացումը եւ Գովիտ-19 համավարակը (27):

Նորազատականութեան ապարդիւն ըլլալու մասին կը յիշուի Ժոզեֆ Ստիկլիծ (Joseph Stiglitz) անուանի տնտեսագէտին 2002-ին տուած վճիռը. «Այսօր համաշխարհայնացումը չի գործեր: Չի գործեր աշխարհի աղքատներուն համար: Չի գործեր միջավայրին (բնապահպանման) համար: Չի գործեր համաշխարհային տնտեսական կայունութեան համար» (27):

Նորազատականութեան նկատմամբ ակնկալութիւնները հիմնուած էին սխալ ենթադրութիւններու վրայ: Օրէնքներն ու քաղաքացիական պարտաւորութիւնները նուազագոյնի իջեցնելով եւ հարուստներու տուրքերը անհամեմատօրէն ցած պահելով՝ կը կարծուէր, թէ շատ նոր շահարկումներ պիտի ըլլային, ապրանքներու գիները ցած պիտի մնային, շահոյթը վերէն վար պիտի կաթկթէր ու ամեն մարդ պիտի օգտուէր: Մինչդեռ գիտենք, որ այդպէս չեղաւ (28):

Այդ միջոցառումներու հետեւանք էր Մեծ անկումը, եւ պետութիւնը դրամատուներուն օգնեց, որպէսզի անոնց հասոյթները (եւ փայատէրերու հարստութիւնը) կայուն պահէ՝ փոխանակ օգնելու վնասուող հասարակ քաղաքացիներուն (29):

Գալով կլիմայական ջերմացման՝ փաստուեցաւ, որ անոր դէմ պայքարը ունեւորներու հաշուոյն չի գար եւ միայն տնտեսական տարբեր համակարգի մը տակ կարելի է լուրջ միջոցառումներու դիմել (31):

Ամենէն աւելի, սակայն, պսակաժահրի համավարակն էր, որ բացայայտեց նորազատական կարգերու անկարողութիւնը կամ ապիկարութիւնը՝ դիմագրաւելու համար նման խոշոր սպառնալիքներ՝ առանց բնութեան պաշտպանութեան եւ առանց պետական միջամտութեան: Նաեւ երեւան եկաւ կարեւորութիւնը տեղական տնտեսութեան զարգացման (ի դէմս համաշխարհայնացման): Մանաւանդ ակներեւ դարձաւ ունեւոր եւ չունեւոր երկիրներու տարբերութիւնը՝ վարակին զոհ գացողներու քանակին առումով (33):

Հիմա նորազատականութեան ամենէն ջերմ պաշտպաններէն ոմանք ալ դարձած են անոր քննադատները: Մէկը Քլաուս Շուապն է (Klaus Shwab), որ հիմնադիրն է Տաւոսի տարեկան տնտեսական հաւաքին (54):

Ան համահեղինակ տնտեսագէտ ու պատմաբան Թիեռի Մալըրէի (Thierry Malleret) հետ իր վերջին գիրքին մէջ (COVID-19, la grande réinitialisation – ԳՈՎԻՏ-19, մեծ վերահիմացութիւնը) կը գրէ. «ԳՈՎԻՏ-19-ը ազդարարեց, թէ վերջ գտաւ նորազատականութիւնը, որ հաւաքածոյ մըն է գաղափարներու եւ քաղաքականութիւններու, որ հանգիստ կրնանք ըսել, թէ կը քաջալերէ մրցակցութիւնն ընդդէմ միասնականութեան, ստեղծագործ քանդումն ընդդէմ պետական միջամտութեան եւ տնտեսական աճն ընդդէմ ընկերային բարօրութեան»: Եւ կ՚աւելցնէ. «"Գերհամաշխարհայնացումը" կորսնցուցած է իր ամբողջ քաղաքական ու ընկերային դրամագլուխը, եւ քաղաքականապէս անկարելի է ըլլալ անոր ջատագովը» (55):

Շուապի կը ձայնակցի, կարծէք, Փաթրիք Արթիւս (Patrick Artus)՝ Նաթիքսիս դրամատունէն: Ըստ անոր՝ կան նորազատական դրամատիրութեան վերջը բերող չորս պատճառներ. 1) Կը վերադառնանք ազգային եւ ոչ համաշխարհային արժէքներու շղթաներու, 2) Մնայուն աճ մը պիտի ըլլայ հասարակական ծախսերու, 3) Պետութիւնը պէտք է միջամտէ սահմանելու եւ զարգացնելու համար ռազմավարական ճարտարարուեստները, 4) Հիմա այլեւս (նոյնիսկ Միացեալ Նահանգներու մէջ) ընդունուած է, որ ամբողջ բնակչութիւնը պէտք է վայելէ ընկերային պատշաճ պաշտպանութիւն մը» (56-57):

Կը նկատուի հետեւեալ երեւոյթը. ներկայ յետնորազատականութեան այս դարուն կեդրոնը կը հակի քիչ մը աւելի դէպի ձախ բոլոր մարզերուն մէջ: «Այս անվճռական պատասխան մըն է այն անորոշութիւններուն, որոնք ի յայտ կու գան նորազատականութեան վերջաւորութեան, ձեւ մը՝ հակադարձելու այս համակար-

գի քննադատութիւններուն եւ համաշխարհայնացման զոհ դարձած ժողովուրդներու հիասթափութեան՝ առանց խորունկ յեղաշրջումներու»: Հակառակ կուսակցութիւններու բազմապատկումին՝ հազուագիւտ են համակարգային փոփոխութիւններու առաջարկները: «Ինչ որ կրնար նկատուիլ կարեւոր յառաջացում մը փճացուած է թէ՛ իշխանութիւններու վրայ գտնուողներու քաղաքական կամքի պակասին՝ իրենց գեղեցիկ խօսքերուն հետեւանք տալու տեսակէտէն, թէ՛ ալ ճնշումներուն անբարդոյթ ծայրայեղ աջին, որ կը ջատագովէ հիմնական յետդարձներ ընկերային, քաղաքական եւ տնտեսական հարցերու առումով եւ որ կը թուի այս ժամանակին մէջ որպէս հաւանական կամ համոզիչ այլընտրանքը, որ կը վայելէ ժողովուրդի կարեւոր մէկ մասին քուէն» (81):

Հեղինակը կը նշէ բազմաթիւ երկիրներ, որոնք ժողովրդավարութեան դիմակին տակ այդ է, որ կը ջանան կատարել, ինչպէս Թրամփի ԱՄՆ-ը, Պոլսոնարոյի Պրազիլիան, Էրտողանի Թուրքիան, Օրպանի Հունգարիան, Տուտայի Լեհաստանը կամ Տիւթերթի ապա եւ Մարկոս Կրտսերի Ֆիլիպինները (84):

Վայանգուր, սակայն, դրական կը նկատէ այն անհանդուրժողութիւնը, որ կը ձեւաւորուի ընդդէմ այլազանութեան մերժումին՝ ցեղային, կրօնական, թէ այլ, ընդդէմ կիներու նուաստացման ու նսեմացման, ընդդէմ գաղութատիրութեան՝ յատկապէս բնիկներու իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր, ընդդէմ չունեւորներու ուսման սահմանափակումներուն եւ այլն (96...):

Հեղինակը կ՚արծարծէ նաեւ թուայնացած տնտեսութեան հարցերը: Այսօրուան արհեստագիտութեան զարգացումները, կարծէք, յաւելեալ միջոցներ կը ստեղծեն տուրքերէ խուսափումի, աշխատանքային պայմաններու վատթարացումի, բանուորական իրաւունքներու կրճատման, բնութեան յաւելեալ վնասումի եւ աստղաբաշխային հարստութիւններու կուտակման համար՝ հակառակ շատ օգտակար գիւտերու եւ ճարտարարուեստական կարելիութիւններու: Առցանց հաղորդակցական հարթակներու եւ միջոցներու տէրերը «թուային բարբարոսներ» կը կոչէ լրագրող Ալէն Սոլնիէ (Alain Saulnier), եւ անոնց ներխուժումը բազմաթիւ ոլորտներէ ներս կը նկատէ. «ամենէն բուռն յարձակումը ազգային գերիշխանութեան վրայ, որուն ենթարկուած է Միացեալ Նահանգները այս նոր հազարամեակին» (129-130):

Հակառակ վերջին տասնամեակներու բոլոր վերիվայրումներուն քաղաքական, ընկերային եւ տնտեսական ոլորտներուն մէջ՝ տակաւին «Ամերիկայի Միացեալ Նահանգները կը պահէ ոչ զանցառելի առաւելութիւն մը՝ գրաւը դրած ըլլալով մշակոյթին վրայ եւ օգտուելով Բրիտանական կայսրութեան տարիներու տիրապետութեան արդիւնքներէն (retombées)՝ աշխարհի վրայ ամենուրեք անգլերէնը պարտադրած ըլլալով»: Ըստ Անթոնիո Կրամիսգիի (Antonio Gramisci)՝ պուրժուա մշակոյթի տիրական դիրքը արգելք կը հանդիսանայ աշխատաւորական կազմակերպութիւններուն, որ ջատագովեն այնպիսի արժէքներ, որոնք պիտի նպաստեն աշխատաւոր դասակարգի ամբողջական ազատագրումին:

«Միացեալ Նահանգներու մշակութային գերագահութիւնը շատ հասութաբեր է իր համար, իր բազմազգ ընկերութիւններէն շատեր (GAFAM եւ մշակութային ճարտարարուեստը) կը դնէ շուկայի գրեթէ ամբողջական հակակշիռը իրենց ձեռքը պահելու կացութեան մէջ, իր տարածքը կը ներքաշէ բոլոր գիտութիւններու հետազօտողները եւ կը յառաջացնէ հիացում մը, որ ի նպաստ իրեն կը դարձնէ միջազգային հանրային կարծիքը»:

Ասոր ալ հետեւանքը կ՚ըլլայ այն, որ հետզհետէ ուրիշ ժողովուրդներ կամաց-կամաց կը հրաժարին իրենց սեփական մշակոյթներէն (140-141):

Ակներեւ է, որ մշակոյթի ճամբով է, աւելի քան իր զինական ուժով, որ ԱՄՆ-ը կը տարածէ իր համաշխարհային տիրապետութիւնը (145-147):

Գալով կլիմայական ջերմացման վտանգին՝ ան գիտցուած էր երկար ատեն ի վեր, սակայն առկայ տնտեսական դրութեան նպաստաւոր չէին անոր սրբագրութեան լուծումները: «Էքսոնմոպիլ» քարիւղի ընկերութիւնը, որ այդ ուղղութեամբ հետազօտութիւններ ալ ֆինանսաւորած էր, 1990-էն սկսեալ 16 միլիոն տոլար յատկացուցած է առնուազն 43 կազմակերպութիւններու, որ կասկածի ենթարկեն կլիմայական փոփոխութիւնները: Բնութեան պահպանութեան հարցը արգելք կը հանդիսանար ազատ առեւտուրին ու մեծ ընկերութիւններու խոշոր եկամուտներուն:

Այսօր քիչեր կը համարձակին ժխտել կլիմայական փոփոխութեանց իրականութիւնը, սակայն այնքան ալ դիւրին չէ, դիւրին չէ ջերմուժի բրածոյ աղբիւրները (ածուխը, քարիւղը, բնական կազը) փոխարինել կայուն աղբիւրներով՝ արեւային ու հողմային: Կը պահանջուի նաեւ «համակարգային փոփոխութիւն մը՝ փոխանցում մը դէպի կայունութեան վրայ հիմնուած տնտեսութիւն մը, սպառումի նուազում մը, աղբիւրներու պահպանման նպատակադրում մը, ջերմուժի շատ աւելի սահմանափակ գործածութիւն մը եւ գրեթէ ամբողջական հրաժարում մը բրածոյ ջերմուժէն»:

«Վերջին քանի մը տարիներուն այդ ուղղութեամբ



զգոյշ թեքումը անբաւարար կ'երեւի լուծելու համար հարցը, որ թերեւս ամենէն դժուարինն է, որուն դէմ-յանդիման կը գտնուինք» (148-156):

Կ'ապրինք «շփոթի ու դրամատիրութեան տեւականութեան ժամանակաշրջան մը»: «Ձեռնարկութիւններու, ինչպէս նաեւ հանրային սպասարկութիւններու կառավարման մէջ կը շարունակենք կիրարկել նորազատականութենէն ուղղակի ներածուած մեթոտներ՝ արդիւնաւէտութեան, հաշուետուութեան, յաճախորդի հանդէպ մօտեցումի, ղեկավարման թեքնիքներու, օրինակ՝ խնայողական կառավարմամբ կամ "նոր հանրային ղեկավարման" սկզբունքով»:

Բայց նոյն ձեւով կը շարունակուին նաեւ ընկերային մեծ անհաւասարութիւնները, նիւթապաշտութիւնն ու շահու անյագ հետապնդումը:

Յետնորազատականութեան ներկայ դրութիւնը, որ գաղափարաբանական ոչ մէկ հիմք ունի, իրապէս, խոցելի է: Դժուար է անուն մը տալ անոր: «Բայց այս նոր դրամատիրութեան ուժը իր ինքնաբերաբար գործելուն մէջն է, դէմ-յանդիման եւ ընդդէմ բոլորին, ինքզինք պահպանելու կարողութեան մէջն է այս պահուն, հակառակ որ ամեն ինչ կրնայ փուլ գալ: Ահա թէ ի՞նչ է, որ կը վիատեցնէ անոր ընդդիմադիր անձերը» (159-163):

Երբ այնքան յստակ են աշխարհի սպառնացող մեծ վտանգները՝ Մեծ անկումը, կլիմայական ջերմացումը եւ Գովիտ-19-ը, ինչո՞ւ պետութիւնները վճռական քայլեր չեն առներ: Ըստ հեղինակին՝ կան բազում եւ բարդ պատճառներ, բայց երեք գլխաւոր պատճառները կը հանդիսանան «կառավարման հին սովորութիւնները եւ նորազատական մտածողութիւնը, որ կը շարունակէ ազդել մեր հոգեկանին վրայ՝ հակառակ ամենայնի», ծայրայեղ աջի վերելքը, բայց մանաւանդ անշարժականութիւնը անդրազգային մեծ ձեռնարկութիւններու, «որոնք, հասկնալի պատճառներով ամենէն մեծ զոհերը պիտի ըլլան համաշխարհային վերադասաւորման մը եւ որոնք կը յամառին իրենց ունեցած վիթխարի միջոցներով պահպանել իրավիճակն ինչպէս որ է, այսինքն՝ մեծապէս իրենց ի նպաստ»: Անոնց ազդեցութեամբ է, որ կառավարութիւնները կը շարժին, որքան ալ ուզեն երեւիլ յառաջդիմական եւ բարեփոխութիւններու կողմնակից: Լոպիիզմը դարձած է այն կենսական գործիքը, որով այդ ընկերութիւններն իրենց կամքը կը պարտադրեն կառավարութիւններուն: «Լոպիիսթերը կը կազմեն ստուերային բանակ մը, որ յարատեւ, յամառ եւ խիստ համոզկեր պայքար կը մղէ՝ հրապուրելով, սպառնալով ու կաշառելով՝ համաձայն լաւ հաշուած չափաքանակներու, արդիւնաւէտօրէն անցընելու համար օրէնքներ, որոնք նպաստաւոր պիտի ըլլան իրենց յաճախորդներուն ու սահմանափակեն այն փոփոխութիւնները, որոնք կրնան ըլլալ ի վնաս անոնց» (164-167):

Ներկայ կացութիւնը սրբագրելու համար ամենէն իմաստուն կառավարութիւններն անգամ կը խուսափին յախուռն քայլեր առնելէ: Կեդրոն-ձախ կամ կեդրոն-աջ հակող բազմաթիւ երկիրներ փոքր քայլերով կ'ուզեն յառաջանալ՝ առանց վտանգելու դրամատիրութիւնը: Այս՝ մասնաւորաբար բնապահպանման հարցերու առնչութեամբ, նոյնպէս ընկերային անհաւասարութիւններու: «Անոնք ցաւերու ախտանշաններուն կը հարուածեն՝ փոխանակ խնդիրներու արմատներուն երթալու» (189):

Հարցն այն է, որ արմատական լուծումները կը պահանջեն աւելի մեծ փոփոխութիւններ եւ նկատառելի ճիգեր, ինչպէս՝ «դիմագրաւել գերսպառողութիւնը, ուղղակի հակադրուիլ անդրազգային մեծ ընկերութիւններուն, արմատապէս սահմանափակել շահարկումները կամ չարաշահումները, պարտադրել տնտեսութիւն մը, որ հիմնուած է ձեռնարկութիւններու տեսականի այլազանութեան վրայ (ընկերային տնտեսութիւն, համագործակցականներ, հանրային սպասարկութիւններ, փոքր եւ միջին ձեռնարկութիւններ), հաստատել աճող հարկային համակարգ մը՝ առանց խուսափուղիներու ամենէն հարուստներուն համար եւ այլն»: Իսկ այս լուծումները կիրարկելը անյաղթահարելի վախեր կը յառաջացնէ ելեւմտական ընտրանիին մէջ (190):

Պետութիւններու վարանումներուն եւ ձախողութիւններուն դիմաց, ինչպէս դիտել տուած է Նաոմի Քլայն (Naomi Klein), «Միայն ընկերային մեծածաւալ շարժումները պիտի կարենան փրկել մարդկութիւնը» (195):

Ըստ Վայանգուրի՝ բնութեան պահպանութեան հարցն է, որ ի վերջոյ վճռական ազդակը պիտի հանդիսանայ ընկերութեան փոփոխութեան: «Մեր մոլորակին վրայ կեանքի պահպանման համար պայքարը ինքզինք կը պարտադրէ իր անխուսափելի անհրաժեշտութեամբ»: Կլիմայական ջերուցման դէմ արդիւնաւէտ չ'ըլլար պայքարը՝ առանց փոխելու տնտեսութեան տեսակը, որ մերն է եղած տարիներէ ի վեր (196):

Գլխապտոյտ կը պատճառէ յետնորազատական աշխարհը՝ մեզ այնքան մխրճելով անորոշութիւններու մէջ եւ այնքան ձգտելով բեւեռացումներու, որոնք անհամար մտահոգութիւններ կը յառաջացնեն եւ խրամատներ կը ստեղծեն անհատներուն միջեւ: Բան մը չընելու, ինքն իր մէջ քաշուելու կամ համակերպելու փորձութեան ենթարկուիլը կրնայ ունենալ աղէտալի հետեւանքներ: […] բայց վերջապէս ընթացքին մէջն ենք՝ ձերբազատելու վտանգաւոր, ամբարտաւան եւ քանդիչ գաղափարաբանութենէ մը, որ երկար տարիներէ ի վեր գրեթէ ամենուրեք պարտադրած էր ինքզինք: Նոր հեռանկարներ կը բացուին այն պայքարներուն առջեւ, որ պէտք է մղենք: Աւելի լաւ աշխարհ մը կառուցելու յանդուգն գաղափարները ասկէ ետք աւելի դիւրաւ կրնան տարածուիլ. անոնք կենսական են աւելի, քան երբէք: Բայց պէտք է զանոնք պաշտպանենք եռանդով եւ հետեւողականութեամբ» (197):

Ահա այսպէս կ'աւարտէ Գլոտ Վայանգուր իր այս երկը, որ հաւանաբար կրնանք նկատել համապարփակ, բայց զգոյշ ակնարկ մը՝ «զգոյշ շրջադարձի» մը վրայ... ■

Արցախի նյութական կորուստները

Ընդհանուր նյութական կորուստները խիստ նախնական գնահատումներով կազմում են շուրջ 50 միլիարդ ԱՄՆ դոլար:

Որոշ թվային չոր փաստեր:

Մինչև 2020 թվականի 44-օրյա պատերազմը 20 տարի շարունակ Արցախի Հանրապետության տնտեսությունը տարեկան միջինը գրանցել է երկնիշ աճ:

2019 թվականին ՀՆԱ-ն կազմել է շուրջ 343 միլիարդ դրամ, ներկա փոխարժեքով ավելի քան 900 միլիոն ԱՄՆ դոլար, պետական բյուջեն՝ շուրջ 145 միլիարդ դրամ, ներկա փոխարժեքով ավելի քան 380 միլիոն ԱՄՆ դոլար:

Արցախում գործել են շուրջ 300 հանքավայրեր, որոնցից 83-ը մետաղական, 197-ը՝ ոչ մետաղական, 5-ը՝ վառելանյութի: Գործել են 36 հիդրոէլեկտրակայաններ:

Տնտեսվարող սուբյեկտների թիվը կազմել է շուրջ 16 000, որից 11 600-ը՝ անհատ ձեռնարկատերեր:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 149 000 մարդ:

Տնտեսության տարբեր ոլորտներում զբաղված է եղել շուրջ 60 000 մարդ, որից շուրջ 45 000-ը եղել են վարձու աշխատողներ:

Արցախում գործել են 92 հյուրանոցներ: 2019 թվականին Արցախ են այցելել ավելի քան 42 000 միջազգային զբոսաշրջիկներ:

Գյուղատնտեսական նշանակության տարածքները կազմել են 580 000 հեկտար: Մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքը կազմում էր 80 000 հեկտար, որտեղից տարեկան ստացվում էր շուրջ 140 000 տոննա բերք: Արցախը հացահատիկային մշակաբույսերի մասով ինքնաբավ էր, ու բերքի մոտ 25 տոկոսն էլ արտահանվում էր Հայաստան:

Տեխնիկական մշակաբույսերը զբաղեցնում էին 5300 հեկտար, որից ստացվում էր տարեկան շուրջ 8 000 տոննա բերք, պտղատու այգիները՝ 4400 հեկտար, որի տարեկան բերքը՝ 8600 տոննա:

Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում էր շուրջ 50 000 գլուխ:

Առկա էր շուրջ 5300 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ տրակտորները՝ շուրջ 1250, բեռնատարներ՝ շուրջ 1500:

Արցախում գործել են 51 նախադպրոցական հիմնարկներ, որտեղ հաճախել են շուրջ 4 000 երեխաներ, 2606 հանրակրթական դպրոցներ՝ շուրջ 24 000 աշակերտներով, 20 երաժշտական և արվեստի դպրոցներ՝ 7 000 սաներով, 10 գրադարան՝ 400 000 միավոր գրքային ֆոնդով:

Եվ սա ամբողջը չէ:

Թադևոս Ավետիսյան
ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր
ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ

ԴՐՕՇԱԿ

Հայաստան